ԳԻՐՔ LXI



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1910 № 2 ՓԵՏՐՈՒԱՐ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ. ՊՕԼԻՑ 7
1910

Մի օր. վէպ. Արսէն 3
Արի՛, եղբայր, Բանաստ. Ցար. Պեսրոսեան 12
Լեգենդներ քրիստոսի մասին. Սէլմա Լագերլեօֆի. Թարգմ. Արսէն ս. Սիմէօնեանց եւ Ն. Տէր Մանուէլեան 13
Պատմութիւն Սասանեանց և Իրանի նուաճումը արաբացիներից. պրոֆ Ա. Կրիմսկու. Մ. Շովրեան . . . 20
*** Բանաստ. Ցար. Պեսրոսեան 35
Թէոդորոս Բ. Կիլիկեցի. Մաղաքիա աե. Օրմանեան . . 36
Գիտութեան տօնը. (Մոսկուայից) Ա. Վ. 45
Նորագոյն պատմագիտութիւն Կարլ Լամբրեխտի. Pessimist 58

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Կիրակոս Գանձակեցւոյ պատմութիւն Հայոց. Գ. Ենգիբարեան։— Ստացուած գրքեր 74

ԱՄՍՕՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մի խոշոր թիւրիմացութիւն։ Խմբագրութիւն։— Լուրեր։ 77

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1910 թ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԱՒԱՌ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Բաժնեգինն է՝ Ռուսաստանի համար տարեկան 3 ր. կէս տարին 1 ր. 75 կոպ. մի ամիսը 35 կոպ. Արտասահմանի համար տարեկան 5 ր. հասցէն՝ Герюсы, Елис. Губ. Редакція газеты „ГАВАРЪ“

ԳԻՐՔ LXI



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1910 № 2 ՓԵՏՐՈՒԱՐ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵԿՏՐԱՅԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ. ՊՕԼԻՑ 7
1910

ՄԻ ՕՐ [1]

III

Եւ, ինչպէս ասացի, պատրաստուելու համար էի փախել օտարութիւն։ Իմ սեւեռեալ գաղափարն էր՝ պատրաստուել, որքան կարելի է աւելի պիտանի զէնքերով զինուել, անվեհերութիւն և կամքի ոյժ մշակել, հաստատուն ոյժեր հաւաքել ապագայ կռուի մէջ յաղթանակով դուրս գալու համար։

Առհասարակ ամեն մի ուսանող ուսանողական նստարանի վրայ գոնէ մի բանով ոգևորուած է լինում։ Սա արդէն մի տեսակ սովորութիւն է դարձել—անիդէալ ուսանող չկայ։ Ամենքը խօսում-ասում են իդէալների անունից, երդւում են նրանով, ճառում անվերջ ոգևորութեան տենդով համակուած։ Թողնում եմ մի կողմ այն հարցը, թէ քանիսն են այդ բարձրագոչ իդէալներին գոնէ սակաւ ժամանակ հաւատարիմ մնում, քանիսն են իրենց երդումները կեանքի մէջ կատարում, և բոլորովին մոռանում են նրանց, ովքեր կեանքի խլացնող ժխոր ներկայացնող հրապարակում ոսկի հորթին ծախում են և՛ խիղճ, և՛ իդէալ։ Թողնում եմ այդ հանգամանքը, իրողութիւնն այն է, որ չկայ անիդէալ ուսանող։

Ես, հայրական տանից փախած թշուառս, անիդէալ չէի։ Ունէի իմ իդէալը, իմ գուրգուրած, փայփայած նպատակս։ Պատրաստւում էի յանուն այդ իդէալի։ Երդւում էի այդ իդէալով. ես մոլեռանդ հաւատացող էի իդէալիս։ Ի՞նչ էր այդ, այսպէս ասենք՝ անգողտրիկ իդէալը.—կռիւ մեր ընտանիքի, հօրս և մի քանի պայմանների դէմ, որոնցից ինձ ՀԱՍՍուած, սաստիկ տուժած էի համարում։ Ընկերներս ոգևորուած խօսում, ճառում և բարձրագոչ աղաղակում էին ժողովրդի, հասարակութեան, ազգի շահերի, հանրամարդկային գաղափարների, սիրոյ, ազատութեան, ճշմարտութեան, բարու, գեղեցկի մասին։ Ես այդքան խոշոր նպատակներ չէի դրել ինձ համար։ Լաւ գիտակցում էի, որ նմանօրինակ մեծ գործեր կատարելու համար անզոր եմ, անգամ ապիկար։

Ուսանողական խնջոյք է։ Ամենքն էլ տաքացած գլուխներով, փրփրագէզ գինու բաժակների առջև, մաստակի պէս ծամծմում

[1]) Լումայ № 1

են խեղճ ու կրակ իդէալների նախշուն շարանները։ Ես էլ եմ ոգևորուել, խօսում ու ճառում եմ։ Պէտք է խոստովանել, բաւական գեղեցիկ խօսել գիտեմ, ճարտասանելու քիչ թէ շատ ձիրք ունիմ։ Այդ իրիկուն միտքս երկրից երկինք էր թռչում։ Պատկերաւոր դարձուածքներ, հիանալի համեմատութիւններ, բանաստեղծական այլաբանութիւններ։ Ես խօսում եմ հարկաւ ամենքին հետաքրքրող հարցերի մասին, սակայն ինձ ոգևորողը և հոգեզմայլութեան մէջ ձգողը ոչ մի ուրիշ բան չէ, բայց եթէ իմ տարօրինակ նպատակը, որի համար պատրաստում էի ինձ։ Խօսում էի հայրենիքի մասին.— հայրենիք ասելով մեր ընտանիքն էի հասկանում, իմ հայրական տունը։ Խօսում էի ազատութեան, անհատականութեան մասին.— դրանով իմ ստրուկ, հալումաշ եղած մօրս պատկերն ի նկատի ունէի, որին այդ վիճակից ազատելը սրբազան պարտքս էի համարում։ Խօսում էի դարի, ժամանակի թուլութիւնների, բարքերի ապականութեան և անբարոյականութեան մասին.— այստեղ մտքիս առաջն էի բերում իմ անպատուած քոյրերս։ Խօսում էի մեր աշակերտող, դպրոցական սերնդի ափեղցփեղ, անվայելուչ և անբարեկարգ վիճակի մասին.— իմ դիմացս կանգնած էի տեսնում իմ անբարոյական կրտսեր եղբօրս, նրա անամօթ, գարշ ու աղտեղի արկածներն ու արարքները։ Խօսում էի ստրուկ, ճորտ ու չքաւոր մի դասակարգի մասին, որ մաշւում է, փչանում հոգեպէս ու ֆիզիքապէս հարուստների տան ապականուած մթնոլորտում, այդ խօսքերն ասելիս չէի մոռանում իմ հայրական տան սպասաւոր խեղճուկ, դեռահաս, մրայօն աղջկան, որին հայր ու որդի, տմարդի ու անխղճմտանք կերպով, շահագործել էին և շահագործում էին օգտուելով իրանց յարմարաւոր դիրքից։ Խօսում էի մի կարգ մարդկանց մասին, որոնք դիմակ ծածկած մտնում են խաղաղ ընտանիքները, փոթորիկ բարձրացնում, մատաղ սերունդը հոգեպէս ու մտաւորապէս, չ՚թագցնենք՝ և ֆիզիքապէս փչացնելուց, այլանդակելուց յետոյ թողնում ու հեռանում.— ուրիշ բանի մասին չէր խօսքս՝ հայրական օջախում յուզումներ առաջացնող ուսուցչի մասին էի մտածում և խորհում, որը կրտսեր եղբօրս ատրճանակից խուսափելով՝ ապաստան էր գտել անյայտութեան գրկի մէջ իւր յաղթանակի պատմութիւնը բերնէ բերան տարածելու համար։

Եւ այսպէս շատ ու շատ բաների մասին...

IV

Այո, պատրաստում էի։ Թուլութիւններս ամենից լաւ ես էի հասկանում։ Հիանալի կերպով ինքս ինձ բնորոշել գիտէի։ Մի

քանի խօսքերով՝ կարճ ու ճիշտ։ Ներքին, խղճիս դատաստանի առաջ խոստովանում էի, որ կամազուրկ բնաւորութիւն ունիմ, անհետևողական և թոյլ եմ։ Այո, այդ բոլորը շատ լաւ գիտակցում էի։

Կան որոշ դասի, հոգեկան յատուկ խմբութեան պատկանող մարդիկ, որոնք իրանց ներքին աշխարհում ներկայանում են իբրև ազնիւ, վսեմ և ասպետական յատկութիւններ ունեցող անհատներ։ Սակայն միայն ներքին աշխարհում։ Դրանք սեփական պակասութիւնները մերկացնել և մտրակել գիտեն։ Անաղօտ կերպով գիտակցում են իրանց վատ ու աղտոտ արարքների գերագոյն զզուելիութիւնը։ Թքում ու մրոտում են իրանց եսը։ Գարշում են իրանցից։ Կծու, դառն ու ծանր խօսքերով ներկում են իրանց գործերն ու արածները։ Այս բոլորը միայն իրանց մենախօսութիւնների ընթացքում, ներքին աշխարհի մէջ թափանցուած, մրտորումների գրկում, մեն-մենակ, աշխարհի, մարդու աչքից հեռու։

Ես այդպիսիներից մէկն էի։ Մէկը, որ արդար զայրոյթով լցուել գիտէ և շատ բան պարզ ու պայծառ հասկանալ գիտէ։ Գիրազանցօրէն ըմբռնում էի բնաւորութեանս թերի, պակասաւոր, կեղտոտ կողմերը ու աշխատում էի ամեն կերպ աղատել ինձ։ Գիշեր ու ցերեկ հոգ էի տանում։ Հոգսերիս մեծ մասն ուղղուած էր դէպի այդ խնդիրը։ Կամազուրկ եմ,—գիտէի։ Պէտք է փրկուել, աշխատում էի, ամեն միջոց ձեռք էի առնում։ Ուզում էի աղատուել ծայրացեալ ապականութեան ու գարշութեան կենտրոններկայացնող հայրենի ծանրաշունչ մթնոլորտի խեղդուկ հետքերից։ Ջանք էի գործ դնում հոգիս մաքրելու անմաքրութիւններից, և ամեն կերպ ճգնում էի արեանս մէջ մտած հակումներն արմատախիլ անել, սրբուել, նորից մկրտուել։ Այդ բոլոր ժամանակ մխիթարւում էի այն ողորմելի գիտակցութեամբ, որ ինքս անձամբ մեղաւոր չեմ, բոլորովին անպարտ եմ, որովհետև ծնուել եմ դժբախտ և հարկադրուած եմ քարշել այդ հանգամանքի ամբողջ ծանրութիւնն իմ թոյլ և նուաղկոտ ուսերիս վրայ։ Այնուամենայնիւ ուզում էի ուժեղանալ, թուլութիւններիս դէմ մղած մարտից յաղթանակով և պատուով դուրս գալ։

Հեշտ չէր։

Հայրս տուել էր ինձ աղտեղի արամադրութիւններ, անասնական բնազդներ, անհուն կրքոտութիւն և դիւրազգայնութիւն։ Մօրս տուածները նախանձելի բաներ չէին.—թուլութիւն, վախկոտութիւն, կամքից խեղճութիւն։ Այս խառնուրդից գոյացել էր մի էակ, որ այնպիսի ընտանեկան դաստիարակութեան բովարանով էր անցել, որի սոսկ մտաբերութիւնը զարհուրանք է ազդում

վրաս։ Տգէտ, սարսափելի տգէտ ծնողներ։ Աշխարհից, կեանքից ու նրա պահանջներից և ոչ մի տեղեկութիւն չունին։ Մէկն ապրում է իւր պիղծ զգացումների համար, միւսը՝ իւր բախտաղուրկ վիճակը լալու և ողբալու։ Անբովանդակ մի միջավայր, ուր խեղդուել, շնչասպառ լինել կարելի է։ Մանուկ հասակում ծծել էի այդ միջավայրի անմաքուր օդը իմ դեռափթիթ, անկազմակերպ թոքերով և տոգորուել էի պատանեկան հասակին անվայել տպաւորութիւններով։ Ինձ չեն դաստիարակել, այլ խմորել են կրքի և վախի զգացումներով։ Աչքս բացել եմ և տեսել կեղտ ու անբարոյ կեանք և սին վայելքներ։

Դպրոցը, որտեղ մի ամբողջ տասնեակ եմ ծախսել իմ կեանքի տարիների գումարից՝ կանոնաւոր կերպով ընտանեկան անմարդավայել դաստիարակութեանս շարունակողը հանդիսացաւ։ Դպրոց... Մի խումբ մարդիկ, որոնք գրեթէ ոչինչ հոգեկան կապ, առնչութիւն ու յարաբերութիւն չունին նրանց հետ, որոնց դաստիարակելու, կրթելու և մարդ դարձնելու են կոչուած։ Զանգ տուեց—մտնում են։ Զանգը կրկին հնչեց—դուրս են գալիս՝ հրուչակաւոր «այստեղից այնտեղը» մրմնջալով։ Թուեր են դնում։ Լաւ են—«փոխւում ես», անցնում յաջորդ դասարանը, իսկ եթէ վատ՝ —«Մնում ես միևնոյն դասարանում»։ Եւ այսպէս տարիներ շարունակ, միանման, ըստ երևոյթին զուարթ, ուրախ, բայց իրապէս հոգեմաշ սպանող տարիներ...

Անցաւ որոշ ժամանակ և նոր միայն գիտակցեցի, թէ ինչ մեծ կորուստ եմ ունեցել, նոր միայն զգացի, որ հոգեպէս և ֆիզիքապէս սպանուել էի, տանջուել ու մաշուել։ Ուզում էի թօթափել անցեալի ծանր հետքերը, ձգտում էի ապրել մաքուր կեանքով, մտքերս կամենում էի մաքրել անմաքուր կապերից և կաշկանդումներից. իզուր։ Գալիս է մի օր տեսնում եմ ինձ անզօր՝ հղօրեղ թափ ստացած, սովորութիւն դարձած հակումների, կրքերի, կեղտոտ ցանկութիւնների դէմ։ Այլևս հնար չկար ազատուելու, ես գերի էի, ստրուկ։ Չէ՞ որ ծառի արմատի վրայ փորուածքները մեծանում, աճում են ծառի հետ զուգընթաց։

Չէի դաստիարակուել, որովհետև չեմ ունեցել դաստիարակիչներ։ Ես սոսկ կրթուել էի—ունեցել եմ կրթողներ։ Մտքեր, թուեր ու անուններ,—ահա բոլորը, դաստիարակներիս ուշադրութեան առարկան։ Տալ հոգու կրթութիւն, զգացումների վեհութիւն, մարդ լինելու համար պատրաստել,—սրանք ուսուցիչներիս համար տակաւին վերացական հասկացողութիւններ էին, որի իրագործման համար մատ մատի չէին խփում։

Այս բոլորից պարզ է, որ ես մի զոհ եմ եղել, զոհ-ընտանե-

կան և դպրոցական դաստիարակութեան։ Դպրոց և ընտանիք ձեռք ձեռքի տուած աճեցրել, զարգացրել և հիմնաւոր հն դարձրել այն բոլոր սրտմաշուկ յատկութիւնները, որ ստացել էի հօրիցս և մօրիցս իբրև մի աւանդ յաջորդներիս յանձնելու համար։ Եւ կը յանձնեմ։ Դպրոցը խօսք է տալիս, երաշխաւորում է։

՝ Ես շուտ հասկացայ իմ փափուկ դրութիւնը։ Որքան կարող էի աշխատեցի դուրս գալ անել վիճակից։ Պիտի կռուէի արմատացած չարիքների դէմ։ Քսան տարի շարունակ ես փայփայել էի զարհուրելի արատները։ Կռիւ յայտարարեցի։ Կամ պէտք է յաղթէի, ոչնչացնէի կաշկանդող, մինչև հոգուս խորքը ապականող գարշութիւնները, կամ պէտք է ընկնէի յաղթուած՝ վերստին գերի ախտերին։

V

Կամազուրկ էի։

Առաջին և ամենագլխաւոր հարուածը պէտք է հասցնէի հոգուս այդ պակասաւոր, թերի կողմին։ Եւ ուղղեցի նրա դէմ ինչ որ կարող էի և ինչ զէնք, որ ձեռս ընկաւ։ Ես շատ լաւ գիտէի, որ կռուում եմ մօրս դէմ, գիտէի, որ մօրս ախտն էր բուն դրել իմ մէջ և այդպէս տանջում էր, անխնայ կսկծեցնում ինձ. երբեմնապէս սրտիցս անէծքի և բասրանքի խօսքեր խլում, երբեմնապէս էլ ցաւակցութեան և ափսոսանքի։ Դէս ընկայ, դէն ընկայ և վերջապէս նպատակ դրեցի նախապէս կամքի ոյժի տեսութիւնը քննել, ուսումնասիրել և ապա գործնականին անցնել։

Այդպէս էլ արի։ Եռանդով լսում էի հոգեբանութեան դասախօսութիւններ և ոչ պակաս եռանդով սկսեցի Նիչշէ ուսումնասիրել, կարծում էի, թէ մեծ փիլիսոփան ինձ կ'փրկէ կամքի թուլութիւնից։ Յետոյ ձեռք զարկի մի շարք գրքերի ընթերցման։ Կամքի, կամեցողութեան վերաբերեալ գրքեր էին։ Մէկմէկու վրայ շարուած էին գրասեղանիս վրայ մօտաւորապէս մէկ ու կէս տասնեակ գրքեր նման բովանդակութեամբ. «կամք», «կամքի ոյժ» «կամքի ոյժի գաղտնիքը», «կամքի կրթութիւնը», «չար կամքը» «մեր կամքը և յոյզերը»...

Ի՞նչպիսի վառ զգացմունքով էի պարապում. գիշերը ցերեկ էի դարձնում, յոգնութեան և քաղցի չէի նայում։ Պարապմունքներիս մէջ խորասուզուած՝ ես համոզուած էի, որ դուրս կգամ տեսական վարժողութիւնից վերամկրտուած, նոր ոգի և ընթացք ստացած և որ գլխաւորն է կամքի ոյժ ձեռք բերած։ Այդ ժամանակ ես համոզուած էի կեանքի մի պահանջի ճշմարտութեան մէջ. այդ այն է, որ

ընկածը պէտք է աշխատէ բարձրանալ, ոյժերը հաւաքել և ճանրան շարունակել, եթէ ուզում է փրկուել, ապրել և յարատևել։ Բայց դրա համար, համոզուած էի, նոյնքան ոյժ և դիմացկունութիւն է պահանջւում, որքան և անկման վտանգից խուսափելու աշխատանքը։ Ես, պարզ է, ընկած էի բարոյապէս, ինձանից պահանջւում էր մաքրութիւն, իսկ այդ բոլորի համար ամենագլխաւոր պահանջը զօրեղ կամքի հարցն էր, որի բացակայութիւնը իմ մէջ սրտի կսկիծով գիտակցում էի։

Թէև ընկերական շրջաններում արտաքուստ ամենաթունդ անաստուածեաններից հետևող էի ցոյց տալիս ինձ, բայց ներքուստ հաւատացող էի և միշտ նեղ տեղ ընկած ժամանակը բընազդաբար աղօթք էի մրմնջում։ Մօրս ազդեցութիւնը ապարդիւն չէր կորել։ Առանց այդպիսի ազդեցութեան էլ՝ ես ժառանգել էի մօրից քաղցրաշաղ, հաւատացող հոգի։ Մի բացատրութիւն միայն կարողանում էի տալ. վախկոտ մարդիկ երկիւղած են լինում։

Այս շրջանում իմ անձի մի այլ նշանակելի յատկութիւնն էլ այն էր, որ ես շատ էի սիրում երազել։ Ամբողջ ժամերով կընստէի և կերազէի։ Այդպիսի երազային վիճակի մէջ ընկնելով գրեթէ չէի նկատում։ Թէ ինչ է կատարւում շուրջս։ Կատարեալ խանդավառութեան մէջ ընկած դերվիշի էի նմանում։ Մտքով վերանում էի մի այլ աշխարհ, մի վայր, ուր ինձ երևակայում էի իբրև մի ամենակարող էակ, օժտուած ամենատեսակ վեհ, վսեմ ու սքանչելի յատկութիւններով։ Սիրում էի ցնորելը, երազելը, ինչպէս իսկական արբեցողը՝ խմիչքները։ Ես համարում էի երազելու ընդունակութիւնս իմ միակ հարստութիւնս։ Եթէ խլէին, կորզէին ինձանից ցնորելու սովորութիւնը, կզրկուէի իմ ամենագրաւիչ յատկութիւնների, հոգուս հակումների ամենագլխաւորից։ Աղքատից խլել քսակը, սարսափելի քաղցածից՝ հացի պատառիկը, իսկ ինձանից՝ երազելու հակումս,—նոյն բաներն են։ Այդ գողտրիկ երազների ժամանակ յայտնագործեցի հրաշքի գաղափարը, որ պիտի պսակէր իմ բոլոր յոյսերս։ Հրաշքը ամեն ինչ էր ինձ համար։ Նա ամեն բան կարող էր անել։ Նա մի աստուածային ոյժ էր։

Այո, ես հաւատում էի, որ հրաշքը պիտի ինձ կամքի ոյժ տայ։ Հաւատում էի, որ յանկարծապէս կարող է հրաշքը տեղի ունենալ։ Ի՞նչ պիտի բերէր մի այդպիսի հրաշք։ Ամենից առաջ ես ընախօսապէս կ'փոխուէի։ Յետոյ։—Յետոյ կամքի ոյժ կ'ստանայի, որով կ'սանձուէր իմ պախարակելի վախկոտութիւնը, ախտաւոր հակումները։ Եւ կ'լինէի վերածնուած մարդ։ Մարդ՝ բառի իսկական

մտքով, մաքուր զգացումներով, աղնիւ կրքերով և վսեմ ցանկութիւններով տոգորուած։

Մի՞թէ ես չունէի ցանկութիւններ։ Ունէի։ Կամազուրկ մարդու ցանկութիւններ։ Վսեմ ցանկութիւններ ասելով, ես բոլորովին ուրիշ բան էի հասկանում։ Ասում էի, վսեմ ցանկութիւնները կամքի ոյժ ունեցող մարդիկ կարող են ունենալ։ Կամազուրկ մարդու ցանկութիւնները՝ ինչպէս կուզես անուանիր, սակայն «վսեմ» ժակդիրով չ'պակես այն։ Ես պարզօրէն գիտէի, որ վսեմ ցանկութիւններ չունիմ, գիտէի, որ այդպիսի ցանկութիւններ միայն այն ժամանակ կարող եմ ունենալ, երբ հրաշքը, երջանիկ պատահականութիւնը տեղի կունենայ։

Հրաշքի էի սպասում և մի այլ կերպ։ «Մի զօրեղ հիւանդութիւն փրկարար է». այս խօսքերն ասող հանճարը ներշնչել էր ինձ։ Կարծում էի, որ ինքս էլ նրա պէս կ'վերածնուեմ նոր ոգով, նոր կեանքով։ Մի այդպիսի «հիւանդութեան» էի սպասում, որ պիտի բերէր ինձ համար հրաշալի առողջութիւն—կամքի ոյժ։ Եւ օր, և՛ գիշեր սպասում էի, ակնկալում էի, թէ ահա կ'դայ փրկութիւնը, ցանկալի, առողջացնող հիւանդութիւնը։

Սպասում էի և պարապում։ Դա ծրագրիս տեսական մասն էր։ Ես կատարում էի այն, ամենայն բարեխղճութեամբ, առանց մի նշանախեց անգամ անտեսելու։ Անցաւ բաւական ժամանակ։ Վարժութիւնս վերջացաւ։ Այժմ պէտք է սկսէի գործնականը։ Ուրիշ խօսքով ասեմ՝ տեսականապէս սովորածս, ստացածս և իւրացրածս պիտի աշխատէի իրականութեան մէջ, վերացական աշխարհից հեռու իրագործել։

Ափսոս։ Բոլոր ջանքերս զուր էին անցել։ Թափած արիւնքրտինքս, գիշերային աշխատանքներս գրեթէ ոչ մի արդիւնք ցոյց չ'տուին։ Տարաբախտաբար ինձ համար տակաւին կեանք ասուած բանը մութ էր մնացել։ Ես չէի կարողանում լիովին ըմբռնել նրան, ինչպէս այն մարդը, որ քանքարաշատ նկարչի հրաշագեղ նկարի մէջ միայն տեսնում է գոյների պէսպէս շերտեր, քաթան, ձև, նիւթ. իսկ ոգին, իմաստը, գեղեցկութիւնը և բովանդակութիւնը չի կարողանում ըմռնել։ Այն ինչ մի ուրիշը գծերի, գոյների և որոշ զարդարուն շերտերի մէջ մի ներքին ներդաշնակութիւն է տեսնում և աշխատում է պարզել այն յարաբերութիւնը, որ արտայայտել է նկարիչը գծերի և գոյների խաղերով։ Կեանքը չ'հասկանալով հանդերձ՝ ես չէի կարողացել իմ ներքին աշխարհն ևս պատրաստել այդ անհասկանալի կեանքի մէջ մաքառելու համար, և նոյն կամքի տէրն էի մնացել, ինչպիսի կամք որ ունէի իմ պարապմունքներից, տեսական վարժութիւնից առաջ։ Եւ ոչ

մի քայլ առաջ։ Հրաշքը տեղի չէր ունեցել։ Բուժիչ «հիւանդութիւնը» վրայ չէր հասել։ Ո՛չ մեծն Նիչշէն և ոչ էլ կամքի թէորիան ինձ չ՚փրկեցին։

Հայրենիքից դուրս, ընտանեկան յարկից հեռու մի շրջանի մէջ էի ապրում, որ ունէր իւր չարն ու բարին, օրուայ կրքեր ու շահեր, յուզումներ ու բռնկումներ, լաց ու ծիծաղ։ Ես շատ բան էի տեսնում այդտեղ, և արդարութիւն, և՛ անարդարութիւն։ Քաջալերելու և մտրակելու կողմեր, գուրգուրելի և պախարակելի բազմաթիւ գործեր։ Ե՛ս, ապագայ ընտանեկան գործիչս, ինչպէս կոչում էի ինձ՝ իմ մենախօսութիւնների մէջ, պէտք է այդտեղ ցոյց տայի իմ ինչ լինելս։

Եւ ցոյց էի տալիս։

Քիչ թէ շատ հասկացող, մարդ ճանաչելու հոտառութիւն ունեցող մէկը կամ հետս մի քանի խօսք փոխանակելիս, կամ դէպի ուրիշները ցոյց տուած իմ վերաբերմունքը դիտելիս իսկոյն կը-հասկանար, թէ ինչ բան էի ես, ապագայ գործիչս։—Այնտեղ, երբ հարկաւոր էր զայրանալ, գրգռուել, արդար զայրոյթով և ազնիւ կրքերով վառուել՝ գերազանցօրէն լռում էի, ներքուստ տապակւում, բայց ոչ մի ծպտուն չէի հանում, և եթէ այդպիսի կամ դրա նման մի բան էլ բերանից դուրս էր թռչում, դա այնքան խղճալի, կանացիական և ողորմելի էր լինում, որ աւելի ծիծաղ էր շարժում, քան ազդեցութիւն թողնում։ Ինչո՞ւ այդպէս։—Որովհետև առաջս կանգնած էի տեսնում մէկը, որից ես ակնածում էի, որ հասարակների թուին չէր պատկանում, այլ հրամայող էր և ազդեցիկ։ Իսկ այնտեղ, ուր հարկաւոր էր ցոյց տալ հոգու վեհութիւն, գութ և բարեսրտութիւն, ես անտեղի կերպով զայրանում էի, կիրքս և անազնիւ բարկութիւնս հզօրապէս արտաւիժում, ոտնակոխ անելով վայելչութեան և փափկանկատութեան սահմանները։ Ինչո՞ւ։—Ասել չի ուզիլ, որովհետև առաջս ցցուած էր մի խեղճ ու կրակ հասարակ մարդ, որի հետ կարելի է վարուել, ինչպէս քմահաճոյքը և փաշայական քմապաշտութիւնն է թելադրում։ Այդպիսի դէպքերում, ի հարկէ, ես ունէի կամքի ոյժ, որ անհետ չքանում էր միայն հզօրների առաջ։ Ամենից շատ կատաղում էի այնպատճառով, որ փոքրիկ հզօրներին արհամարհելու ընդունակութիւնից զուրկ եմ։ Վերջ ի վերջոյ համոզուեցի, որ արհամարհելու համար էլ հոգեկան ոյժ պէտք է ունենալ։ Քանի՞ քանի՞ անգամ փորձել եմ ինձ համար ատելի մարդկանց արհամարհել կամ առհասարակ խիստ սառն, սեփական գերագոյն արժանապատուութեամբ վերաբերուել, ընաւ և երբէք չի յաջողուել։

Այդ բոլորի դեղ ու դարմանը՝ կամքի ոյժը՝ չ՚ստացայ-

Վերստին դիմեցի ամենազօր հրաշքին. այս անգամ ուզում էի միւս պակասաւոր կողմերից ազատ մնալ։ Յոյս ունէի, որ հրաշքն ինձ այս անգամ օգնութեան կ'հասնի և ինձ կ'փրկէ շուտափոյթ։ Յիշեալ հրաշքի ոյժի օգնութեան էի դիմում, ի միջի այլոց, նաև այն դէպքերում, երբ իմ մէջ փառասիրական ժտորումներ էին ծնւում։ Բաւական մեծ զօրութիւն էր դարձել ինձ համար փառքի տենչը, որ սրտիս մէջ վառւում և փայլփլում էր, սակայն իսկոյն և եթ հանդչում, երբ թոյլ կամքիս յարուցած խոչնդոտների էի հանդիպում, ուստի և ես ողորմելի և յուսահատ վիճակի մէջ էի ընկնում։ Այո, թոյլ ու անկարող կամքիս պատճառով՝ ես շատ զըրկանքներ էին կրում։

ԱՐՍԷՆ

(Կը շարունակուի)

ԱՐԻ՛, ԵՂԲԱ՛ՅՐ·

Արի՛, եղբա՛յր, ելնենք հսկայ սարն ի վեր,
Ազատ շնչէ սիրտս խոցուած եւ աւեր...
Բանն է այստեղ, կալանաւոր՝ իմ հոգին,
Տանջւում եմ ես մի վառ սիրով կաթոգին։
Ա՜խ, ես կուզեմ թռչել հասնել այն կատար,
Ամպերի մէջ բազմել ժայռին հողմահար,
Ոտքերիս տակ կայծակ, որոտ ու հեղեղ,
Ողջ բնութիւն՝ պայքար մտած, խելայեղ...
Սիրտս այնտեղ ընկեր դարձած փոթորկին
Կըսլանայ հեռո՞ւ, հեռու մոլեգին,
Կըխուզարկէ ձոր ու հովիտ ծաղկազարդ,
Երգ կը կանչէ ազատ, անվախ ու հպարտ...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԼԵԳԵՆԴՆԵՐ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՍԻՆ

Տիկին Ս. Լագերլէօֆի ներկայ աշխատութիւնը, որի հայերէն թարգմանութիւնը մենք առաջարկում ենք հայ ընթերցող հասարակութեանը, արժանացել է թէ իւր հայրենիքում և թէ Ռուսաստանում այնպիսի մի ընդունելութեան, որպիսին շատ քիչ աշխատութիւնների է բաժին ընկնում։ Ռուսական լաւագոյն թերթերից մէկը՝ „Русскія Вѣдомости“ համարում է սոյն աշխատութիւնը կին հեղինակի գլուխ-գործոցը։

Թարգմանիչներ.

Ա.

ՍՈՒՐԲ ԳԻՇԵՐԸ

Հինգ տարեկան էի, որ մի ծանր դժբախտութիւն կըրեցի և թերևս այդ ամենամեծ վիշտն էր երբ և է իմ զգացածներից։ Մեռել էր տատս։ Մինչև այդ օրը նա իւր ժամանակն անց էր կացնում իւր սենեակում, որտեղ նըստում էր անկիւնի դիւանի վրայ և մեզ համար հեքիաթներ պատմում։

Շատ բան չեմ յիշում ես տատիս մասին։ Յիշում եմ, որ նա ունէր գեղեցիկ և ձիւնի նման ճերմակ մազեր, որ ման էր գալիս խիստ կռացած և միշտ գուլպա էր գործում։

Ապա, յիշում եմ նոյնպէս, որ նա մի որևէ հեքիաթ պատմելիս, երբեմն ձեռքը դնում էր գլխիս և ասում.

—Եւ այդ բոլորը ճշմարտութիւն է, որ պատմում եմ ձեզ, այնպիսի ճշմարտութիւն, ինչպէս որ, այ, մենք տեսնում ենք իրար։

Յիշում եմ նաև, որ նա հիանալի երգեր գիտէր, սակայն յաճախ չէր երգում։ Այդ երգերից մէկը վերաբերում

էր մի ինչ որ ասպետի և մի յաւէրժահարսի և նրա բոլոր տները վերջանում էին այսպէս։

«Իսկ ծովի վրայ, ծովի վրայ փչում էր ցուրտքամին»։

Յիշում եմ այլ ևս մի աղօթք և սաղմոս, որ նա սովորցրել էր ինձ։

Նրա պատմած բոլոր հեքիաթներից միայն աղօտ ու թոյլ յիշողութիւններ են մնացել իմ մէջ և միայն մէկը դրանցից ես յիշում եմ այնչափ պարզ, որ կարող եմ պատմել։ Դա մի փոքրիկ պատմութիւն է Քրիստոսի ծննդեան մասին։

Ահա այն բոլորը, ինչ որ ես յիշում եմ տատիս մասին, եթէ չը հաշուենք նրա մահուան պատճառած կսկիծը։ Այս մէկը ես ամենից լաւ եմ յիշում։

Կարծես հէնց երեկ էր, այնպէս լաւ յիշում եմ ես այն առաւօտը, երբ սենեակի անկիւնում դրուած դիւանը յանկարծ դատարկ տեսայ և ես չէի կարողանում երևակայել, թէ ինչպէս պիտի անցնի այդ օրը։ Ես շատ պարզ յիշում եմ այդ և երբէք չեմ մոռանայ։

Միտս է, թէ ինչպէս մեզ տարան տատիս մօտը վերջին հրաժեշտը տալու և համբուրելու նրա ձեռքը, թէ ինչպէս մենք վախենում էինք ննջեցեալին համբուրել և թէ ինչպէս, չը գիտեմ ով. նկատեց որ մենք պարտաւոր ենք վերջին անգամ շնորհակալութիւն յայտնել նրան այն բոլոր բաւականութիւնների և ուրախ ժամերի համար, որ պատճառել է մեզ։

Յիշում եմ, թէ ինչպէս մեր բոլոր հեքիաթներն ու երգերը տատիս հետ միասին դրին սև ու երկայն դագաղի մէջ ու տարան... տարան յաւիտեան։ Ինձ թուաց, որ այն բոպէին մեր կեանքից մի բան պակսեց։ Կարծես թէ յաւիտեանս կողպեցին այն հրաշալի ու կախարդական աշխարհի դուռը, որտեղ առաջ մենք ազատ ման էինք գալիս։

Մենք, երեխայքս, հետզհետէ սովորեցինք զբաղուել զանազան խաղերով ու խաղալիքներով և ապրել այնպէս, որպէս ուրիշ երեխայք են ապրում։ Եւ այդ ժամանակ

կողմնակի դիտողը կարող էր կարծել, որ մենք դադարել ենք տատիս մասին մտածելուց, չենք զգում նրա բացակայությունը։

Սակայն այժմ իսկ, թէև անցել է քառասուն տարի, ես պարզ կերպով յիշում եմ փոքրիկ պատմութիւն Քրիստոսի ծննդեան մասին, որ մի քանի անգամ պատմել է ինձ տատս։ Եւ ես ինքս էլ ցանկանում եմ կրկնել այդ պատմութիւնը և մտցնել այն գրքոյկիս «առասպելների» շարքը։

* * *

Քրիստոսի ծննդեան օրն էր։ Բոլորը, բացի տատիցս և ինձանից, գնացել էին եկեղեցի։ Կարծեմ միայն մենք երկուսս էինք, որ մնացել էինք ամբողջ տանը։ Մեզանից մէկը խիստ ծեր էր, իսկ միւսը խիստ փոքր, այնպէս որ մենք չէինք կարող գնալ։ Եւ ահա, մեր երկուսիս համար էլ չափազանց ծանր էր, որ չէինք լսելու ծննդեան հոգեզմայլ տաղերն ու չէինք հրճուելու եկեղեցում վառուող ծննդեան մոմերի փայլով։ Ուստի տատս վճռեց վանել մեր թախիծը մի որևէ պատմութեամբ։

«Մի անգամ, մի մութ գիշերով,— սկսեց նա,— մի մարդ ճանապարհ ընկաւ կրակ ճարելու։ Նա գնում էր մի տնից դէպի միւսը, ծեծում էր դուռը և ասում. «օգնեցէք ինձ, բարի մարդիկ, կինս երեխայ է ծնել... Պէտք է կրակ վառեմ, որ տաքացնեմ մօրն էլ, մանուկին էլ...»

Բայց որովհետև գիշեր էր, բոլորն արդէն քնած էին, ուստի ոչ ոք չը կատարեց նրա խնդիրը։

Մարդը շարունակեց իւր ճանապարհը աւելի հեռուն։ Վերջապէս նա նկատեց կրակ։ Նա դիմեց այն կողմը և տեսաւ, որ դա վառուող խարոյկ էր, որի շուրջը քուն էր մտած սպիտակ ոչխարների հօտը։ Պահպանում էր հօտը մի ծերունի հովիւ։

Եւ ահա այն մարդը, որին կրակ էր հարկաւոր, մօտեցաւ ոչխարներին և տեսաւ, որ հովուի ոտների մօտ երեք մեծ շներ են պառկած։ Երբ նա մօտեցաւ, երեք

շներն էլ զարթնեցին, բացեցին իրենց ահագին բերանները, թուի թէ, հաչելու համար, բայց ամենափոքրիկ ձայնով իսկ չը խանգարեցին գիշերուայ խաղաղութիւնը։ Մարդը տեսնում էր, թէ ինչպէս շների մազերը ցից կանգնեցան, փայլեցին նրանց սպիտակ ատամները և ինչպէս նրանք յարձակուեցան իւր վրայ։ Նա զգաց, թէ ինչպէս շներից մէկն արդէն բռնել էր իւր ծնկնից, միւսը ձեռքից և երրորդը կախ էր ընկել վզից։ Բայց ատամներն ու ծընօտները չէին հպատակուում շներին և նրանք, առանց ամենափոքրիկ անգամ ձնաս տալու նրան, քաշուեցան մի կողմ։

Այն ժամանակ մարդը մօտեցաւ խարոյկին, բայց ոչխարներն այնպէս պինդ կպած էին իրար, որ անկարելի էր անցնել նրանց միջով։ Նա սկսեց մօտենալ կրակին նրանց մէջքերի վրայից անցնելով և ոչ մի ոչխար չը զարթնեց, նոյն իսկ չը շարժուեց»։

Մինչև այդտեղ տատս պատմում էր անընդհատ և ես չէի կտրում նրա խօսքը, բայց այստեղ ես ակամայ հարց տուի։

—Բայց ինչու, տատիկ, ոչխարները հանգիստ պառկած մնացին, չէ՞ որ նրանք խիստ վախկոտ կենդանիներ են։

—Սպասիր մի րոպէ և կիմանաս,—ասում է տատս և շարունակում է իւր պատմութիւնը.

«Երբ մարդը քիչ էր մնացել հասնէր խարոյկին, հովիւը բարձրացրեց իւր գլուխը։ Դա մի մռայլ ծերունի էր, որ բոլոր մարդկանց վերաբերում էր կասկածանքով ու դժկամակութեամբ։ Երբ նա տեսաւ իրեն մօտեցող անծանօթ մարդուն, վերցրեց իւր երկայն ու սրածայր գաւազանը, որ իւր անբաժան ընկերն էր և նետեց նրա վրայ։ Գաւազանն ադմուկով թռաւ դէպի անծանօթը, բայց մինչև նրան հասնելը, թեքուեց մի կողմ և առանց նրան դիպչելու, շառաչմամբ ընկաւ գետնի վրայ։

Տատս ցանկանում էր շարունակել, բայց ես նորից ընդհատեցի նրան.

—Ինչո՞ւ գաւազանը չը դիպաւ այն մարդուն։

Բայց տատս, առանց ուշադրութիւն դարձնելու իմ տուած հարցին, շարունակում է իւր պատմութիւնը։

«Այն ժամանակ անծանօթը մօտեցաւ հովուին և ասաց». օգնիր ինձ, բարեկամ, կրակ տուր ինձ։ Կինս երեխայ է ծնել... Պէտք է կրակ վառեմ և տաքացնեմ մօրն էլ, երեխային էլ»։

Հովիւը ցանկանում էր մերժել, բայց երբ յիշեց, որ շները չը կարողացան խածնել այդ մարդուն, ոչխարները չը վախեցան նրանից և չը փախան, իսկ գաւազանն էլ չը դիպաւ նրան, նա վախեցաւ և քաջութիւն չունեցաւ մերժելու նրան։

«Վերցրու, ինչքան ցանկանում ես, ասաց հովիւը։ Բայց խարոյկի կրակն սպառուել էր և ոչ մի կտոր փայտ չէր մնացել այնտեղ, միայն մի քանի կտոր այրուած ածուխներ էին մնացել, իսկ անծանօթը ոչ թի ունէր իւր հետ և ոչ էլ դոյլ, որոնց մէջ կարողանար տանել կրակը։

Տեսնելով այդ, հովիւը կրկնեց. «վերցրու, ինչքան ցանկանում ես» և ուրախանում էր, որ նա անկարող է օգտուել կրակից։ Բայց անծանօթը կռացաւ, ձեռներով փորփրեց մոխրի միջից մի քանի ածուխներ և ածեց իւր փեշի մէջ։ Եւ ածուխները չէին այրում ոչ նրա ձեռները և ոչ էլ հագուստի փեշերը։ Նա տանում էր կրակն այնպէս, որ ասես, դա կրակ չէր, այլ ընկոյզ, կամ խնձոր»։

Այստեղ ես երրորդ անգամ ընդհատեցի տատիս.

—Ինչո՞ւ, տատիկ, կրակը չէր այրում նրան։

—Կիմանաս, կիմանաս, սպասիր,—ասում է տատս և շարունակում.

«Երբ չար ու մռայլ հովիւը տեսաւ այդ բոլորը, շատ զարմացաւ։

Այս ի՞նչ նշանաւոր գիշեր է, որ չար շները չեն խածնում, ոչխարները չեն վախենում, գաւազանը չի սպանում և կրակը չի այրում։

Նա կանգնեցրեց անծանօթ մարդուն և հարցրեց։

—Ի՞նչ է պատահել այս գիշեր։ Եւ ինչու՞ ամենքն էլ այդպիսի ողորմածութեամբ են վերաբերում քեզ։

—Եթէ դու չես տեսնում, ապա ես չեմ կարող բացատրել քեզ այդ,—պատասխանեց մարդը և շարունակեց իւր ճանապարհը, որպէսզի կրակ վառի շուտով և տաքացնի իւր կնոջն ու երեխային։

Հովիւը վճռեց աչքից չը թողնել նրան և գիտենալ, թէ այդ բոլորն ինչ է նշանակում և գնաց նրա յետևից այնքան, մինչև որ նա հասաւ իւր իջևանը։ Եւ տեսաւ հովիւը, որ այդ մարդը խրճիթ անգամ չունէր, իսկ նրա կինը և երեխան պառկած էին դատարկ այրի մէջ, որտեղ ոչինչ չը կար, բացի քարէ մերկ պատերից։

Եւ մտածեց այդ բոպէին հովիւը, որ խեղճ անմեղ երեխան, շատ կարելի է, սառել է և թէև շատ էլ գթասիրտ մարդ չէր, այսուամենայնիւ նա խղճաց երեխային։ Նա վճռեց օգնել նրանց և, հանելով իւր ուսին գցած պայուսակից փափուկ ու սպիտակ մորթին, տուաւ անծանօթին, որպէսզի նա մանկանը դնի այդ մորթու վրայ։

Եւ հէնց այդ բոպէին, երբ յայտնի դարձաւ, որ նա, այդ քարասիրտ և կոպիտ մարդն էլ կարող է կարեկցութիւն ունենալ դէպի իւր նմանները,—նրա աչքերը բացուեցան և նա տեսաւ այն, ինչ որ չէր կարողանում տեսնել և լսեց այն, ինչ որ չէր կարողանում լսել առաջ։

Նա տեսաւ, որ իւր մօտ, օդակաձև խիտ առ խիտ կանգնած էին արծաթաթև փոքրիկ հրեշտակներ և նրանցից իւրաքանչիւրի ձեռքին կար մի մի տաւիղ և լսում էր, թէ ինչպէս նրանք բարձրաձայն երգում էին այն մասին, որ այդ գիշեր ծնուել է աշխարհի փրկիչը, որ պիտի սրբէ ու քաւէ մարդկանց մեղքերը։

Եւ այն ժամանակ հասկացաւ հովիւը, թէ ինչու ոչ ոք չը կարողացաւ վնասել այդ գիշեր անծանօթ մարդուն։

Նայելով չորս կողմը, հովիւը տեսաւ, որ հրեշտակները ամեն տեղն էլ լիքն էին. նրանք նստած էին այրի մէջ, իջնում էին լեռներից, թռչում էին երկնքում, հա-

գին խմբերով անցնում էին նրանք ճանապարհով, կանգ էին առնում այրի մուտքի առաջ և նայում էին նորածնին։

Եւ ամեն տեղ զգացւում էր ուրախութիւն, լսւում էր փառաբանութիւն, երգ և մեղմիկ երաժշտութիւն... Եւ այդ բոլորը տեսնում և լսում էր հովիւը մութ գիշերին, որտեղ առաջ ոչինչ չէր նկատում։ Եւ նա անհուն ուրախութիւն զգաց, որ բացուեցան նրա աչքերը և նա ծունկ իջաւ և փառք տուեց տիրոջը»։

Այդ խօսքերի վրայ տատս հառաչեց ու ասաց.

—Եթէ կարողանայինք, մենք էլ կը տեսնէինք այն բոլորը, ինչ որ տեսել է հովիւը, որովհետև ծննդեան գիշերը հրեշտակները միշտ թռչում են երկնքում։

Եւ տատս, դնելով ձեռքը գլխիս, ասաց.

—Զը մոռանաս այդ... Դա նոյնպէս ճիշտ է, որպէս և այն, որ մենք տեսնում ենք իրար։ Բանը մոմերի ու կանթեղների մէջը չէ և ոչ էլ արևի կամ լուսնի, այլ նրանումն է, որ ունենանք աչքեր, որոնք կարողանան տեսնել Տիրոջ մեծութիւնը։

Թարգմ. ԱՐՍԷՆ ՍԱՐԿ. ԵՒ Ն. ՏԷՐ-ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

(միւս անգամ)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԱՍԱՆԵԱՆՑ [1]

ԵՒ

ԻՐԱՆԻ ՆՈՒԱՃՈՒՄԸ ԱՐԱԲԱՑԻՆԵՐԻՑ

(Ա. Կրիմսկու)

Ներսեհի պատերազմները Հռովմայեցւոց հետ Գարագաշեանը մանրամասնօրէն է լուսաբանում ասելով՝ Ներսեհի առաջին գործն եղաւ յարձակել ի Հայս, ուր կրթագաւորէր Թերևս տակաւին Արտաւազդ, յիշեալն 'ի Տրեբեղղիոսէ Պողինէ, և Կարոսի արշաւանէն հետէ հաւանականապէս կը գտնուէր 'ի բարեկամութեան Հռովմայեցւոց։ Ներսեհ մօտ էր սկսելու թշնամութիւնն ուղղակի ընդ Հռոմայեցւոց՝ մինչ Դիոկղետիանոս, որ կը դիտէր զընթացս արևելից իբր տասը տարիէ հետէ (284—294), տեսնելով Ներսեհի յանդուգն խորհուրդը՝ որոշեց ընդդիմանալ նմա պատերազմաւ։ Ինքն գալով նստաւ յԱնտիոք, դիտել 'ի մօտոյ հռոմէական բանակին գործերն։ Զօրավար կարգեցաւ Գաղերիոս (յետոյ կայսր), որ արդէն նշանաւոր եղած էր յափունս Եփրատայ։ Պատերազմն 'ի սկզբան չեղաւ յաջող (296)։ Երիցս յետս մղեցան Հռոմայեցիք... Գաղերիոս Մաքսիմիանոս յառաջնում ճակատուն ընդ Ներսեհի, ընդ մէջ Կաղինեկեայ և Խառանու՝ չեղև յաջող առ 'ի չգոյէ իմաստութեան մանաւանդ քան քաջութեան, զի սակաւածեռն գնդաւ ել ընդդէմ մեծի բազմութեան։ 'Ի բաց վանեալ 'ի թշնամւոյն՝ չոքաւ առ Դիոկղետիանոս, որոյ հանդիպեալ նմա 'ի ճանապարհին՝ ընկալաւ, ասեն, անարդանօք, մինչև տալ նմա ընթանալ զբազում հրասախս զկնի իւրոց կառաց։ Կայսեր խիստ յանդիմանութիւններից զգաստացած՝ Գաղերիոսը նոր զօրքերով արշաւում է Ներսեհի դէմ Հայաստանի վրայից և փառաւոր յաղ-

[1] Լուսմայ № 1.

թանակ է տանում Թշնամու վրայ հեռաւեալ կերպով. «Բայց Գաղերիոս անցնելով զԵփրատ 25 հազար զօրօք, փոխանակ դնելու իւր լեգէոններն 'ի վտանգի Միջագետաց բաց դաշտերուն մէջ՝ հորդեց իւր ճանապարհ ընդ մէջ լերանց Հայաստանի, որոյ բնակիչք իսկ և իսկ փութացին 'ի նպաստ նորա: Պարսիկք խորտակեցան չարաչար, և Ներսեհ վիրաւորեալ ստիպուեցաւ 'ի փախուստ և առնապարեց խօսել 'ի հաշտութիւն: Դիոկղետիանոս զրաւ զԲովբար (Բափուր) զետ սահման 'ի մէջ երկուց տէրութեանց: Միջագետք որ վաղուց էին ընդ վիճիւ՝ Թողն Հռոմայեցւոց այլ և հինգ գաւառաք անդր քան զՏիգրիս: Այս դաշնադրութեան մէջ էր նաև Հայաստան, յոր յաւելաւ Ատրպատական կամ հիւսիսային արևմտեան մասն նորա: Թագաւորն Պարսից հրաժարեցաւ վերին իշխանութենէ Հայաստանի վրայ, Գաղերիոս առաւ տիտղոս «Հայկական» (Armeniacus): (Տես. Գարագ. մ. II. էջ 275—276):

Վերը բերած հատուածից երևում է, որ Հայերը ոչ միայն ազատուեցան Պարսից ազդեցութիւնից, այլ և Հռոմայեցւոց տուած օգնութեան համար՝ իրը վարձատրութիւն ստացան Ատրպատականի մի մասն և, ինչպէս կը տեսնենք, Ծնացին Հռոմայեցւոց հովանաւորութեան ներքոյ: Այս ժամանակ Հայաստանի թագաւորն էր Տրդատ III Մեծն, որին, ըստ վկայութեան Ագաթանգեղոսի և Մ. Խորենացու, թագաւոր կարգեց Հայոց վրայ Դիոկղետիանոս կայսրը: Թէ ո՞վ էր Տրդատի հայրը, Արտաւազդն, որ յիշուեցաւ վերը, թէ Տրդատ II. արտաքին պատմութեան, ազգային անուամբ Խոսրով, չունիմք ասել ինչ ստուգիւ, թէպէտ վերջին թուի հաւանականագոյն, նկատում է Գարագաշեանը, (տե՛ս Քն. Պատ. մ. III. էջ. 3): Այս Տրդատի ժամանակ քրիստոնէութիւնը տարածուեցաւ Հայաստանում, ինչպէս վկայում են, բացի մեր ազգային պատմիչներից, նաև Եւսեբիոսը և Սոզոմենոսը: Սոցանից առաջինը ասում է, թէ Հայերը ջերմեռանդ աստուածապաշտ էին և պատերազմ ունեցան քրիստոնէութեան համար Ասիայի և Եգիպտոսի տէր՝ Դայա Մաքսիմիանոսի (307—313) հետ, որ ստիպում էր նոցա կռապաշտութեան և չարաչար

յաղթեցին այս բռնաւորին։ (Եւս. եկ. պատ. IX. գլ. VIII)։ Իսկ Սոզոմենոս, որ ժամանակով աւելի մօտ է այս երևելի անցքերին, որոնք տեղի ունեցան Հայաստանում, աւանդում է, թէ «սքանչելիք աստուածանշանք եղան 'ի տան Թագաւորին (Տրդատի), որ դարձաւ և դարձրեց և զազգն 'ի քրիստոնէութիւն։ Սոզոմենոս արդարև տալիս է Տրդատի անունը, բայց չէ յայտնում, թէ ի՞նչ էին այն նշանք, ոչ էլ յիշում է Գրիգոր Լուսաւորչին և Հռիփսիմեանց, որոնք ըստ ազգային աւանդութեան գլխաւոր գործիք էին այն դարձին (Գարագ.) Տրդատի մահուան տարին ճիշտ յայտնի չէ, բայց հաւանական է, որ պատահեցաւ Մեծին Կոստանդիանոսի մահից (337) փոքր ինչ յետոյ, և երբ լրացաւ 40 ամեայ խաղաղութեան դաշն (297—337), որ կռել էին Գալերիոս և Ներսեհը, Հայաստանում սկսուեցան յուզմունք։ Մեր ազգային պատմութիւնից (Բուզանդ.) գիտենք, որ այդ խռովութիւնները տեղի ունեցան անմիջապէս Տրդատի մահից յետոյ։ Արդարև երկու մեծ և հզօր դաշնակից Թագաւորների Կոստանդիանոսի և Տրդատի զօրութիւնն ու համբաւն էին, որ զսպում էին ներքին և արտաքին խռովութիւնները (Շապուհ II 310—379)։ (Գարագաշեան)

Այժմ դառնանք նորից Կրիմսկու Սասանեանց պատմութեան։

Աննշան Որմիզդ II-ից (303—310) յետոյ գահ բարձրացաւ Ադէռ—Ներսեհ, որին շուտով աւադանին սպանեց նորա խստութեան համար և Թագաւոր հռչակեց մանուկ Շապուհ II-ին (310—379), որ քրիստոնէութեան տարկու հալածիչն էր և հակառակորդ Մեծին Կոստանդիանոսի և Յուլիանոս Ուրացողի։ Շապուհի մանկութեան շնորհիւ տէրութեան գործերը վարում էին փառասէր աւադանին և նորա մայրը։ Դա խռովութիւնների ժամանակն էր. Թափառական Արաբացիք միշամուխ եղան իրան և նուաճեցին շատ գաւառներ, այնպէս որ, երբ մեծացաւ Շապուհ, իսկոյն արշաւանքներ սկսեց նոցա դէմ և խստիւ պատժեց նոցա, անծամբ ծակելով գերիների ուսերը, որտեղից չուան էր անցնում և քարշ տալիս իւր յետևից։

Բայց իւր հետևանքներով նշանաւոր իրողութիւնը, որ

կոտարուեցաւ Շապուհի մանկութեան օրերում, դա քրիստոնէութեան պաշտօնական յաղթանակն էր կռապաշտութեան առաջ դրացի հռոմէական կայսրութեան մէջ։ Սասանական թագաւորութեան մէջ կային նոյնպէս բազմաթիւ քրիստոնեայ հպատակներ, յատկապէս ասորիք, որոնց մօտ IV դարում սկսում է զարգանալ բուռն քրիստոնէական եռանդ և փառաւոր բարգաւաճում մատենագրութեան. զօր. աշխարհահռչակ Եփրեմ Ասորի † 373։ Քրիստոնեայ Հայաստանը բաւականին ինքնուրոյնութիւն էր վայելում և այդ ժամանակ բոլորովին անկախ էր Պարսկաստանից։ Առաջ, երբ Հռոմայեցւոց կայսրները հալածում էին քրիստոնէից, Պարսից հպատակ քրիստոնեաները, դաւանութեան ազատութիւն վայելելով, Պարսից հաւատարիմ հպատակներ էին և ոխերիմ թշնամի Հռոմայեցւոց։ Իսկ այժմ, երբ մեծն Կոստանդիանոսը իւր կայսրութեան մէջ օգնեց քրիստոնեաներին յաղթելու կռապաշտներին, սասանական քրիստոնեայք իւրեանց աչքերը դարձրին Հռոմայեցւոց կողմը և դա երևեցաւ հէնց Շապուհի պատերազմի միջոցին (337—338) Հռոմայեցւոց դէմ։ Հասկանալով ասորոց տրամադրութիւնը, նա սարսափելի հալածանքներ հանեց իւր տէրութեան քրիստոնէից դէմ 339 թուականից, այդ ժամանակ նահատակուեցան բազմաթիւ ասորիք, որոնց Ասորոց գրականութեան մէջ դասեցին սրբոց նահատակաց կարգը, գրուեցան վկայաբանութիւններ և այլն։

Սոյն դէպքում Շապուհը չէր ղեկավարում մոլեռանդութեամբ. ճշմարիտ է իւր զրադաշտական կրօնին նա վերաբերւում էր յարգանքով և նորա ժամանակ, ինչպէս կարծում են, վերջնականապէս հաստատուեցաւ Զենդ-Ավեստայի մեծագոյն մասի արդեան խմբագրութիւնը, միով բանիւ Շապուհին ցանկալի չէր ոչ թէ քրիստոնէական կրօնը, այլ քրիստոնէից կազմակերպութիւնը և Դիոկղետիանոսի նման նա չէր կարող թոյլ տալ տէրութիւն տէրութեան մէջ, մանաւանդ այնպիսի տէրութեան, որ համախոհ էր դրացի հռոմէական կայսրութեան։ Կամենալով քայքայել քրիստոնէութիւնը, նա քանդում էր եկեղեցիներ և հալածում էր եպիսկոպոսներին, քահանաներին, քար-

կոծել տալով նոցա հէնց իրենց հաւատացեալների ձեռքով։ Մինչդեռ արքայից արքան առաջնորդւում էր քաղաքական նպատակներով, մոգերը, օգուտ քաղելով առթից, հանդէս բերին իւրեանց կրօնական գաղանութիւնը, ուստի քրիստոնէից հալածանքները աւելի մռայլ գոյն ստացան։ Հալածումը սիստեմատիքաբար շարունակւում էր, վասն զի Հռովմայեցւոց դէմ սկսած պատերազմը տևեց 25 տարի (337—363)։

Պարսիկները, ինչպէս վերը յիշուած էր, համածայն Գաղերիոսի դաշնադրութեան (298 թ.) (Ներսեհի օրերում) հրաժարուել էին Միջագետքից և Հայաստանից։ Այժմ Շապուհ II-դը պատերազմը սկսեց միջամուխ լինելով Միջագետք 337 թ. Մեծն Կոստանդիանոսը, որի դէմ էին ուղղուած Պարսից պատերազմական գործողութիւնները, չկարողացաւ մասնակցել պատերազմին. իւր գօրքը նա հասցրեց միայն մինչև Նիկոմիդիա և մեռաւ (Մայիսի 22-ին 337 թ.) պատերազմը մղեց արդէն Կոստանդ։ Շապուհին ցանկալի էր գրաւել միջագետեան պաշտպանուած վայրերը, մանաւանդ ամուր Մծբինը, որ Հռովմայեցւոց համար բանալի էր դէպի մայրաքաղաք Տիգրոնը, իսկ Պարսից համար կարող էր ծառայել իբր դեղեցիկ յենարան ոչ միայն պատսպարուելու, այլև յարձակողական յառաջխաղացութեան համար Հռովմայեցւոց դէմ. բացի դորանից նոքա ցանկանում էին յետ դարձնել իրանց և այն երկիրը, որ հնուց կռուածաղիկ էր և որից քառասուն տարի առաջ Ներսեհը ստիպուած էր հրաժարուել, այն է Հայաստանը։ Եթէ Շապուհ երկրորդին երկար ժամանակ չէր յաջողում դրական հետևանքներին հասնել, դորա պատճառը Կոստանդ կայսրը չէր, որ, զուրկ լինելով զինուորական հանճարից, անդադար պարտութիւններ էր կրում, երբ ինքն էր պատերազմի յարդարիչը. դժուարութիւնը կայանում էր նրանում, որ միջագետեան ամրութիւնները և սահմանների պաշտպանութեան սիստեմը կատարելագործութեան էր հասցրած Դիոկղետիանոսի և Մեծին Կոնստանդիանոսի օրերում։ Պատերազմը երբեմն ընդհատւում էր (վասն զի Իրանի վրայ արևելքից արշաւում էին բարբարոսներ) և շարունակւում էր փոփոխակի յաջողութեամբ, սա-

կայն Պարսիկները գրաւեցին քանի մի տեղեր Միջագետքում։ Բայց ահա 363 թ. քաջարի և փառասէր Յուլիանոս Ուրացող կայսրը վճռեց հետևել Տրայանոսի, Սեպտիմէոս Սևերոսի, Կարոսի օրինակին և խաղալ ուղղակի Իրանի մայրաքաղաք Տիզբոնի վերայ։ Դուրս գալով Անտիոքից, Յուլիանոս Ուրացողը շուտափոյթ և ահեղ զօրութեամբ, հրով ու սրով, ճիշտ բարբարոսական աւերածութեամբ անցաւ Եփրատի ափերով Միջագետքը և ապա յառաջացաւ դէպի Սելևկիա Տիգրիսի վերայ, որի հանդէպ դեռի միւս ափին կանգնած էր Տիզբոնը։ Համոզուելով թէ անհնար էր տիրել այդ ամրութեան, Յուլիանոս Ուրացողը յետ դարձաւ դեռի ձախ ափերով։ Յետ նահանջուելու միջոցին Պարսից զօրքերը մեծ կորուստներ էին պատճառում նորան, վրահասնելով և կռուի բռնուելով։ Ի հարկէ, Յուլիանոսին կ'յաջողէր իւր դինուորներին ողջ և առողջ հասցնել մինչև Հռովմայեցւոց սահմանները, բայց մի ճակատամարտում պատահաբար նա կարեվէր խոցուեցաւ (Յունիսի 26-ին 363 թ)։ Իբրև փիլիսոփայ և դից հաւատացող մարդ, Յուլիանոս խաղաղութեամբ ընդունեց մահը «իբրև մեծադոյն պարգև բարի մարդոց երկնային աստուածներից և ողորմութիւն, որ նոքա ուղարկում են կեանքի դժուարութիւնների մէջ»։ բայց զօրքի համար նորա մահը դժբախտութիւն էր։ Զօրքից ընտրուած Յովիանոս շատ ա՛յաջող կերպով վարեց պատերազմը և բանակցութիւնները։ կայացած դաշնադրութեան զօրութեամբ Միջագետքը և փոքր Հայոց մի մասն յետ տրուեցան Պարսից, ընդ։ նմին նաև ամուր Մծբինը, քանի մի ամրացրած բերդերով։ հետևեալ պատերազմների ժամանակ Մծբինի տիրապետութիւնը մեծ գերակշռութիւն ընծայեց Պարսից Հռովմայեցւոց առաջ։ Գալով Հայաստանին պէտք է ասել, որ Հռովմայեցիք պարտաւորուեցան չօգնել Հայոց և Շապուհի ձեռքը մատնեցին Արշակ Թագաւորին։ Սակայն լեռնոտ Հայաստանը իւր բնակիչներով, որոնց մէջ քրիստոնէից թիւը պակաս չէր զրադաշտականների թուից, չէր կարող սերտ կապուած մնալ Սասանեանց Թագաւորութեան հետ և ձգտում էր դէպի Հռովմայեցիներն, որոնք սկսան աջակցել Պապին, դերութիւնից փախած Արշակի որ-

դուն։ (Գրիգոր Լուսաւորչի գործունէութիւնը սկսւում է 294 թ. Տրդատ Թագաւորի և Հայաստանի 302 թ. Լուսաւորչի մահը 331 թուականից յետոյ)։ Վերջին խօսքերը Ս. Լուսաւորչի գործունէութեան մասին պրոֆ. Կրիմսկի աւելացնում է Շապուհի II Պատմութեան վերջը, իբրև ծանօթութիւն, անշուշտ, գերմանական աղբիւրներից։ Այդ ծանրակշիռ խնդրի մասին մեր աղդային պատմիչներից ունենք անհամեմատ լիակատար տեղեկութիւններ, քան մի օտարական դիտնական կարող էր հաղորդել. մեզ համար աւելի թանդ է նորա մի այլ ակնարկութիւնը, թէ Արշակ Թագաւորի ժամանակ Հայաստանի բնակչութեան կէս մասը արդէն քրիստոնեայ էր, ուրեմն բոլորը չէր տակաւին լուսաւորուած քրիստոնէական լուսով. կային դեռևս զրադաշտական կրօնը դաւանողներ։ Եւ հաւանական է կարծել, որ կռապաշտութիւնը յարատևած պիտի լինի Հայաստանի հարաւ—արևելեան նահանդներում, ուր աւելի զօրեղ էր Պարսից աղդեցութիւնը մաղդեղանց օրէնքով հանդերձ։ Այդ մասին ակնարկներ պակաս չեն մեր հնագոյն հեղինակների մօտ. արդարև՞ այն բազմաթիւ ուրացողները, որոնց մասին յիշում են Փաւստոս Բուզանդը, Եղիշէ, Փարպեցին, եթէ ոչ կռապաշտներ. ըստ Կորիւնի Մեսրոպը անձամբ գնում է քրիստոնէութիւն քարոզելու Գողթան դաւառը, Սիւնիք, Մարաց կողմերը և այլն։ Հասկանալի բան է, որ Մեծին Տրդատի մի հրամանով ամբողջ Հայաստանը չէր կարող քրիստոնէութիւն ընդունել, քանի որ այնտեղ աւատական կազմակերպութիւն էր և ոչ միապետական, ուրեմն, Թագաւորի կամքը օրէնք չէր երկրի բոլոր բնակիչների համար, որոնք զանազան իշխանների ճորտեր էին և շատ անգամ ամենևին էլ չէին ճանաչում Հայոց Թագաւորին։ Կրկնում եմ, ամբողջ Հայաստանը քրիստոնէական լուսով լուսաւորելու համար հարկաւոր էին դարեր։

Բայց դառնանք մեր պատմութեան թելին և տեսնենք թէ ի՞նչ Թագաւորներ կառավարում էին Հայաստանում Շապուհ II (310—379) ժամանակ։ Տրդատ III Մեծն *) 26 տարի ապրեց Շապուհի օրերում և մեռաւ, ըստ Գարագաշեանի, 336

*) Թագաւոր հաստատուեց Դիոկղետիանոս կայսրից 297 թ.

թուին. Խոսրով Կոտակ 336—343. Տիրան 343—353, որ ոչ մի կերպ չէր կարող յափշտակուել Աարպատականի մարզպան Վարազ Շապուհից և դերի վարուել Պարսից Ներսեհ *) (293—303) թագաւորի մօտ, ինչպէս պատմում է Միամիտ Բուզանդը (տե՛ս դպր. դ. գլ. ի. Ս. Պետերբուրգ 1883 թ.): Շատ հաւանական է, որ Շապուհ կամենալով շահել Տիրանին, որ նա ձեռնտու չլինի Հռովմայեցւոց, հրաւիրեց նորան իւր մօտ. սա էլ տեսնելով նոցա (Հռովմի) թուլութիւնը, բանակցութեան մէջ մտաւ Շապուհի հետ, և յօժարակամ ճանապարհորդեց Պարսկաստան, ապա թէ ոչ, ո՞վ կթողնէր, որ մի որևէ Վարազ Շապուհ սակաւաթիւ զնդով մտնէր Հայաստան և անպատիժ գողանար Հայոց թագաւորին: Հակառակ միջազգային իրաւանց Շապուհը կարողացած է, գուցէ, փոքր ինչ երկար պահել Տիրանին իւր մօտ, բայց Կոստանդ կայսրից պարտութիւն կրելով, ազատել է Հայոց թագաւորին և մեծ պատուով ու փառքով արձակել նորան իւր ընտանիքով Հայաստան, ուր, Բուզանդի վկայութեամբ, նորա (Տիրանի) որդի Արշակ (353—368) երկու թագաւորների հաճութեամբ, Կոստանդ կայսեր և Շապուհի, թագաւոր հաստատուեց իւր հօր տեղ: Սակայն Պարսից արքայից արքան միշտ հետամուտ էր Հայաստանը նուաճելու, և Արշակի դրութիւնը երկու հզօր տէրութեանց մէջ չափազանց դժուար էր ու ծանր: Կոստանդ կայսրը, ինչպէս տեսանք Կրիմսկուց, համարեա անդադար պարտութիւն էր կրում պարսիկներից և Արշակ, տեսնելով ցունաց թուլութիւնը, օգնում էր, ըստ Բուզանդի, Շապուհին և մինչև անգամ չարաչար ջարդեց Հռովմայեցւոց զօրքը Մծբնի մօտ, որով շատ ուրախութիւն և զարմանք պատճառեց Պարսից թագաւորին: Իսկ Յուլիանոս Ուրացողի արշաւանքին դէպի Պարսկաստան, Արշակը իբրև նորա դաշնակից, կռուում էր Պարսից դէմ, ինչպէս վկայում է Ամմիան Մարկելին: Յուլիանոս Ուրացողի մահից, երբ կայսր հռչակուեց Յովիանոս, սա, նեղն ընկած՝ Հռովմայեցւոց անուան համար անպատուաբեր դաշնադրութիւն կապեց Պարսից հետ, որի զօրութեամբ հրաժարուելով Միջա-

*) Ներսեհ չէր թագաւոր այն միջոցին, այլ Շապուհ II-դը:

գեսքից, պարտաւորուեց ծեռնթափ մնալ Հայերից, «թէ կարասցես յաղթել նոցա, ասէ, և արկանել 'ի ծառայութիւն, ես 'ի թիկունս ոչ եկից նոցա» (Բուզ. գլ. IV. գլ. XXI)։ Սակայն մեր Բուզանդի այս խօսքերը չեն հաշտուում Ամմիանի տանդաժի հետ, որից երևում է, որ «Յովիանի դաշանց այն մասին մէջ, որ կը վերաբերէր Հայոց՝ կար պայման թողուլ զՀայս ուրոյն իշխանութիւն կամ թագաւորութիւն, առանց ջանալոյ նուաճել զայն իսպառ ընդ ծեռամբ Պարսից», գրում է Գարագաշեան և շարունակում է՝ «Շապուհ արքայ Պարսից... յետ մահուան Յուլիանու և ամօթալի դաշանցն առժամանակ մի պահեալ զմիաբանութիւնն ընդ մեզ՝ (Հռովմայեցիս) ապա յանկարծ, որպէս թէ չէր ամենևին ընդ պարաւոք, առ ոսն հարեալ զուխտն որ առ Յովիանու՝ լինէր ծեռներէց արկանել զՀայս իսպառ ընդ իւրով իշխանութեամբ (Ամմ. Իէ. 12)։ Արշակ անմիջապէս (1364 թ.) պատգամաւորութիւն ուղարկեց Վաղէս կայսեր մօտ և օգնութիւն խնդրեց Շապուհի դէմ։ Բայց այդ պատգամաւորութիւնը անյաջող անցաւ նախ՝ այն պատճառով, որ Յովիանոսի դաշնադրութիւնը դեռ նոր էր. երկրորդ՝ որ Վաղէսը զբաղուած էր արևմուտքում ապստամբութիւնը ընկճելով։ Անօգնական մնացած Հայերը չորս տարուց աւելի Վասակ Մամիկոնեան սպարապետի առաջնորդութեամբ բուռն կերպով դիմադրեցին Պարսից, մինչև որ հայ նախարարները և իշխանները, ծանձրացած անընդհատ պատերազմներից, թողին Արշակին ու քաշուեցան իրանց երկիրները, իսկ ոմանք անցան Շապուհի կողմը և այսպէս Հայոց լքեալ թագաւորը իւր հաւատարիմ Վասակ սպարապետի հետ անձնատուր եղաւ Պարսից և էլ չտեսաւ իւր թշուառ հայրենիքը (368)։

Նոյն տարին իւրեանց երկրին ու կրօնին հաւատարիմ մընացած Հայոց նախարարները կրկին պատգամաւորութիւն ուղարկեցին Վաղէսի մօտ Վասակի քաջ որդի՝ Մուշեղ Մամիկոնեանի գլխաւորութեամբ և խնդրեցին թագաւորեցնել Հայաստանում Արշակի որդի Պապին, որ պատանդ էր կայսեր մօտ և որի մասին Բուզանդը՝ ոյժ տալով իւր ոչ սրամիտ երևակայութեան, շատ անհամ և տաղտկալի զառանցանքներ է պատմում։

Ամմիանը, ընդհակառակն, շատ լաւ գոյներով է նկարագրում երիտասարդ թագաւորին։ Պապ (368—373) իւր խելացի պերտական կարգադրութիւնների շնորհիւ առիթ է ընծայում իւղերքին և արտաքին թշնամիներին գրգռելու նորա դէմ կասկածոտ Վաղէս կայսեր բարկութիւնը, որ կանչել է տալիս Հայոց թագաւորին Տարսոն և այնտեղ դերի պահում։ Պապ, որ մինչև իւր եղերական մահը հաւատարիմ մնաց Հռովմայեցւոց, մի կերպ փախչում է Հայաստան, ուր ժողովուրդը ցնծալից ուրախութեամբ ընդունում է իւր բնիկ թագաւորին։

Սակայն Վաղէս, երկիւղ կրելով, թէ մի գուցէ Պապը այս դէպքից յետոյ Շապուհի կողմը անցնի, ծածուկ հրաման է ուղարկում իւր գործակալ Տրայիանոսին Հայաստան՝ սպանել Պապին։ Նուտով հրամանը կատարւում է մի հանդիսաւոր խրնճոյքի միջոցին, որ տրուած էր 'ի պատիւ Հայոց թագաւորի, որի սպանումից յետոյ Վարազդատն է նշանակւում Ցունաց կողմից։ Երեք տարուց յետոյ Մուշեղ սպարապետի յաջորդ Մանուէլ արտաքսում է Վարազդատին երկրից և եօթը տարու չափ 377—383 ինքնօրէն խնամում է Հայաստանը, յաճախ պատերազմելով Պարսից դէմ, մինչև իւր մահը։*) Շապուհի առաջարկութիւնը Ցունաց, բաժանել Հայաստանը իրանց մէջ վերջ դնելու համար անընդհատ պատերազմների՝ Վաղէս մերժում է։ Շապուհի մահուամբ 379 թուին խնդիրը Հայաստանի բաժանման մասին առկախ է մնում։

«Շապուհ II-դի յաջորդ ծերունի Արտաշիր երկրորդը (379—383), որ իւր նախորդի օրերում քրիստոնեաներին խստիհալածում էր, դահ բարձրանալով դադարեցրեց հալածանքները՝ արևելեան անփութութիւնից դրդուած, թէ՞ այլ պատճառներից, յայտնի չէ, ասում է Կրիմսկին։ Այս ծերունուն թագաւոր հռչակեց դրան աւագանին, ըստ երևոյթին, նոյն դիտաւորութեամբ, որով դահ էր բարձրացրել մանուկ Շապուհին, այն է՝ հոլու գործիք լինել աւագանու ձեռքում։

*) Անկախ Հայաստանը նաև Հռովմայեցիներից, որոնք զբաղուած էին արևմուտքում գոթական պատերազմներով։ Գարագաշեան քննակ. պատ. մ. III. էջ. 161.

Բայց երբ Արտաշիր II սկսեց հակառակ դնալ մեծամեծ-ներին, կոտորելով նոցանից մի քանիսին, զրկուեց գահից։ Ե-զերական մահուամբ մեռաւ աւագանու ձեռքից նաև նորա յա-ջորդ Շապուհ III-ը (383—388) նոյն մեծամեծների կողմից ուղարկուած սպանչից, հաւանական է կարծել, կորաւ և Վռամ IV դ Կրմանշահը (383—399)։ Շապուհ III և Վռամ IV աշ-խատում էին խաղաղութեան դաշն կապել Հռովմայեցւոց հետ։ Պարսից և Հռովմայեցւոց մէջ (Թէոդոս Մեծի) դաշնադրու-թիւն կայացաւ, որի զօրութեամբ 390 թ. Հայաստանը երկու մասերի բաժանուեցաւ. մեծագոյնը բաժին հասաւ Իրանին, փոք-րագոյնը Հռովմայեցւոց կայսրութեան։ Այս բաժանումը, առ-հասարակ, պահպանուեց մինչև Արաբացւոց ժամանակը, թէև, ինչպէս կտեսնենք սակայն երբեմն ծագում էին բարդութիւն-ներ։ Կ'յիշեմ նաև շարունակում է ռուս գիտնականը, որ այն միջոցին, երբ Վռամ IV-ը թագաւորում էր Իրանում, տեղի ունեցաւ Հռովմայեցւոց կայսրութեան բաժանումը 395 թ. ա-րևմտեանի (Հոնորիոս) և արևելեանի (Արկադիոս) հանդիպե-լով այնուհետև «Հռովմ» և Հռովմայեցիք «տէրմիններին. պիտի հասկանաք, որ բանը Բիւզանդիայի և բիւզանդացւոց մասին է»։ Այժմ դառնանք մեր տոհմային պատմիչներին։ Ըստ Փ. Բուզանդի (գլուխ V. գլ. 44-դ) Մանուէլ սպարապետը իւր Վարդանդուխտ դուստրը կնութեան է տալիս արքայազն Արշակին իսկ նորա եղբօր Վաղարշակին ամուսնացնում է բագրատունեաց ասպետի դստեր և փառաւոր հարսանիք է կատարում Կարի-նում ի ներկայութեան բոլոր նախարարների, իշխանների, հո-գևորական դասի։ Նոյն քաջ Մանուէլ Մամիկոնեանը Հայոց զօր-քի սպարապետութիւնը յանձնում է իւր որդի Արտաշրին պա-տուիրելով նորան հաւատարիմ հպատակութեամբ ծառայել նոր թագաւոր Արշակին, ինչպէս Մամիկոնեանները առհասարակ ծառայել են իւրեանց բնիկ Արշակունի թագաւորներին և այլն։ Մահից առաջ, այն է 383 թ. Մանուէլ յանձնում է Արշակ թագաւորին և Հայաստանը Յունաց կայսեր Թէոդոս մեծի հո-վանաւորութեան և ինքը մեռնում է խաղաղութեամբ։ Այդ պատմական ծանրակշիռ իրողութիւնը-դիմումը Մանուելի Յու-

նաց, արդէն բաւական էր դժուարթիւն յարուցանելու երկու մրցակից պետութիւնների մէջ և իզուր Բուզանդը մեղադրում է Հայոց նախարարներին, թէ դոքա չէին կամենում ճանաչել Արշակի թագաւորութիւնը, դնացին Պարսից դուռը և խնդրեցին իւրեանց համար այլ թագաւոր. (գլխ. IV. 1.) Երկու պետութիւնների բանակցութիւնը, ինչպէս տեսանք, վերջացան Հայաստանի բաժանմամբ երկու անհաւասար մասերի։ Արևմտեան փոքր մասում թագաւորեց Արշակ Պապի որդին. իսկ մեծ Հայաստանում Խոսրով Արշակունին. բանակցութիւնները ցունաց հետ սկսել էր Շապուհ II դ. (383 — 388), բայց վերջացրեց Վռամ IV-դ (388 — 399) և բաժանումը տեղի ունեցաւ, ըստ Կրիմսկու, 390 թ. երբ Շապուհ III-ը արդէն մեռած էր։

Այսպիսի անհաւասար բաժանման պատճառը Գարագաշեանը այսպէս է բացատրում։ Լաւ աշխարհագրագէտ մը բաւական է ցուցնել մեզ պատճառը։ Հռոմայեցիք, ռազմագէտ ժողովուրդ՝ չնայեցան այն բաժնին փոքրկութեան, քանզի թէպէտ փոքր էր տակայն կարևոր, վասն զի ունէր զԾոփս (Զորրորդ Հայք), զոր կարգեցին և ամրացուցին հեռագնեակ կայսերը, մանաւանդ Յուստինիանոս, ընդ որ էր մուտ 'ի Միջագետս, մանաւանդ թէ էր իսկ Միջագետք կամ Միջագետք Ասորւոց (տե՛ս Քնն. պատ. մ. III. էջ. 184—185)։ Գարագաշեանը Հայաստանի բաժանումը դնում է 384 թ. ուրեմն, վեց տարի առաջ Կրիմսկուց, որ աւելի ընդունելի է համարւում մեզ տոհմային պատմիչների տեսակէտից։ Արշակի մահից յետոյ 386 թ. արևմտեան Հայքը բիւզանդական կայսրութեան նահանգ դարձաւ և էլ հայ թագաւոր չունեցաւ։ Մեծ Հայքում թագաւորում էր Խոսրով 385—391 թ. սորան թագաւոր էր կարգել Վռամ IV Կրմանշահը, որ յետոյ զրկելով Խոսրովին գահից, կանչեց Պարսկաստան և Անուշ բերդում բանտարկեց և տեղը նշանակեց նորա եղբօր Վռամշապուհին 391—414 թ։ Գարագաշեանը շփոթում է Վռամ IV-ին Վռամ III (293 թ.) հետ, որ մի տարի էլ չթնաց գահի վրայ։ Վռամշապուհը, ինչպէս երևում է, իւր խելացի քաղաքականութեամբ կարողացաւ վայելել թէ Պարսից և թէ

Յունաց մեծարանքը և երբ Միջագետքում գժտութիւններ ծագեցան, Պարսից և Յունաց մէջ, Վռամ IV առաջարկեց մեր թագաւորին գնալ իջնել Միջագետք և խաղաղացնել խռովութիւնները։ Վռամշապուհի այնտեղ գնալն առիթ տուեց Հայոց նշանագրերի գիւտին, որից յետոյ Սահակ և Մեսրոպ իւրեանց աշակերտների աջակցութեամբ ծեռնամուխ եղան սուրբ գրքի թարգմանութեան և սկիզբն դրին Հայոց հին մատենագրութեան զարգացմանը։ Մեր տոհմային գրականութեան մշակութեան գործում Վռամշապուհ պանծալի մեկենաս հանդիսանալով, անմահ անուն թողեց հայոց պատմութեան էջերում։ Նորա մահից յետոյ մի տարու չափ կրկին թագաւորեց Ղնուշ բերդից արծակուած Խոսրով III. (415 թ)։

Դառնանք նորից պ. Կրիմսկու Սասանեանց պատմութեան։

«Խաղաղասէր յարաբերութիւնները Հռովմայեցւոց, այն է Բիւզանդացւոց հետ, շարունակւում էին հետև եալ Յազկերտ I-ի (399—420) ժամանակ, որ մեծ տհաճութիւն էր պատճառում Պարսից դրան պատերազմասէր աւագանուն. վերջինս, սակայն, ունէր շատ ուրիշ առիթներ դժկամակելու, վասն զի Յազկերտ I հռչակուած Հռովմայեցւոց աջքում իւր վեհանձնութեան և ազնուութեան համար (Պրոկոպիոս Bellum Persicum, 14), խստութեամբ էր վերաբերւում պարսկական աւագանուն և վճռեց ոչնչացնել նորա ազդեցութիւնը։ Նա որոշեց նոյնպէս թուլացնել զրադաշտական մոգութեան քաղաքական զօրութիւնը և այդ նպատակով հովանաւորում էր իւր քրիստոնեայ հպատակներին։ Հայաստանին նա տուեց նոր աւատական թագաւոր (փոխանակ նոցա նախկին Արշակունեաց, 416.) յանձին իւր որդի Շապուհի, որ համբերող՝էր քրիստոնէութեան *) և Մնացեալ, քրիստոնէից ստուար բազմութիւնը Պարսկաստանում Արամեցիք կամ Ասորիք էին։ 410 թ. Տիզբոնում նոցա ժողո-

*) Հայոց մօտ այդ ժամանակ քրիստոնէութիւնը արդէն շատ հաստատուն էր. դեռ ևս 397 թ. Մեսրոպ հնարեց Հայոց նշանագրերը և սկսուեց Աստուածաշունչ գրոց թարգմանութիւնը հայերէն (434 թ.) թարգմանութիւնը վաւերացրած էր Հայոց հոգևորականաց ժողովում։ Կրիմսկի։

վը կայացաւ, ուր նոցա եկեղեցին Պարսկաստանում պաշտօնական կազմակերպութիւն ստացաւ. բայց այդ եկեղեցին, բնականաբար ինքնուրոյն պիտի լինէր, անկախ Կ. Պոլսի պատրիարքից և Հռովմայ պապից, վասնզի այդպիսի կախումը Պարսից թագաւորները չէին կարող թոյլ տալ քաղաքական տեսակէտից։ Ճշմարիտ է, երբ հարկը պահանջում էր խիստ լինել քրիստոնէից վերաբերութեամբ, Յազկերտը դորան էլ ընդունակ էր, զօր. սաստիկ պատիժը, որին ենթարկուեց Սուզիանայում Աբդա եպիսկոպոսը, 'ի վարս սրբոց քրիստոնէից նշանակւում է իբրև դարաշրջուխ նոր հալածանքների. բայց առհասարակ քրիստոնէից դրութիւնը Յազկերտ I-ի օրերում վատ չէր։ Ասորոց եկեղեցու գլուխը (կաթողիկոսը) Յազկերտ I ի բարեկամութիւնն էր վայելում և թագաւորը ուղարկում էր նորան իբրև դեսպան Բիւզանդիոն (408 թ. բարեկամական գաշն կապուեցաւ Բիւզանդիոնի հետ, որի զօրութեամբ Յազկերտ I խոստացաւ ապահովել Արկադիոսի մանուկ որդի Թէոդոս II-դի գահը). քրիստոնեայ կաթողիկոսին էր յանձնուած դեսպան ներկայանալ թագաւորի ու նորա եղբօր հաշտեցնելու բանակցութիւնների մէջ։ Ինչպէս զրադաշտական մոգերը, այնպէս և ազնուականութիւնը ատում էին Յազկերտ I-ին և երբ 420 թ. նա գտնուում էր հեռաւոր Կաղբեան նահանգ Գիրկանիայում, յանկարծ անհետ կորաւ, ժողովրդին յայտնեցին, թէ Պարսից զայրացած աստուածը պատուհասել է յանցաւոր թագաւորին *)։

Դրան աւագանին վճռել էր գահ բարձրացնել ոչ թէ ատելի Յազկերտի զաւակներից մէկին, այլ նորա հեռաւոր ազգականներից ընտրել թագաւոր։ Սակայն դորան հակառակեց սպանուած արքայի որդին Վռամ V գուռ, որ դիմեց աւատական Հիրայի Արաբացւոց օգնութեան, որոնց մօտ նա հօրից փախչելով, ապաւինել էր։ Հիրայի իշխան Մինդրոը I իւր արաբա-

*) Եղիշէի պատմութեան հեղինակը ասում է՝ «յիշեցուցանեմք քեզ զժամանակն Շապհոյ արքայից արքայի, որ էր հայր հաւուն քո Յազկերտի.. հարքն մեր.. բազում անգամ ինմանէ մեծապարգևք ելանէին»։ Այս խօսքերը աւելի կվայելէին Յազկերտ I-ին, քան Շապուհ II-ին, որ Արշակին սպանեց։ Մ. Շ։

կան հրոսակներով արշաւեց Տիզբոնի վրայ և գահը հասցրեց Վռամ V-ին (420—438)։ Սակայն, սա, գահ բարձրելով՝ խոստացաւ կառավարել ոչ իբրև իւր հայրը, այլ ըստ հին օրինակի, հաւանութեամբ մեծամեծների և մոգերին։

Պարսկական աւանդութիւնը Վռամ V-ին դարձրել է իւր սիրելի դիւցազնը, սիրային արկածների քաջարի հերոս, աշխարհի տիեզերակալ և այլն. Փիրդաուսի և նորանից յետոյ Նիզամի և. դոցա կրտսեր՝ պարսկական և տաճկական հեքեաթները փառաբանում էին Վռամին իւրեանց բանաստեղծութիւնների մէջ. բայց իրօք նա միայն դուարճասէր և իգամոլ մարդ էր, զուրկ հաստատուն կամքից և գործելով՝ ի հանդէս հոգևորականութեան և աւագանու, կատարեց մի շարք անխոհեմ քայլեր։ Տէրութեան մէջ քրիստոնեայք կրկին ենթարկուեցան հալածանքների, իսկ Իրանից դուրս պատերազմ ծագեց Բիւզանդիոնի հետ (Թէոդոս փոքրի դէմ 408—450)։ Պարսից օգնում էր Մինդրա I, որ մտադիր էր իւր դօրքերով տիրել Ասորիքին։ Կարճ պատերազմը Բիւզանդիոնի հետ շատ ծանր եղաւ. միևնոյն ժամանակն էլ պետութեան արևելեան սահմաններին սպառնում էին Սպիտակ Հոնք (Քուշանք), որոնք տիրում էին Բակտրիային և Սոգդիանային. բացի դորանից աւատական Հայաստանն էլ ձգտում էր անկախութիւն ձեռք բերել։ Այդ հանդամանքները հարկադրեցին Պարսից անմիջապէս 422 թ. խաղաղութեան դաշն կապել Թէոդոս II-ի հետ.—նոքա պարտաւորուեցան չհալածել Պարսկաստանում քրիստոնէից. իսկ Բիւզանդացիք—չհալածել զրադաշտականներին և մերժել այն Արաբացիներին, որոնք կկամենային որոնել նոցա հովանաւորութիւնը փոխանակ շահինը. բացի դորանից Բիւզանդացիք պարտաւորուեցան ամենայն տարի մի որոշ գումար վճարել Պարսից Ալանաց Դրան (Даръяльское ущелье) պահպանութեան համար, որտեղից կարող էին ներս խուժել բարբարոս ազգեր, վտանգաւոր երկու պետութիւնների համար ևս, այս պայմանը սակայն առիթ էր ընծայում յետոյ նորանոր թիւրիմացութիւնների, որովհետև Պարսիկները, որպէս և Բիւզանդացիք այսպիսի հարկի վճարումը անպատուաբեր էին համարում Բիւզանդացւոց համար։

Մ. ՇՈՎՐԵԱՆ

(շար. կլինի)

***

Բաղի միջին մաճ եմ գալիս,
Շաղի միջին ջան եմ տալիս,
Գարնան ծաղիկ, ալուան ծաղիկ
Ծոցս լցնում, բոյր եմ ծծում։

Ա՛յ վարդ, բացուի՛ր, սիրով լցուի՛ր.
Սէր-կրակով ինձ դաղեցիր...
Եարաբ, ուրիս բոց-կրակին
Մի ճար չունե՞ս, վարդ իմ անգին...

ՅԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Տ. ԹԷՈԴՈՐՈՍ Բ. ԿԻԼԻԿԵՑԻ

189. Սսոյ առումէն յետոյ, թէպէտ քաղաքը աւերեցաւ, բայց հիմնայատակ չքանդուեցաւ. և ոչ միայն կաթողիկոսարանը մնաց, այլ և Սիս, Եգիպտացւոց իշխանութեան ներքև տեղական կառավարութիւն ունեցաւ որուն իբր գլուխ կը յիշուին, նախ Եաղուպ Շահ, յետոյ Աքպուղա կամ Կիւմիւշպուղա, և ապա Մէլիք Էօմէր։ Արդէն ծանօթ է մեզ ոստիկաններու ժամանակէն, թէ մամլուքական պետութեանց կուսակալները բացարձակ տեղական կառավարողներ էին, որ զերագոյն իշխանութեան հպատակութիւնը ճանչնալէ և հարկը տալէ զատ կապ մը չունէին սուլտաններու հետ. Երբ Կիլիկիա Եգիպտացւոց ձեռքն անցաւ (1375) բուն հայկական գաւառներն ալ արդէն անոնց իշխանութեան ներքև էին խալիֆայութիւն կատարեալ արաբական կերպարան ունէր Պաղտատի մէջ, այլ Մողոլներուն ձեռքն անցնելէն ետքը ամենայն ինչ խառնիխուռն դարձաւ, և զանազան երկիրներու մէջ մասնաւոր տիրապետներ ինքնագլուխ կ'իշխէին, թէպէտ հաստատուն շարունակութիւն և կարգաւորեալ բաժանում չունէին։

190. Պողոս Ա. կաթողիկոսին յաջորդեց Թէոդորոս Բ. որուն նախընթացին վրայ ընաւ տեղեկութիւն չեմք գտներ, բայց տագնապալից ժամանակին պարագաներուն յենլով կրնանք հետևցնել, թէ Սսոյ մերձաւոր վիճակներուն եպիսկոպոսներէն էր։ Թէոդորոսի կաթողիկոսութեան ութը տարի կուտայ Դավրիժեցին (Առաք. 336) բայց ցուցակին թուականներուն և ուրիշ յիշատակներու նայելով, պէտք կ'ըլլայ աւելի երկարել անոր ժամանակը. արդէն սովորական ցուցակներն ալ այնպէս կը ցուցնեն։ Մեծ գործ մը կար Թէոդորոսի առջև, այն է, նոր ձև և նոր կերպարանք մը տալ կաթողիկոսութեան, և նոր յարաբերութեանց ձևեր որոշել նոր տիրապետութեան հետ, բայց մեզի որոշ տեղեկութիւններ հասած չեն։ Իւր եղերական մահը կը ցուցնէ, թէ աննշանակ չանցան իւր օրեր, և գուցէ նոր կարգադրութեանց պատճառաւ հակառակորդներ ունեցաւ. և կենաց վանդի հանդիպե-

ցաւ։ Թէոդորոսի սպանութիւնը տեղի ունեցաւ Ասոյ ամիրային ձեռքով, զոր հին պատմիչ մը Մելիք Էօմէր կ'անուանէ, և կը յիշատակէ թէ տասնուվեց տանուտէրներ ևս միատեղ սպանուեցան (Ս եծոփ. 11)։ Բայց ուրիշ յիշատակագիր մը Մէլիք Էօմէրի նախորդին կուտայ այդ սպանութիւնը (Սիսուան 542)։ Թէոդորոսի սպանութեան տարին, զանազան յիշատակները մերձեցնելով, պէտք է դնել 1392-ին, որով իբր 15 տարի պաշտօն վարած կը լինի։ Մեծոփեցին Թէոդորոսի սպանութիւնը յիշելով, քրիստոնէից նենգութեան կը վերագրէ զայն, որ ժամանակին սովորական ոճով Լատիններու վրայ կը մեկնուի, և լատինամոլ անձանց քսութեանց հետևանք եղած կ'ըլլայ կաթողիկոսին եղերական վախճանը։ Աւելի ծանօթութիւն չունինք Թէոդորոս Բ-ի գործերուն վրայ։

191. Երբ բաւական երկար միջոց մը Կիլիկիոյ կաթողիկոսարանին շուրջը յիշատակաց արժանի դէմքեր և դէպքեր կը պակսին, Արևելեան դաւառներ երջանիկ յիշատակաց արժանի անձնաւորութիւններ երևան կը հանեն, որք կը փայլեն ունիթօրական շարժումին դէմ ազդու դիմադրութիւն կազմելով։ Յակոբ Բ. կաթողիկոսի վերջին տարիները յիշեցինք Հայ Ունիթօրական միաբանութեան կատարելապէս Լատին Դոմինիկեանց հետ ձուլուիլը, և Զահկեցի Թովմայի եպիսկոպոս, ու Ելեւթերիոսի մեծաւոր ընտրուելը (1356)։ Թովմայի ու Ելեւթերիոսի անմիջական յաջորդներուն անունները մեզի չեն հասած, և Զահկեցւոց միաբանութեան ու հասարակութեան շարժումները պահ մը կը հանդարտին և իրենց վրայ խօսել չեն տար, մինչև Ճագարակեր Կարապետի օրը, որ ժամանակին մեծաւորը եղած կ'երևի։ Սորա գլխաւորութեամբ Զահկեցի ունիթօրները նորէն հրապարակ կը նետուին, և վիճաբանութեանց կը սկսին, մուրացածոյ փաստերով և իմաստակ դարձուածներով քարոզներ կը խօսեն, և այն զեղծումները, զորս ունիթորութեան սկիզբները տեսանք, վերստին գործածութեան կը մտնեն։ Նորէն կը սկսեն կրկին մկրտել և կրկին ձեռնադրել, Հայոց ծէսերն ու սովորութիւնները ծաղրել, դաւանութիւնն ու կանոնները անարգել, խիղճերը շփոթել և երկպառակութիւններ ցանել։ Նոյն ժամանակներն էր, որ Լէնկթիմուր իւր ահեղ հրոսակով կը մտնէր Ատրպատական (1345), Վրաստան (1386) և Ասորիք (1387), և հայկական դաւառներ ոտնակոխ կ'ըլլային, սակայն ժամանակակիցներ աւելի աղիողորմ ողբերով կը յիշատակեն Ունիթօրներու անկարգ շահատակութիւնները։

192. Ահա, ճիշտ այդ միջոցին, ազգային եկեղեցւոյն պաշտպանութեան ձեռնարկեցին այն երանաշնորհ վարդապետները, որոնք թէ ազգային ու օտար ուսմանց զարգացմամբ, և թէ ուղիղ

սրտով և ուղղափառ հաւատով Հայաստանեայց սուրբ եկեղեցին ջատագովեցին և զօրաւոր կերպով օտարամոլ նախանձայուզութեան դիմադրեցին, և ոնիթոռաց մոլեկան շարժումները ճնշեցին։ Այդ երանաշնորհ խումբին առաջնորդն եղաւ Յովհաննէս վարդապետ Որոտնեցի, ժամանակակիցներէն կախիկ մականուանեալ, Սիւնեաց նահանգէն և Օրբելեան տոհմէն, որդի Իւանէ իշխանի, որոնց գաւառի Վաղանդն գիւղի մէջ ծնած, և աշակերտած Նշեցի Եսայի վարդապետին, որ Գայլեձորոյ վանքին առաջնորդն էր, և ժամանակին ամենէն նշանաւոր վարդապետն էր։ Նշեցիին մահուանէ ետքը Որոտնեցին ժամանակ մը անոր վարդապետական աթոռը գրաւած էր Գայլեձորի մէջ, բայց յետոյ Տաթեւի մայրավանքը փոխադրուեցաւ (1376)։ Նոյն ժամանակին նշանաւոր վարդապետներէն մէկն ալ Սարգիս Ապրակունեցին էր, որ յոմանց Որոտնեցիի աշակերտ կարծուած է։ Սարգիս ալ բազմաթիւ աշակերտներ հասուցած էր Ապրակունեանց վանքին մէջ, և հետամուտ էր գտնել և լմաստասիրել այն գիրքերը, որք Ունիթորներուն իմաստութեան աղբիւրը կը կազմէին, և որոց գլխաւորն էր Պետրոս Արագոնացիի Առաքինութեան եւ մոլութեանց կոչուած գիրքը, Յակոբ Քոնեցիի ձեռքով հայերէնի թարգմանուած (1339)։ Կը յիշուին եւ Սարգիս և Ղուկաս Շամբիձորեցի վարդապետները, որոնք Հայոց եկեղեցւոյն ուղղափառութեան պաշտպանողներն էին. բայց աւելի խաղաղասէր ոգւով մը երկու կողմերը մօտեցնելու և միացնելու կ'աշխատէին։

193. Ասոնցմէ տարբեր ուղղութեամբ, թէպէտ միևնոյն նպատակով, սկսաւ գործել Մաղաքիա վարդապետ Ղրիմեցի։ Սա մեծատունի զաւակ և հարստութեան տէր, և աշխարհի մէջ ալ դիրք ունեցող մըն էր, երբոր որոշեց եկեղեցականութեան մտնել, և Տաթեւի վանքին մէջ Որոտնեցւոյն աշակերտեցաւ, և ընթացքը լրացնելով ինքն ալ իրեն աշակերտութիւն մը կազմեց։ Մաղաքիա վարդապետ որոշեց արտաքին միջոցներով ալ Ջահկեցիներու մոլեգնութիւնը զսպել, քանի որ անոնք ամէն տեսակ արտաքին և ապօրինի միջոցներ գործածելէ չէին քաշուեր։ Իւր հարստութիւնն ու իւր ընտանեաց գործունեայ ձիրքերը այդ նպատակին նուիրեց, և Որոտնեցի ու Ապրակունեցի վարդապետներուն հետ խորհրդակցելով, իւր ծախքով նորոգեց և լիապէս օժտեց Ապրակունեաց և Աստապատու վանքերը, նոյն իսկ Ունիթորներու կեդրոնին մօտ (1380)։ Յովհաննէս Որոտնեցին Տաթեւէն Ապրակունեաց վանքը փոխադրեց, Սարգիս Ապրակունեցին ալ Աստապատի վանքը, և իւրաքանչիւրին մօտ բազմաթիւ աշակերտներ հաւաքեց։ Երբ ասոնք ուսմամբ և գիտութեամբ կը մրցէին Ունիթորներու դէմ,

Մաղաքիա վարդապետ միառմի ձեռք կը ձգէր աւելի մոլեգին նախանձայոյզները, և իբր հասարակ խռովարարներ, աշխարհական դատարաններու առջև կը հանէր, և ամէն միջոցներ կը գործածէր զանոնք ճնշելու. այնպէս որ սարսափ ազդեց բոլոր Ունիթօր գործիչներու վրայ։ Իսկ ինքն Մաղաքիա, որ Ճգնաւորի անուն ստացած էր ժամանակակիցներէն և պատմիչներէն ալ, իրօք բոլորովին խստամբեր կեանք մը կը վարէր, և մեռնելէն ետքը տեսնուեցաւ որ մարմնոյն վրայէն քուրձ ու քուք ու երկաթեայ գոտի կը կրէր։ Մաղաքիայի գործունէութիւնը հարկաւ ատելի պիտի ընէր զինքը բոլոր Ջահկեցիներու խումբին, որոնք պահ մը անոր դէմ Հռովմ գրեցին ամբաստանութիւններ յերիւրելով, բայց այդ միջոցէն օգուտ մը չքաղելով. ամէնէն տգեղ և վատ միջոցին դիմեցին, նոյն իսկ Մաղաքիայի սանամայրը իրենց գրաւելով և անոր ձեռքով վարդապետը դեղակուր ընել տալով (1384)։ Թիւնաւորող կնկան համար յայտնապէս կ'ըսուի թէ հետևող մը եղած էր Ունիթօրներուն (Մեծոփ. 15), կամ Աղթարմայից, ինչպէս սկսած էին կոչուիլ լատինամոլները, հայ եկեղեցիէ լատինականութեան անցնելնուն (աքթարմա ընելնուն) համար, կամ թէ, ինչպէս ուրիշներ կը մեկնեն, ախթարներու հետևողներու չափ զգուելի ըլլալնուն համար (Ցիշատ. 25)։

194. Թէպէտ Մաղաքիա վախճանեցաւ, բայց անոր թողած ահն ու սարսափը շարունակեց, և Որոտնեցին ու Ապրակունեցին աւելի արդիւնաւորութեամբ իրենց վարդապետական պաշտօնը շարունակեցին։ Չորս տարի ևս մնաց Որոտնեցին Ապրակունեաց վանքին մէջ, և այդ վարդապետանոցէն ելան ոչ միայն իրանց ժամանակին, այլ և ապագայ դարերու մէջ հռչակ ստացող վարդապետներ։ Առանց առաջինն ու մեծագոյնն է Գրիգոր, ընիկ Վայոցձորեցի, այլ ծագումով Արճիշեցի, որ իւր վերջին գործունէութեան տեղին անունէն Տաթևացի կոչուած է։ Իւր նշանաւոր ընկերակիցներն են, Յակոբ Սաղմոսավանեցի, Յովհաննէս Մեծոփեցի, Գէորգ Երզնկացի, Յակոբ Ռշտունի, Վարդան Հոգոցեցի, Գրիգոր Խլաթեցի, Մխիթար Ռշտունի, Սահակ Դարբեցի, և ուրիշներ։ Յովհան Որոտնեցի վախճանեցաւ սրբութեամբ, եօթանասուն և երեք տարեկան, Մաղաքիա Ղրիմեցիին սպանութենէն չորս տարի ետքը, նոյն իսկ իւր ծննդեան տարեդարձին օրը (1388 նաւասարդ 30/6 յունուար), և թաղուեցաւ Մաղաքիայի գերեզմանին քովը։ Որոտնեցին թողած է Յովհաննու աւետարանին և Պօղոսի թուղթերուն մեկնութիւնները, քարոզներ, և Փիլոնի ու Արիստոտէլի ու Պորփիւրի գիրքերուն վրայ փիլիսոփայական

երկասիրութիւններ։ Այնչափ մեծ եղաւ ազգին յարգանքը դէպ առ Որոտնեցին և նորա հռովմէականութեան դէմ ցուցած զօրութեան համար զգացած երախտագիտութիւնը, որ յետ դարուց նորա անունը իւր տօնացոյցին մէջ անցուց։

195. Որոտնեցիին մահուանէ ետքը, Ապրակունեաց վարդապետանոցին առաջնորդութիւնը յանձնուեցաւ իւր երիցագոյն աշակերտին, Գրիգոր Տաթևացիին (1388), այլ սա երկու տարի միայն վարդապետեց այնտեղ, և փոխադրուեցաւ Տաթևի վանքը (1390), ուր առաջնորդ էր իւր քուեր որդին, Առաքել եպիսկոպոս, Ապրակունեաց և Աստապատու վանքերը. նոյն իսկ Ունիթօրներու կեդրոնին մօտ զօրացնելը, Մաղաքիա Ղրիմեցիի գաղափարն էր եղած, և մեծ զոհողութիւններով յաջողած։ Սակայն գործը տակաւ տկարացաւ երբ Ղրիմեցիին յատուկ նպաստները դադարեցան, և Հայ վարդապետանոցը դարձաւ իւր նախկին և աւանդական տեղը, որ էր Տաթևի վանքը։ Բազմաթիւ եղան Գրիգորի աշակերտները, որոնք ժամանակ մը Հայ եկեղեցւոյն զօրութիւնը կազմեցին։ Որոտնեցիին և Տաթևացիին գործունէութեանց մէջ երկու դիտելի կէտեր կը նշմարենք։ Նախ որ Տաթևի աշակերտները միայն կուսակրօն աբեղաներ չէին։ Մեծոփեցին, տասնը վեց նշանաւորագոյն վարդապետներ յականէ յանուանէ յիշելէն ետքը կ'աւելցնէ, թէ Գրիգորի աշակերտներուն մէջ վաթսունէ աւելի քահանաներ ալ գտնուեցան (Մեծոփ. 51)։ Ասիկայ նշան է այն մտադրութեան, զոր մեր մեծ վարդապետները ունէին ամուսնացեալ եկեղեցականութեան վրայ, և կը հաստատէ թէ վարդապետական կոչումը, ոչ թէ կուսակրօն եկեղեցականութեան սեփականութիւնն էր, այլ ուսումնական զարգացման կապուած էր, և անխտիր բոլոր եկեղեցականութեան կը պատկանէր։ Երկրորդ դիտուելու կէտը վարդապետանոցին ուսումնական ծրագիրն է, որ կը պարունակէր կրօնական ճիւղ մը, Սուրբ գրոց մեկնութեամբ և Սուրբ Հարց գիրքերուն ուսումնասիրութեամբ, փիլիսոփայական ճիւղ մը, արտաքին իմաստասէրներու գիրքերուն հետևողութեամբ, և գրչութեան ճիւղ մը. Արիստակէս վարդապետի և Գէորգ Լամբրոնացիի արուեստի գիրքերուն վրայ։ Քարոզչական ուսումը, բնական հետևանք էր վարդապետական պաշտօնին։ Իսկ լեզուագիտական հմտութեանց մէջ. թէպէտ Որոտնեցին ու Տաթևացին հմուտ էին լատիներէնի, սակայն ամբողջ աշակերտութիւնը օտար լեզուաց ուսման հետևած չերևիր։

196. Սարգիս Ապրակունեցի, որ Մաղաքիա Ղրիմեցիի նպաստներով Աստապատի վանքին մէջ հաստատուած էր, Ղրիմեցիին և Որոտնեցիին մահուանէ ետքը չկրցաւ այլևս այնտեղ մնալ,

և փոխադրուեցաւ Արճէշի մէջ Սուխարու կամ Խառաբաստի վանքը, Զաքէոս եպիսկոպոսի օգնութեամբ (1389), և այնտեղ նոր վարդապետանոց մը հիմնեց, իբրև Տաթևի մեծ վարդապետանոցին մէկ ճիւղը։ Տասուերկու տարիներ նոյնտեղ արդիւնաւոր պաշտօն վարելէ ետքը, Ապրակունեցին հանգեաւ խաղաղութեամբ (1401), և իրեն յաջորդեց Վարդան վարդապետ Հոգոցեցի, որ չորս տարի ևս այնտեղ պաշտօնավարելէ ետքը, հրոսակներու երեսէն հանդարտութիւնը կորսնցուց, և Արճէշի գաւառը թողլով անցաւ Վան, և Սալնապատի վանքին մէջ հաստատուեցաւ (1405), և քիչ ետքը վախճանեցաւ (1406)։ Թէ Ապրակունեցիին և թէ Հոգոցեցիին բազմաթիւ աշակերտութիւն մը կը վերագրեն ժամանակակից յիշատակներ, սակայն Սուխարի վանքին փայլը, որ առջինով սկսաւ, երկրորդով փակուեցաւ։ Տաթեւացիին և Ապրակունեցիին հետևեցան ուրիշ վարդապետներ ալ, որոնք աստեանդ նոր դպրեվանքեր կամ ուսումնական վանքեր հաստատեցին, որոնց մէջ յիշատակութեան արժանի են, Յակոբ վարդապետի Սաղմոսավանքը, և Գէորգ վարդապետի Երզնկայի վանքը։ Ահաւասիկ արևելեան վանքերուն չորեքտասաներորդ դարուն վերջը ունեցած վիճակը, երբ բոլորովին խղճալի էր Կիլիկիոյ կողմերուն կացութիւնը։

Տ. ԿԱՐԱՊԵՏ Ա. ԿԵՂԵՑԻ

197. Կարապետ կաթողիկոս ծանօթ է իւր Կեղեցի ծագումով և Բոպիկ մականունով։ Իւր ընտրութեան թուականը պիտի ճշտուի Թէոդորոս Բ.-ի սպանութեան տարեոյն հաշուով, զոր Մեծոփեցին կը դնէ 1392-ին (Մեծոփ. 71), յայտնապէս նշանակելով թէ Աղթամարի Զաքարիա կաթողիկոսի սպանութենէն (1393), տարի մը առաջ էր։ Ուրիշ տեղ ալ միևնոյն (1392) թուականը կը կրկնէ, նշանակելով զայն իբր սկիզբ Սսոյ վերջին վեց կաթուղիկոսներուն։ Թէպէտ և յիշատակարան մը երկու տարի ետքը (1395) տակաւին Թէոդորոսը իբր կաթողիկոս կը յիշէ, սակայն յայտնի սխալ մը ըլլալու է, որովհետև ուրիշ աւելի բազմաթիւ յիշատակարաններու մէջ աւելի կանուխ, այսինքն 1394 տարիէն արդէն Կարապետ իբր կաթողիկոս յիշատակուած է (Նոտարք 6), որով վստահօրէն կրնանք Թէոդորոսի սպանութիւնը դնել 1392-ին և Կարապետի ընտրութիւնը 1393-ին։ Ի հարկէ նախորդին սպանութեան պարագայն և անկէ ծագած շփոթութիւնը արգիլք պիտի ըլլար նոր ընտրութեան, որով բիւրաւ կը բացատրուի Կարապետի ընտրութեան յապաղելը։ Դիտելի կէտ մըն ալ

է, որ վերջին պատմութիւնը գրողներ, հետևելով Դավրիժեցիին ցուցակին մէջ սպրդած մէկ սխալին, ուր Կարապետի երկու տարի կաթուղիկոսութիւն կը տրուի (Առաք. 336), և խաբուելով ինչինչ յիշատակարաններու մէջ Աղթամարի Դաւիթ կաթողիկոսին Հայոց Կաթողիկոս կոչուելէն, վերջինս Դաւիթ Դ. անունով Ամենայն Հայոց կաթողիկոսներու ցուցակին անցուցին, և Կարապետն ալ երկու անձի բաժնեցին, Կարապետ Ա. Կեղեցի, և Կարապետ Բ. Բոպիկ անուններով։ Սակայն մենք այդ դրութիւնը պարզապէս թիւրիմացութեան և սխալանքի հետևանք կը գտնենք. և ոչ Դաւիթ Դ-ի մը անունը, և ոչ Կարապետ Բ.-ի անձը կրնանք ընդունել կաթողիկոսներու գաւազանագիրքին մէջ։ Որովհետև այն չորս տարիներու մէջ որ Դաւիթ Դ.-ի կը տրուին, յիշատակարաններ շարունակեալ կերպով Կարապետի կաթողիկոսութիւնը կը ճանչնան, թէ 1400-ին (Նոտարք 11), թէ 1401-ին (Նոտարք 14), թէ 1402-ին (Նոտարք 18), և թէ 1403-ին (Նոտարք 23), որով կը ջնջուի Դաւիթի մը ենթադրեալ կաթողիկոսութիւնը, և անկէ առաջ և ետքը եղող Կարապետները կը լինին միևնոյն անձ, որ կը շարունակէ իւր պաշտօնը իբր տասնուվեց տարի (1393—1408)։ Իսկ Դաւիթ կաթողիկոսը, որ է Աղթամարի Զաքարիա նահատակ կաթողիկոսին եղբայրն ույաջորդը, կը մնայ նոյն ինքն Աղթամարի կաթուղիկոսը, որ 43 տարի (1393—1436) պաշտօն վարեց, ամբողջ Վասպուրականի վրայ իրաւասութիւնը տարածելով, ուր գրուած են շատ մը մեզի հասած գրչագիրներ, որոնց գրողները իբր կաթողիկոս Հայոց կը նշանակեն իրենց մասնաւոր կաթողիկոսը, հետևելով նոյն իսկ Աղթամարի աթոռակալներուն յաւակնոտ սովորութեան։

198. Կարապետի կաթողիկոսութեան միջոցը կը պատասխանէ այն տարիներուն, յորս Լենկթիմուր խանն Թաթարաց կամ Մողոլաց, իւր կողմանց տիրապետութիւնը լրացնելով, յարձակեցաւ արևմտեան երկիրներու վրայ, և Պարսից ու Հայոց աշխարհները գրաւելով, ամեն կողմ աւերածով և կոտորածով լեցուց։ Կարապետի ընտրութենէն ութը տարի առաջ (1486), սկսաւ այդ դժբախտ միջոցը և տևեց քսան տարի շարունակ (1405)։ Կարապետ ականատես եղաւ այդ աղէտներուն, այլ թերևս առանց մասնակցելու ամեն ներքին վիշտերուն որոնք ազգին վրայ կը հասնէին, վասն զի ընդհանուր հոգացողութեան միջոցներէն ալ զուրկ, իւր անձուկ սահմանին մէջ, Սսոյ ներքին գժտութիւններով անցուցած է իւր ժամանակը։ Կիլիկիան ալ ազատ չմնաց Լենկթիմուրի արշաւանքներէն, և Ասորիքի և Փոքր Ասիոյ պատերազմերուն առթիւ Սիսն ալ ոտնակոխ եղաւ Թաթար հրոսակ-

ներէն։ Եգիպտացւոց գերագոյն իշխանութեան ներքև սեփական կառավարութեան ուրուականը կը շարունակէր Սսոյ մէջ, որ հարկաւ Լենկթեմուրի զօրութեան դէմ դնել չէր կրնար։ Երբ յուսահատութիւնը տիրեց, Սսոյ Հայերը, որք տակաւին երեսուն հազար տուն եղած է՝ ըսուին, ժողով մը գումարեցին Կարապետ Կաթողիկոսի գլխաւորութեամբ, և որոշեցին խմբովին գաղթել։ Ասոր վրայ Հայերէն մաս մը իրենց գլուխն ունենալով Կարապետ Ասըպէկ իշխանները, որոց առջինը Կոստանդին թագաւորի մը թոռ կը կոչուի, և Յովհաննէս ու Վահան ու Գրիգոր ու Ստեփանոս քահանաները, քանի մը օրուան մէջ Սիսը թողուցին (1404), և անցան յայնկոյս ծովուն (Սիսուան 542), գլխաւորաբար Կիպրոս, բայց հաւանաբար նաև Եւրոպական երկիրներ։ Իշխաններուն և գլխաւորներուն մեկնելէն ետքը, մնացած քաղաքացիք անձնատուր եղան թաթարներուն (1404 յունիս 6)։ Հարկաւ աստիճան մը ևս վատթարացաւ Կարապետ կաթողիկոսի կացութիւնը, որ այս դիպուածէ ետքը, չորս տարի ևս (մինչև 1408) կը յիշուի յիշատակարաններու մէջ։

199. Ստոյգ տեղեկութիւններ կը հաւաստեն թէ 1409-ին Յակոբ մը կը գրաւէր կաթողիկոսական աթոռը, և հետևաբար անկէ առաջ, կամ նոյն թուականին մեռած կը լինի Կարապետ։ Մեծոփեցին Սսոյ վերջին վեց կաթողիկոսներուն բոլորն ալ դեզակուր սպանուած կըսէ, և ըստ այսմ Կարապետ այս վեցերուն առաջինը պէտք է սեպել։ Միակ յիշատակարան մը, երկու տարի ետքը, 1411-ին Կարապետ կաթողիկոսի անունը կուտայ (Նօտարք 39)։ Ուստի եթէ այդ յիշատակարանը գրագիրի մը սխալանքին չվերագրեմք, կամ եթէ Աղուանից կաթողիկոս Կարապետին վրայ չիմանանք, հնար էր կարծել, թէ Կարապետ նախ մերժուեցաւ Յակոբէն, և երկու տարի հեռացած կամ աքսորուած ապրելէ ետքը սպանուեցաւ։ Այդպիսի խառնակ ժամանակներու համար, ամէն տեսակ ենթադրութիւններ հաւանական կը դառնան, քանի որ որոշիչ և հաստատուն պատմութիւն մը չունինք։ Ըստ եկեղեցական ուղղութեան Կարապետ ալ չէ հեռացած այն լատինամիտ հակումէն, կամ ինչպէս ժամանակակիցներ կ՚ըսեն, այն ախթարմայական խմբէն, որ հետզհետէ զօրացած էր Կիլիկիոյ մէջ։ Բնաւ կարևոր գործ մը պատմուած չէ Կարապետին վրայ։ Իսկ Բոպիկ մականունն ալ, չեմք գիտեր թէ ինչ նշանակութիւն ունի, որովհետև կրնայ թէ իբր գովեստի անուն մեկնուիլ իբր ճգնասէր և խշտակեաց, և թէ իբր անարգական կոչում. իբր գծուած և խեղճուկ ապրող մը։

200. Կարապետին կաթողիկոսութեան օրերը, արևելեան գա-

ւառներու մէջ փառօք կը փայլէր Տաթեւացի Գրիգոր վարդապետ, որ Ապրակունեաց վանքէն Տաթեւ փոխադրուած էր արդէն (1396)։ Մեծ և բազմաթիւ աշակերտութիւն մը կազմած էր նա այդ հռչակաւոր վանքին մէջ, որ եղաւ իրօք, ոչ թէ Սիւնեաց միայն այլ և բովանդակ Հայոց կեդրոնական վարդապետանոցը։ Սարգիս Ապրակունեցիին ալ յաջորդած էր Վարդան Հոգոցեցին Սուխարու վանքը. և սորա Սալնապատի մէջ վախճանելէն ետքը, իրեն կը յաջորդէր Գրիգոր Խլաթեցին (1400)։ Ժամանակակիցներու մէջ նշանաւոր էր նաև Յովհաննէս Մեծոփեցին, Որոտնեցիին աշակերտներէն, որ Վասպուրականի վանքերուն շրջանը ընելով, ձեռնարկեց Մեծոփայ վանքին վերանորոգութեան (1402), ուր և եօթը տարի վարդապետեց, և մեծ վանքերու հաւասար գայն շքեղացուց։ Սուխարու վանքին աշակերտութենէն և Ապրակունեցիին ու Հոգոցեցիին ձեռնասուններէն տասուերկու վարդապետներ, որոց մին էր Թովմաս Մեծոփեցի պատմագիրը, Վարդան Հոգոցեցիին մեռնելէն ետքը խմբովին Տաթեւ գացած էին (1406), Տաթեւացիին մօտ կատարելագործուելու համար։ Ասոնք յորդորեցին ու համոզեցին Տաթեւացին իրենց Վասպուրականի կողմերը այցելել, որուն նա հաւանեցաւ, յիշելով մանաւանդ թէ Արճիշեցի ծագում ունէր ինքն ալ իւր հօրը կողմէն։ Նոր աւարտած էր Յովհաննէս Մեծոփի վանքին նորոգութիւնը, և Տաթեւացիին հասնելովը և Վասպուրականցի վարդապետներուն համախմբելովը, նոր փայլ ու հռչակ ստացաւ Մեծոփի վանքը (1409), ճիշտ այն միջոցին, յորում ըստ հաւանականագոյն հաշուի, տեղի ունեցած է Կարապետ Ա-ի կաթողիկոսութեան վերջը։

ՄԱՂԱԿԻԱ Ա. Ե. ՕՐՄԱՆԵԱՆ

ԳԻՏՈՒԹԵԱՆ ՏՈՆԸ [1])

Որովհետև մասնաճիւղերում կարդացուած զեկուցումները մասնագիտական նշանակութիւն ունին, իսկ բոլոր արտասանած ճառերի ու զեկուցումների ամենակարճ ռէզիւմէները կազմեցին 10 համար «ղնևնիկ» մօտ հազար երեսից բաղկացած, մենք անհնար ենք գտնում և աւելորդ այստեղ մանրամասն կանգ առնել։ Բաւական է ասել, որ համագումարի մասնաճիւղերի ժողովների թիւը հաւասար էր 214-ի, իսկ այդ ժողովներում տրուած զեկուցումների թիւը 696։ Մենք կդիմենք ընդհանուր և մի քանի միացեալ ժողովների նկարագրութեան, առաջ բերելով արտասանած ճառերի ռէզիւմէներ կամ կարճ բովանդակութիւնը։

Հետևեալ օրը դեկտեմբերի 29-ին, երեկոյեան Պոլիտեխնիչեսկի Մուզէումի մեծ լսարանում նշանակուած էր համագումարի և քնագիտութեան սիրողների ընկերութեան աշխարհագրական ճիւղի միացեալ ժողովը. ի նկատի կար լսել յայտնի Պրժևալսկու աշակերտ և օգնական V գնդապետ Պ. Կ. Կոզլովի վերին ասիական հետաքրքիր զեկուցումը նրա վերջին գիտական արշաւանքի (экспедиція) մասին միջին Ասիայում, որտեղից վերադարձել էր անցեալ աշնանը։

Այս ճանապարհորդութիւնը տևեց ճիշդ երկու տարի. դեռ Ասիայում եղած ժամանակ իւր ճանապարհորդութեան մասին Կոզլովը ուղարկում էր թղթակցութիւններ „Руск. Вѣд." լրագրին (տ. 1908-№ 218, 1909—№ 13, 19 և 163), որոնցով մասամբ մենք այստեղ կօգտուենք։

Արշաւանքի նպատակն էր ուսումնասիրել Մոնղոլիան, Կուկու-նոր լճի և արևմտեան Սրչուանի շրջակայքը։ Բայց Սրչուանի ուսումնասիրութեան փոխարէն արշաւանքը ստիպուած էր, ըստ Աշխարհագրական ընկերութիւնից ստացած պատուէրի, ուսումնասիրել աւելի մանրամասն կերպով Խարա-խոտո *) մեռած քաղաքը, որը, ինչպէս ասաց Ա. Ի. Իվանովը Խարա-խոտո քաղաքում գտած իրերի և գրքերի նշանակութեան մասին խօսելիս, Չինգիսխանի կողմից աւերածութեան էր մատնուել XIII դարում, այդ-

*) Մոնղոլերէն նշանակում է սև քաղաք։

[1]) Լումայ 1910 № 1

տեղ եղած պետութեան հետ միասին։ Այդ քաղաքի պեղումներից ստացած գրքերը գրուած են երեք լեզուով՝ չինական, տիբէթական և մի երրորդ, մեզ անծանօթ, լեզուով։ Պեղումները, առհասարակ, ցոյց են տալիս բարձր քաղաքակրթութիւնը, որը զարգացել է մի կողմից Չինաստանի, իսկ միւս կողմից արևմտեան (Պարսկաստանի և Էլլէնականութեան) քաղաքակրթութեան ազդեցութեան տակ։

Բայց անցնենք այդ էքսպէդիցիայի նկարագրութեան։

—Կեսխտայից անմիջապէս սկսւում է Մոնղոլիան, սկզբում անապատ, յետոյ լեռնային, որը դեռ հարուստ է բուսականութեան և կենդանական աշխարհով։ Այն կողմը սկսւում է Մոնղոլական Լխասսա—Ուրգան, ուր բնութեան պատկերը նկատելի կերպով փոխւում է, լեռները սկսւում են հարթուել, բուսականութիւնը աղքատանում է, իսկ բնակչութիւնը պակասում։ Այստեղ արդէն սկսւում է իսկական տնապատ Գոբին, վերջապէս գալիս է հարաւային Մոնղոլիան, որը ներկայացնում է աւազի ծով։

Մոնղոլիայի արմատական բնակիչները—մոնղոլներն են, որոնք որոշ չափով փոխուել են զանազան ֆիզիքական և ցեղական ազդեցութեան տակ։ Իսկ ընդհանրապէս, մեր տեսակէտից, մոնղոլների կենսական նիստուկացը աղքատ և ոչ նախանձելի է. աղքատ է և նրա ներքին, մտաւոր կեանքը, թէպէտ մոնղոլները տարբերւում են իրենց հարևաններից նրանով, որ հասել են համեմատաբար շատ աւելի բարձր մտաւոր զարգացման. ունեն սեպհական գիր, տպագիր օրէնքներ և այլն։

Անցնելով Մոնղոլիայից զանազան ուղղութեամբ, ուսումնասիրելով և դիտելով համեստ և նոյն ժամանակ իւր տեսակի բնութիւնը, ես հեռու էի մտքից գտնել մոռացուած քաղաք, որպիսին, իրօք գտայ, Էձին-գոլա գետի ներքևի մասում։ Մոնղոլ-տորգոուտները, որոնք եկել են այստեղ մ.տ 400 տարի առաջ Կօբուկ-Սայրեաչժունգարիայից, լաւ ծանօթ են Խարա-խոտո քաղաքի հետ Սրանց ասելով նախնիները գալով այստեղ սև քաղաքը գտել են ներկայ դրութեան մէջ։

Ճանապարհորդի ուշադրութիւնն են գրաւում Սուբուրգաները, կամ շիրիմներ, որոնք դասաւորուած են դէպի պատմական քաղաքը տանող ճանապարհին։ Քաղաքը պատած է պատով և ներսի քառակուսիի կողմերը հաւասար են 1/3 վերստի։ Գլխաւոր մուտքը գտնւում է արևելեան կողմը։

Ահա այս քաղաքումն էր գտնուած այն հարուստ նիւթերը, որոնց մասին վերը խօսուեց և որոնք կազմելով տասը արկղ մի

մի փութ կշռով, իւր ժամանակին ուղարկուեց Պ. Բուրգի գիտութեանց Ճեմարանին և Աշխարհագրական ընկերութեան։

Անցնելով հարաւ-Ալշանի անապատը և արևելեան Նանշանը, Էքսպէդիցիան հասաւ Կուկու-Նոր լճին։ Նպատակն էր անցնել Կոյսու խորհրդաւոր կղզին։

Դասախօսը նկարագրեց անցած տեղերը, պատահած քաղաքները և բուդդայական վանքերը։ Մատնացոյց արեց իւր հիւսիսային Տիբէթ ճանապարհորդութիւնը և իւր ընկերների խորհրդաւոր կղզի գալը, ուր նրանք գտել էին երեք ճգնաւոր-լամա...

Լրացնելու համար այս գիտական արշաւանքի ընդհանուր պատկերը մենք մատնացոյց կանենք և Ա. Ա. Չերնովի դեկտեմբերի 31-ին կարդացած զեկուցումը «անապատ Գոբիի ռէլէֆը»։ Չերնովը Կոզլովի աշխատակիցն էր, որը հասաւ ստուարակտաւի նաւակով Կոյսու խորհրդաւոր կղզին։ Երբ արշաւանքի գլխաւոր պարտաւորութիւնը կատարուած էր, վերջինը բաժանուելով երկու անգամ կտրեց անցաւ Գոբի անապատով, ուսումնասիրելու և այդ մասը։

Նոյն ժողովում Տոմսկի համալսարանի պրոֆ. Սապոժնիկովը կարդաց իւր ուսումնասիրութիւնները մոնգոլեան Ալտայի վերաբերմամբ։

Միջին Ասիայի աւազներից ու անապատներից ունկնդիրների ուշադրութիւնը բերեց մօտիկ արևելքի-Կովկասի բարձրագոյն գագաթը-Էլբրուսը—երիտասարդ ճանապարհորդ Վ. Վ. Դուբեանսկին, դէպի ուր վերելք էր կատարել 1908 թուի ամառը։

Միմիայն 1868 թուին Ֆրեշվիլդին յաջողուեց առաջին անգամ հասնել Էլբրուսի արևելեան գագաթին. 1874 թուին Գրովէն նորից բարձրացաւ։ Դէշին 1875 թուին, Պաստուխովը 1890 թ. նոյն թուին և Մերցբախէրը, որը երկրորդ անգամ բարձրացաւ 1896 թուին, իսկ 1908 թուին Էլբրուսի գագաթը բարձրացաւ, թէպէտ և դժուարութեամբ, վատ հանգամանքներում լինելու պատճառով, Դուբեանսկին, որը կենդանի և պատկերաւոր կերպով նկարագրեց իւր այդ ճանապարհորդութիւնը. 1908 թուի յունիսի 28 դուրս գալով Պեատիգորսկից նա, ինչպէս նկարագրում էր, օգոստոսի 2-ի ցերեկը 4 ժամին Էլբրուս լեռան ամենաբարձր գագաթի վրայ էր գտնւում, ուր մնացել էր 55 ր։

Դեկտեմբերի 30-ին միացեալ ժողովում երեք կարդացած ճառերից մատնացոյց կանենք միմիայն պրոֆ. Սոկոլովի՝ երկրի հասակի մասին կարդացած զեկուցումը։

Ճառախօսը մանրամասն կերպով ծանօթացրեց այն խնդրի հետ թէ բադիոակտիւութեան մասին նոր ուսուցումը երկրի ներ-

քին տաքութեան և հասակի մասին նոր հայեացքներ կազմելու վրայ որպիսի ազդեցութիւն ունեցաւ։ Բոլոր բադիոակտիւ մարմինները արտադրում են անընդհատ տաքութիւն. երկրի ներքին տաքութիւնը, որի մասին մենք գիտենք երկրի խորքում բարձրացող տաքութիւնից և հրաբղխականութիւնից, բացատրւում էր մինչև այժմ նրանով, որ երկիրը մի ժամանակ հալուած (расплавленный) դրութեան մէջ էր։ Ռուտերֆորդը առաջինը մատնացոյց արեց այն խնդիրը թէ՝ բաւական չէ արդեօք ներքին տաքութիւնը բացատրելու այն տաքութիւնով, որը արտադրւում է երկրում գտնուող բադիով և ուրիշ բադիոակտիվնիւթերով։ Ապա Ստրուտտը և ուրիշները հետախուզեցին բադիի բովանդակութիւնը զանազան լեռնային հանքերում, ծովի յատակի վրայ և ովկիանոսի ջրերում, երևաց որ թէպէտ առանձին միաւոր չափում բադիի բովանդակութիւնը չնչին է, բայց և այնպէս այդ քանակութիւնը աւելի քան բաւական է վերականգնելու այն տաքութիւնը, որը երկիրը տալիս կամ արտադրում է դէպի մթնոլորտը։ Եթէ ենթադրենք, որ բադիի բովանդակութիւնը կամ աւելի ճիշդ քանակը մեծ խորութեան մէջ նոյնն է որչափ և երկրի երեսին է, ստացւում է մինչև անգամ տաքութեան ահագին մեծացում. մնում է ուրեմն կամ ընդունել, Ստրուտտի նման, որ երկրի խորքը այլևս բադիի չի պարունակում իւր մէջ, կամ, երկիրը տաքութեան հաւասարակշռութեան մէջ չի գտնւում, այլ շարունակում է տաքանալ, միւս խնդիրը-երկրի հասակի մասին-բադիի ուսումնասիրութեան արդիւնքից օգտուելով, նոյնպէս բոլորովին նոր որոշում է ստանում։ Լորդ Կելվինի հաշիւները հիմնուած երկրի սառչելու վրայ վերացւում են. վերացւում է և այն հակասութիւնը, որ առաջ էր գալիս այդ հաշուի արդիւնք 20—40 միլիոն և երկրաբանութեան փաստերի պահանջած 100 միլիոն տարիների մէջ։ Այժմ հնարաւոր է նոր միջոցով որոշել առանձին հանքերի հասակը ուրեմն և երկրաբանական շրջանների, դրանց մէջ պարունակուող հելիումի (He) քանակով, որը, ինչպէս յայտնի է, ստացւում է բադիի բաժանումից։ Այս եղանակով օր. Ստրուտտը որոշեց տորիանիտ հանքի համար 240 միլիոն տարի, ուրեմն երկիրը յամենայն դէպս այդ հասակից աւելի ծեր է։

Երկրորդ ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ յունուարի 2-ին ցերեկը «բլագորոդնոէ սոբրանիէ»-ի նոյն մեծ դահլիճում։

Այս ժողովին կարդացուեց երեք ճառ, Պրոֆ Բորդմանը՝ «էլէքտրականութիւն և լոյս». պրոֆ. Վէրիգոն աղօտի դերի մասին կենդանական օրգանիզմի նիւթերի փոխանակութեան մէջ». և պրոֆ. Դանիլևսկին՝ «մտքի և կամքի զարգացման հիմնական բնա-

խօսական օրէնքը»։ Վերջին ճառը, կարելի է ասել լրացուցիչ է, կամ աւելի ճիշտ տէօրէթիք թեզիսներ են այն գործնականապէս ապացուցած ճշմարտութիւնների, որոնց մասին առաջին ժողովում զեկուցեց ակադեմիկոս Պաւլովը։

Այս ժողովում զեկուցուեց մի քանի նոր ստացուած հեռագիրների մասին, ի միջի այլոց պրոֆ. Մենզբերի հեռագիրը, որը հիւանդութեան պատճառով անկարող էր մասնակցել. համագումարի քարտուղար Լայստը զեկուցեց և մի քանի մասնաճիւղերի որոշումները. դրանց մասին մենք կխօսենք վերջը։

Պրոֆ. Վէրիգօի ճառից յետոյ նախագահը կարդաց Տիմիրեազևից ստացած հեռագիրը, յայտնեց որ համագումարի խորհուրդը որոշել է հեռագիր ուղարկել Սարատովի նոր համալսարանին. բացի դրանից յայտնեց և «Ռուս ընկերակցութեան» նախագիծը կազմելու համար կազմուած կոմիսսիայի մասին, ուր ընտրութեամբ մտել են պրոֆ-ներ Անուչին, Ա. Վ. Վասիլև, Բորգման, Վերիգօ, Վերնադսկի, Ս. Զալէսսկի և Շիմկևիչ։

Վերջը նախագահը յայտնեց նաև, որ Թիֆլիսից ստացուել է մի քանի հրաւէր հետեւեալ XIII համագումարը այնտեղ ժողովելու. հրաւէրները ուղարկուած են՝ Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատարից, կանանց բարձր կուրսերի դիրեկտորից ե տեղական բնութիւնը ուսումնասիրող, բժշկական գիւղատնտեսական և ուրիշ ընկերութիւններից. այս խնդրի մասին համագումարի խորհուրդը կխորհրդակցէ և իւր կարծիքը կ՚յայտնի վերջին ընդհանուր ժողովում։

Յունուարի երեքի երեկոյեան պոլիտեխնիք. Մուզէումում կայացաւ միացեալ նիստ համագումարի և բնութիւնը ուսումնասիրողների ընկերութեան (общ. исп. пр.)։ Այս ժողովում կարդացած երեք ճառից մատնացոյց կանենք միմիայն Ն. Ա. Մորոզովի ճառի վրայ «նիւթի էվոլիւցիան մոլորակների վրայ»։

Էլէքտրօնական թեորիայի մասին կարճ ակնարկը տալով, ճառախօսը միտք արտայայտեց, որ էլէքտրօնները կարելի է քննել իբրև եթէրի կոսմիքական նիւթի էվոլիւցիայի արդիւնք։ Էլէքտրօնները իրենք ևս ծառայում են իբրև նիւթ, որոնցից կազմուում են քիմական տարրերի մասնիկները։ Վերջինները երկար էվոլիւցիայի ենթարկուեցին հասարակ ձևերից մինչև աւելի բարդ ծանր մետաղէ տարրեր և ապա օրգանական նիւթի մասնիկներ։ Ժամանակակից քիմիական տարրերը բոլորովին նոյնանիշ են կենդանական և բուսական զանազան ձևերին։ Աստղային երկնքի քարտէզը ուղղակի մատնանշում է, որ անօրգանական աշխարհը նոյնպիսի էվոլիւցիայի էր ենթարկուում հազարաւոր տա-

րիների ընթացքում. որպիսի էվոլիւցիայի էր ենթարկւում ապագայում և օրգանական աշխարհը։ Մթնոլորտի մոլորակները ներկայացնում են զարգացման զանազան աստիճաններում գտնուող աշխարհներ։ Համաձայն Լոկիէրի կազմած տղիւսակի, նրանք բաժանւում են 9 խմբի կապտագոյն աստղերից սկսած մինչև մոյգ-կարմիր Անթարէսի տեսակի (կարիճի աստեղատան)։ Մի խմբից միւս խումբն անցնելիս նիւթի քիմիական բաղադրութիւնը աստիճանաբար բարդանում է։ Պրոտոջրածինի, պրոտոհելիումի և մի ուրիշ անյայտ նիւթի պարզ գծերից մինչև ծանր հանքերը. իսկ Անթարէսի սպէկտրում արդէն երևում են ածխաջրածնի գծեր, որոնք ցոյց են տալիս օրգանական կեանքի սկսուելը։ Նիւթի այս աստիճանաբար բարդանալու պրոցեսը, զեկուցողը ցոյց տուեց պատկերացոյց պաստառի վրայ առանձին ուրուագծով։ Ապա Մորոզովը բացատրեց քիմիական տարրերի պարբերականութեան իւր թէօրիան, որը կազմուած է աւելի ընդհանուր սկզբունքների վրայ, քան Մէնդէլէևի սիստեմը, որը նոր թէօրիայում մտնում է իբրև մի մասը աւելի ընդարձակ ամբողջութեան։ Հետաքրքրական է, որ տուած ցուցակը մատնացոյց է անում աւելի թեթև նիւթի գոյութեան վրայ, քան ջրածինն է։ Այդպիսին գտնուած է սպէկտալ անալիզով մի քանի կապոյտ աստղերում և մառախլապատութեան մէջ ստանալով պրոտոջրածին անունը։ Վերջը ճառախօսը կանգ առաւ ռադիոակտիւութեան վրայ, որի ուսումնասիրութիւնը վերջերս իբրև նոր ապացոյց հանդիսացաւ քիմիական տարրերի էվոլիւցիայի թէօրիային (մի քանի տարրերի լուծումը աւելի պարզ նիւթերի —հելիում (He) կամ լիթիումի (Li) պղնձի (Cu) փոխակերպութիւնը)։ Մորոզովի ցուցակը մատնացոյց է անում կադմիումի (Cd) արծաթի (Ag) և սնդիկի (Hg) ոսկու (Au) փոխակերպութեան հնարաւորութիւնը։ Մորոզովը իւր զեկուցումը վերջացրեց ցանկութիւն յայտնելով, որ գիտութիւնը կնպաստի մարդկութիւնը դէմոկրատացնելու, ազատելու վերջինը նրան կաշկանդող ճիրաններից և երջանիկ դարձնելու։

Մորոզովը ամբիոն բարձրացաւ և իջաւ երկար և անվերջ ծափահարութիւնների ձայների տակ։

Առաջբերենք և մի ուրիշ զեկուցումի ռէզիւմէն կարդացուած նոյն օրը։ Մոսկ. համ. Պրոֆ. Պ. Ն. Լեբեդևը Ֆիզիքայի մասնաճիւղի նիստում կարդաց իւր նոր աշխատանքի մասին։ Մակսվէլլի թէօրէթիկ ենթադրութիւնը թէ լոյսի ալիքը ունի ճնշող յատկութիւն իրերի վրայ, առաջին անգամ գործնական կերպով ապացուցեց Լեբեդևը. որի մասին և զեկուցեց 8 տարի առաջ XI դ համագումարում։ Այժմ նոյն Լեբեդևը ապացուցեց լոյսի ալիքի ճնշումը

գաղերի վրայ և մինչև անգամ կարողացաւ չափել այդ ճնշումը ճշտութեամբ, եթէ լոյսը ճնշում է գազը, այդ նշանակում է, որ գազի մասնիկները, որոնց միջով անցնում է լոյսի փունջը, տարւում են լոյսի ալիքով։ Այսպէս, օրինակ, գիսաստղերի պոչերը, առաջինների արևին մօտենալիս միշտ ուղղուած են արևի հակառակ կողմ, և այդ երեւոյթը արդէն 1617 թուին աստղաբաշխ Կէպլէրը բացատրեց նրանով, որ գազերը, որոնցից գիսաստղերի պոչերն են կազմուած, յետ են մղւում արևի լոյսով։ Այս միտքը Կէպլէրը արտայայտեց Հալլէի գիսաստղը դիտելով. Հալլէի այդ գիսաստղը, որը այս տարի գարնանը նորից կերևայ երկնքի վրայ, լաւագոյն ապացոյցը կլինի լոյսի ճնշման գազերի վրայ։ Իսկ ինքը պրոֆ. աշխատում էր յատուկ գործիքի վրայ։ Ուսումնասիրութեան եղանակը խիստ պարզ է, բայց և այնպէս կատարւում էր հինգ տարի։

Յունուարի 3-ին ազգագրական մասնաճիւղի ժողովում Լազարեան ճեմարանի դիրեկտոր Միլլէրը կարդաց՝ «Կովկասի լեզուագիտութեան ազգագրական նշանակութիւնը ներկայում»։ Այս զեկուցումը այնքան մասնագիտական էր, որ այս ընդհանուր հայտնութիւնը կլոր ակնարկում դժուար է երկար կանգ առնել։ Յարգելի հեղինակը մատնացոյց անելով Կովկասի ազգերի բազմազանութեան վրայ, բնորոշեց գլխաւորապէս «Կովկասեան» լեզուները՝ հարաւային (քարթվէլների) արևելեան լեռնականների (լէզգիներէն) և արևմտեան լեռնականների (Աբխազ Չէրքէզերէն), Կովկասեան լեզուագիտութեան հետաքրքրութիւնը արևմուտքում ծագեց այն ժամանակից, երբ ասորագէտները գտան մի քանի նոր լեզուներ, որոնք, ինչպէս ցոյց տալիս վերջին ուսումնասիրութիւնները, մօտ են Կովկասի լեզուներին։ Բէֆէրէնտը էտրուսկների լեզուի Կովկասի լեզուների հետ ունեցած կապի կարծիքը յայտնեց և վերջը ցանկացաւ, որ Կովկասեան լեզուները ուսումնասիրելիս առանձին ուշադրութիւնը դարձուի հնչման օրէնքների և քերականութեան վրայ։

Բայց ահա և յունուարի 6-ը. Նոյն մեծ դահլիճը, նոյն ընդհանուր դաղափարով բազմութիւնը։ Շատերը վերջին անգամն էին տեսնւում և միմեանց հրաժեշտ տալիս, շատերը բաժանւում էին մի քանի տարով։ Հրճուանքն ու իրարից հեռանալու անախորժ հեռանկարը միաժամանակ գոյութիւն ունէին ամեն մէկի մէջ։ Զանգը հնչեց և բոլորի ուշադրութիւնը լարուեց։

Սարատովի համալսարանի պատասխանը կարդալուց յետոյ ամբիոն բարձրացաւ պրոֆ. Ա. Ա. Էյխէնվալդը և խօսեց «Նիւթի և Եռանդի» մասին։

—Պարզասիրտ մարդուն աշխարհը երևում է ինչպէս մի ամ-

բողջութիւն և այդ ամբողջութեան տպաւորութիւնը աւելի ուժեղ և էստէթիկ բաւականութիւն ստանալիս։ Դիտութիւնը ստիպուած է աշխարհը բաժանել մասերի, ամեն մի մասը առանձին ուսումնասիրելու և մինչև անգամ ամեն մի մասնագիտութեան մէջ հետևեալ ստորաբաժանումներ է առաջ գալիս։ Այսպէս՝ ֆիզիքան բաժանւում է մեքենագիտութեան, ձայնագիտութեան և տեսագիտութեան. ևն։ Բայց վերջի վերջոյ այդ մասերը ձգտում են միանալ մի ընդհանուր գիտակցութեան մէջ, ֆիզիքայի մէջ ամեն ինչ երկու հիմնական հասկացողութեան էր դիմում՝ նիւթի և եռանդի։ Չի հասել այստեղ սահմանը։ Դիւբուա Ռայմոնը իւր նշանաւոր ճառի մէջ առաջ բերեց հիմնական հարցեր, որոնց վճռելը նա յայտարարեց անհասանելի գիտութեան համար. այդպիսի հիմնական հարցերի թիւը, որոնց մասին նա յայտարարեց նշանաւոր ignorabimus-ը (մենք երբէք չենք գիտենայ) նա հասցրեց եօթի։ Այդպիսի պեսսիմիզմի դէմ խօսեց զեկուցողը։ Չի կարելի ասել թէ որչափ կզարգանայ գիտութիւնը ապագայում, բայց և այնպէս եթէ ընդունենք անվճռելի պրոբլէմները, ինչու անպայման եօթը, ինչու ոչ աւելի կամ ոչ պակաս։ Անվճռելի խնդիրների թիւը գերադասելի է պակասեցնել. այդ բանին ապացոյց է ֆիզիքան, որը միացրեց նիւթի և եռանդի հասկացողութիւնը։ Դրանց մէջ միջնորդ հանդիսացաւ էլէքտրամագնիսականութեան տարածութեան հասկացողութիւնը, որը կարող է գոյութիւն ունենալ առանց էլէքտրականութեան և առանց նիւթի։ Դա-առանց նիւթի էնէրգիան է։ Այսպէս լոյսի էնէրգիան կամ եռանդը (իսկ լոյսը էլէքտրոմագնիսական երևոյթ է) արևից մինչև երկիր գտնւում է ազատ տարածութեան մէջ, իսկ մենք այժմ գիտենք և նիւթից ազատ էլէքտրականութիւնը։ Այդպիսի մաքուր էլէքտրականութիւն մենք ունենք Կրուկսի խողովակում (Հէյսլէր, Ռէօնտգէն) այսինքն կատոդի ճառագայթներում։ Այդ ճառագայթները ունին իներցիայի յատկութիւն, բայց ոչ նիւթական այլ էլէքտրոմագնիսական իներցիայի։ Երևում է, որ էնէրգիան նոյն յատկութիւններն ունի ինչ, և նիւթը։ Նա գրաւում է որոշ տեղ տարածութեան մէջ, ամեն տեղ ունի որոշ հոծ կարծրութիւն, ընդունակ է միմիայն անընդհատ շարժման չի կարող կպչել մի տեղ և գոյանալ ոչնչից մի ուրիշ տեղ և վերջապէս, ունի իներցիայի յատկութիւն։ Վերջերս նրան սկսեցին վերագրել և ատոմիստիկ կազմուածք։ Այս օրինակը ցոյց է տալիս, թէ ինչպէս գիտութիւնը աշխարհը բաժանելով, ձգտում է ստեղծել նրանից մի նոր ամբողջութիւն։ Դիտնականը նման է ճանապարհորդի, որը աւելի ու աւելի է բարձրանում սարը, շրջապատող աշխարհի աւելի լայն պատկերը ստանալու և, երբ բա-

ւակն բարձր լեռներ բացակայում են, թռչում է թևերի վրայ, բայց ոչ ֆանտաստիք թևերի, այլ թէօրետիք օրգանապէս մնուած թևերի վրայ։ Բայց բացի թևերից պէտք են և արծուի սուր աչքերը, բոլոր նրբութիւնները նկատելու, և իրօք գիտութեան սրամտութիւնը աճում է արագ կերպով։ Չէ որ անցեալ տարի Ռէզէդորֆին աջողեց էլէքտրոմէտրի օգնութեամբ հելիումի մասնիկները համարել։ Խնդիր է ինչի է պէտք մեզ աշխարհի այդպիսի ընդհանուր և ամբողջական պատկերը։ Ասում են այդպիսով մտածողութիւնը աւելի տնտեսական է դառնում։ Այդ այդպէս է, բայց դա միակ և գլխաւոր պատճառը չէ, որ ոգևորում է հետախուզողին։ Նա ձգտում է դէպի էստէտիք բաւարարութիւն, նա ցանկանում է լսել աշխարհների ներդաշնակութիւնը, Այն ներդաշնակութիւնը, կասենք մենք, որը ինքը էյնշտէյնվալդը այնքան պատկերաւոր կերպով նկարագրեց մեր վերը բերած պօլօնական ոտանաւորով *)։ Հետևեալ ճառը խօսեց պր. Զուպրովը «վիճակագրութեան մէջ թէօրէթիկ մտքի նոր ուղղութեան շրջանից» վերնագրի տակ։

Նախագահը յայտարարեց, որ հետևեալ համագումարի տեղը ընտրուած է Թիֆլիսը 1911 թուին։ Ապա միաձայն ընդունուած էր «Ռուս ընկերակցութեան» համագումարի խորհրդի կողմից վերջնականապէս մշակած «պօլօժէնիէն...

Պրոֆ. Լէյստը նկարագրեց համագումարի պատմութիւնը և կարգադրիչ կոմիտէի նախապատրաստական աշխատութիւնները, նրա դիմումները նախարարութեան, որոնցից մինը մինչև այսօր էլ մնում է անպատասխան, իսկ միւսները մերժուեցին. յետոյ առաջ բերեց կարճ թուական փաստեր համագումարին գրուողների թուի (5303), նիստերի (214) և կարդացած զեկուցումների (696) մասին. մատնացոյց արեց և համագումարի առթիւ բացուած ցուցահանդէսների։

Պրոֆ. Գ. Ա. Կաժեւնիկովը կարդաց մասնաճիւղերի կազմած և համագումարի խորհրդից ընդունած ռէզոլիւցիաները, որոնցից առաջ ենք բերում միմիայն մի երկուսը։ Համագումարը իւր յոյսն ու համոզմունքն է արտայայտում, որ պետական դումայում և խորհրդում համալսարանական նոր օրէնսդրութիւնը, մշակելիս համալսարանների կթողնուին նրանց նշանակութիւնը ոչ թէ իբրև բարձրագոյն դպրոցների, այլ և իբրև Ռուսաստանում գիտական գործունէութեան գլխաւոր կենդրոնների։ Այլ մասնաճիւղը գտնում է անյետաձգելի նոր բարձր գիւղատնտեսական դպրոցների բա-

*) Օգտուել ենք Русск. вѣд.-ից.

ցումը. ապա ցանկութիւն՝ յայտնուած էր բուսականութեան այն կտորների պահպանման և խնամքի մասին, որոնք որոշ հետաքրքրքրութիւն են ներկայացնում բուսաբանական-աշխարհագրական տեսակէտից։

Նիստը և առ հասարակ համագումարը փակելուց առաջ նախագահը առաջարկեց շնորհակալութիւն յայտնել այն բոլոր հաստատութիւններին և անձանց և մանաւանդ Մոսկուայի համալսարանին, պոլիտէխնիքական Մուզէումին, Մոսկ. բոլոր բարձր դպրոցներին և այլն են, որոնք իրենց բնակարանները բաց արին համագումարի կարիքների համար և այն գիտնականներին, որոնք սիրալիր կերպով ընդունեցին ժողովներում ճառելու առաջարկը։

«Թոյլ տուէք, պարոններ, վերջացրեց իւր խոսքը նախագահը, ցանկութիւն յայտնել, որ բոլորդ պահպանէք լաւագոյն տպաւորութիւնները, որ դուք տարածէք ամբողջ Ռուսաստանում այն լաւագոյնը, ինչ որ կտանէք այս համագումարից, և որ այս գիտական աստառի վրայ ընկերական շփման հետևանքը լինի ռուս գիտութեան և ռուս դպրոցի նոր աճումը և նոր զարգացումը։

Յայտարարում եմ ռուս բնագէտների և բժիշկների XII համագումարը փակուած»։

Մի քանի վայրկեանի խորը լռութիւնը, կարծէք արտայայտում էր բոլորի այն անախորժ միտքը, թէ այդ արտասանած խոսքերով ամեն մինը կորցնում է մի ինչ որ անբացատրելի աննիւթիր, որի մասին յիշողութիւնը, իրաք, երկար ժամանակ պիտի ուղեկցէ ամեն մէկին։

Համագումարի ընդհանուր պատկերը լրացնելու համար, մեզ մնում է երկու խոսք ասել այն ցուցահանդէսների մասին, որոնք, ճոխացնելով համագումարը, լրացնում էին նրա նշանակութիւնը։

Համալսարանում սարքած էին հետևեալ ցուցահանդէսները.

Թռչնարուեստի ցուցահանդէսը դասաւորուած էր համալսնոր շէնքում։ Գլխաւոր մուտքի սանդուխտների վրայից թեատրած ծածանուում էր Տէրեշչենկոի սիստեմի աէրոպլանը, որը շինուած է Կիևում 23 օրուայ ընթացքում։ Աւելի բարձր, երրորդ յարկում, գտնուում են երկու թեթև ձևեր (տարազներ) «դուքս» և «կայսեր. տեխնիքական դպրոցի սիստեմի պլանները։

Ապա շարքով դասաւորուած են զանազան սիստեմի մոդելներ, լուսանկարներ, աէրոպլանի մասեր, նկարներ...

Բաւական մեծ տեղ է գրաւում օդի ընդդիմադրութիւնը ուսումնասիրելու համար խողովակը, որ սարքուած է Մոսկուայի համ. համար պրոֆ. Ժուկովսկու հսկողութեան տակ։ Բացի այդ ամենից այս ցուցահանդէսին յատկացուած է մի ամբողջ

սենեակ, որը երբէք յաճախողների պակասութիւն չի զգում։ Այս սենեակում թռչնարուեստը ներկայացրած է ամբողջութեամբ, սկսած Լիլիէնտալի պատմական թեւերից, որոնց վրայ փորձեր անելիս այնքան ցաւալի վերջ ունեցաւ անվախ ուսումնասիրողը, և որը իւր անաջող փորձից առաջ եկած մահից երկու ժամ առաջ, արդէն վնասուած վիճակի մէջ բացագանչեց՝ «Մի վախենաք թռչել, դա այնքան էլ դժուար չէ»։ և մինչև մեր օրերում նորանոր փորձերի արդիւնքները։ Այցելողներին բացատրութիւններ էին տալիս ուսանողներն ու մասնագէտները։ Այստեղ կարելի է պատահել Ֆարմանի, Ռայտի, Բլէրիօի, Սանդոս-դիւմոնի մեքենաների տարազները և դրանց շարքում օդային օձեր, հին և նոր ձևի։

Բաւական հետաքրքիր է պրոֆ. Ժուկովսկու թեւերի շարժողութիւնը ուսումնասիրելու մեքենայի ձևը և Սպրցինի նոյնանման մեքենան միջատների համար։

Նոյն շէնքում և յարկում մի ընդարձակ սենեակ գրաւում է մաթեմատիկական և մեքենագիտական տարազների ձևերը, որոնք գլխաւորապէս գործածւում են մաթեմատիկայի և մեքենագիտութեան օրէնքները ապացուցանելու համար։

Բաւական ընդարձակ տեղ է գրաւում «Գրոսման և Կնէբել» տեսական ձեռնարկների ֆիրմայի ցուցահանդէսը։ Այստեղ կարելի է գտնել բնական գիտութեան դասատուութեան վերաբերեալ ամեն մի նոր և նպատակայարմար բան։ Մի սենեակ յատկացուած է աստղաբաշխութեան։ Աչքի են ընկնում մոլորակների լուսանկարները, որոնցից լուսնի լուսանկարի տրամագիծը հաւասար է մօտ մի մէտրի, ալպինիստական երկու ցուցահանդէս է, դասաւորուած երկու սենեակում։ Մինը «ռուս լեռնային ընկերութեան», երկրորդը «կովկասեան լեռնային ընկերութեան»։ Թէ մինը և թէ միւսը հարուստ է բազմաթիւ լեռնային գեղեցիկ տեսարանների լուսանկարներով։ Այստեղ կարելի է տեսնել նոյնպէս և ճանապարհորդութեան ժամանակ գործածուող անհրաժեշտ իրերն ու գործիքները, որոնցով օգտւում է ամեն մի ճանապարհորդ, զանազան գիտական ուսումնասիրութիւններ կատարելու։

Համալսարանի ֆիզիքայի ճեմարանի շինութեան վերին յարկում բացուած էր ֆիզիքական գործիքների ցուցահանդէս։

Սիմենս և Գալսկէ, Ռէյնիգէր Լիպշից և Լիֆշից, Շվարէ և Տրընդինի ֆիրմաների էքսպոնատներն էին ցոյց դրուած ուր նոյն պէս տրւում էին մանրամասն բացատրութիւններ։ Վերջին երկու ֆիրման բացի դրանից հրաւիրում էին անդամներից մասնագէտներին, նայել իրենց խանութներն ու գործարանը։ Ենայի յայտնի

Ցէյսսի ֆիրման մի առանձին սենեակում ի ցոյց էր դրել իւր գործարանի արտադրութիւնները։ Նոյն ֆիրման ներկայացուած է և մի ուրիշ տեղ, որի մասին մենք դեռ խօսենք։ Ի միջի այլոց այս սենեակում դրուած է մի մանրադիտակ ուլտրամանուշակագոյն ճառագայթներով մանրալուսանկարելու համար։ Ուշադրութեան արժանի է և ուլտրամանրադիտակը, որի մի ուրիշը դրուած է և քիմիական աշխատանոցում։

Համեմատական մարդակազմութեան ճեմարանում դրուած են մի շարք իւղաներկ պատկերներ անասնագրութեան վերաբերեալ, որ նկարել է պրոֆ Մենզբերի ցուցումներով նկարիչ Վ. տագինը։ Սա մի գեղեցիկ և գիտական փաստերի վրայ հիմնուած մի արժէքաւոր սերիա է, որը ընդօրինակութեամբ, ինչպէս ասում են, պէտք է մտնի Մենզբերի մի աշխատութեան մէջ կենդանիների աշխարհագրութեան վերաբերեալ։

Ամեն մի էստէտիքական տպաւորութիւն առանձին նշանակութիւն է ստանում, երբ անհատը ինքը անձամբ է կրում այդ տպաւորութիւնները, մանաւանդ երբ հարցը գեղարուեստական նկարների է վերաբերում, այդ իսկ պատճառով մենք չենք խօսում աւելի մանրամասն այդ պատկերահանդէսի մասին։

Բնախօսութեան և հիւսուածաբանութեան մասում սարքուած էր մանրադիտակների հարուստ ցուցահանդէսը։ Այստեղ ի ցոյց էր դրուած և մի շարք գունաւոր մանրալուսանկարչութիւններ։ Այս ցուցահանդէսը միշտ բաւական հետաքրքրուողներ էր գրաւում, որովհետև Ռուսաստանի և Եւրոպայի ուրիշ յայտնի ֆիրմաների գործիքները ունենալով, մանրագիտական արուեստի վերջին խօսքն էր ներկայացնում։

Այստեղ էր ներկայացրած և Ցէյսսի ֆիրման։ Այստեղ տրրւում էր մանրամասն բացատրութիւններ տեսագիտական ապակիներ պատրաստելու արուեստին վերաբերեալ։ Բացի թուածներից բացուել էին և հետևեալ ցուցահանդէսները՝

Մոսկ. համալս. առողջապահ. ճեմարանում «Առողջապահական ցուցահանդէս». հողմագիտական ցուցահանդէս։

Մաթեմատիկական ընկերութեան ցուցահանդէս, վիճակագրութեան ցուցահանդէս. հակաթաքախտային ցուցահանդէս, որը ահագին հետաքրքրութիւն է ներկայացնում, ամփոփելով կարելոյն չափ թուերում մարդկութեան այդ մեծ ախտի ներկայ դրրութիւնը եւրոպական լոլոր երկրներում։

Բացի այդ ամենը Մոսկ. համալս. համագումարի անդամների համար բացել էր իւր հարստագոյն գիտական հաստատութիւններն ու թանգարանները։ Կենդանաբանական մուզէումը։

Ֆիզիքայի ճեմարանի ընդարձակ աշխատանոցները (лабораторія)։ Երկրաբանական և հանքաբանական թանգարանը։ Մարդաբանական և ազգագրական թանգարանները. հողագիտութեան ինստիտուտի (агрономич.) թանգարանը։ Բաց էին նոյնպէս՝ Մոսկ. հասարակական և Ռումեանցևի պատմական մուզէումները, բոլոր պալատները. պօլիտեխնիքական մուզէումը, առողջապահութեան մուզէումը, Արէգիսկովի պատկերահանդէսը. կենդանաբանական այգին, բուսաբանական այգին, և այն ամեն տեխնիքական հիմնարկութիւնները, որոնք որոշ հետաքրքրութիւն են ներկայացնում։

Բաց էին և բոլոր բարձրագոյն դպրոցների թանգարանները ու գիտական հաստատութիւնները։

Այս բազմազանութեան մէջ անկատելի կերպով անցան համագումարի օրերը տալով հարուստ նիւթ և աշխատելու նոր եռանդ։

Վերջացնելով այս խիստ համառօտ ակնարկը, ցանկանք որ հետևեալ համագումարի ժամանակ, որ լինելու է Թիֆլիսում, Կովկասի մայրաքաղաքում, համագումարի անդամները դրուած լինեն նոյնպիսի բարեյաջող և նպաստաւոր հանգամանքներում, որպէս զի Կովկասից ցրուելով դէպի լայնատարած Ռուսիան, համագումարի անդամները ճիշտ և ցանկալի լոյսը սփռեն Կովկասի քաղաքակրթութեան մասին, ոչնչացնելով զանազան նախապաշարումները։

Ա. Վ.

Մոսկուա

ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹԻՒՆ [1]

ՀԻՆԳ ԴԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԿԱՐԼ ԼԱՄՊՐԵԽՏԻ

Այս միջոցում կալուածատիրական և ճորտական դրութիւնների մէջ մի փոփոխութիւն էր առաջ եկել, որը պատրաստ էր լրանալու. սա մի հոգեկան կեանքի, այս անդամ բոլորովին նոր, սովորական ժամանակին պատկանող, հասարակական հիմք դարձաւ։ Կալուածատէրերը չէին բաւականացել նրանով, որ իրար մէջ միատեսակ մասսա, միատեսակ, բնական տնտեսութեան հետևող կապալառուներ զարգացնեն։ Նրանք ճորտերի հետ կապուած էին իրենց ծառայեցնելու պահանջներով և այս ծառայութիւնը նրանք աստիճանների բաժանելին և առաջ բերին մի շարժում, որի հետևանքն եղաւ գիւղացիական ցածր ծառայութիւն կատարողներին կից աւելի բարձրների առաջ գալը, այսինքն պատերազմական ծառայութիւն կատարողների մի շերտ, որը իրենից ստոր շերտից բաժանուած էր, որը ծգտում էր ճորտութիւնը աղնուականութեան մի դաս դարձնել և որը իւր այս ծգտման մէջ առնուազն ծիաւոր, ասպետական ռազմիկի իդէալը զարգացրեց։ Այս արդէն նախարարութիւններ առաջ գալու գեղեցիկ ժամանակն է. առաջին շտաուֆների ծաղկեալ ժամանակը, երբ Ֆրիդրիխ Ա-ն պետութեան ծառայողների օգնութեամբ վերին Իտալիան ֆինանսական տեսակէտից իրեն ենթարկեց. Հենրիկոս Դ-ը նոյն օգնութեամբ հարաւային Իտալիան և Սիցիլիան պիտի նուաճէր, երբ գերմանական քաղաքական պատմութեան վճռական րոպէին, երբ արևելք շարժուելու և միջերկրեայ կայսերութիւնը հիմնելու ան-

---

[1]) Լումայ 1910 № 1

յետածգելի ծրագիրները կային, վաղաժամ մահով մեռաւ. ազգն էլ դառնագին սգաց այդ մահը։

Ի հարկէ այս բոլոր դէպքերը ժողովրդի բոլոր շերտերին, ամենից առաջ իրանց նախարարութիւններին պէտք է հոգեպէս ցնցէին և վերակազմէին։ Էլ ինչն էր մնում անհասանելի, երբ պետութեան· ծառայողները, նրանց որդիները, դեռ պէտք է ամուսնութեան իրաւունքը կայսրից ստանային, որոնց կայսրը կարող էր մէկին նուիրել կամ մի ուրիշի հետ փոխանակել և կոմսեր, իշխաններ, հերցոգներ էին դարձել հրաշալի իտալական երկրում։ Թւում էր, որ կեանքը դարձել է մի թափառումն, մանաւանդ որ կալուածատիրական զարգացման ընթացքում նոյն իսկ ստորին գիւղացիական շրջանները իրենց դրութիւնը պահպանելու ընդունակ էին. հայրենի գիւղերից երկրագործների և լաւ մարդկանց հազարներ և տասնեակ հազարներ ուղարկում էին արևելք գաղութներ ձեռք ձգելու՝ Էլբայի և Դանուբի միջ կողմերը և դէպի ցած, որ հիմնեն այն նոր Գերմանիան, որը ներկայիս ազգային սեփականութեան երկու հինգերորդ մասն է կազմում։

Այս դէպքերը համարեա՛ իրենց յեղաշրջեցին. հոգային հիմքերից դուրս գալով նրանք միաժամանակ նախադրեալներ եղան մի վերջին զուտ հոգային հոգեկան կուլտուրայի՝ 12 և 13-րդ դարերի ասպետական կուլտուրայի։

Այս անցքերը ամբողջովին չեն գրաւում այդ ժամանակը։ Սրանց կողքին տեղի են ունենում ոչ պակաս կարևոր դէպքեր, որոնցից առաջ են գալի նախնական դրամատնտեսութիւնը, սկզբնական քաղաքացիութիւնը, ամենավաղ ժամանակի քաղաքային կուլտուրան։ Թէ ի՞նչ ձևով արդեօք զարգացման այս երկար շարքի մասերը առանձին առանձին առաջ են գնացել, այստեղ մանրամասն չի կարելի նկարագրել հէնց այն պատճառով, որ ծանօթ կամ գուշակելի դէպքերից ամեն մէկը, հետազօտութեան դէպքում տարբեր կնկարագրուի և կարժէքաւորուի։ Այս նկարագրութիւնների և վճիռների քննութեան մէջ մտնել այստեղ, նշանակում է այս դասախօսութիւնների ամբողջ արնտեսութիւնը խախտել, եթէ իմ տեղեկութիւնները նոյն իսկ

ընդհանուր բնոյթ ունենան։ Այս դէպքում պէտք կլինէր եղած տեսութիւնները մանրամասն համեմատական վճիռների միջոցով, ի նկատի ունենալով արևմտեան Եւրոպայից դուրս եղած պատմական զարգացման նման դէպքերը քննութեան ենթարկել, որոնցից այս խնդրին վերաբերող գերմանական հետազօտութիւնից, ցաւելով խուսափում եմ. սա ի վնաս մեր միտքանց հասկանալու է լինում ի հարկէ։ Այս կապակցութեամբ կբաւէ, եթէ ասենք, որ 12 և 13-րդ դարերը նկարագրուած կալուածատիրական փոփոխութիւնների հետ ներքին փոխազդեցութեամբ կապուած էին. երբ հնարաւոր էր աւելացուկներ արտադրել և այսպիսով մի սկզբնական դրամագլուխ կազմել։ Քաղաքները հանդէս են գալի իրենց նախնական պատրիկներով, վաճառականական գիլդիներով և արհեստակցական միութիւններով. այս բոլորը իբրև ազգային կեանքի աչքի ընկնող տարրեր երևան են գալի և որոնք 13 և 14-րդ դարերի ընթացքում առաջին անգամ մի իսկական քաղաքացիական կուլտուրա են առաջ բերում։

Եթէ այստեղ նոր ժամանակի տնտեսական և սոցիալական խոշոր անցքերի դումարը տալու լինենք, պէտք է երկու խօսքով արտայայտենք՝ ասպետութիւն և քաղաքացիութիւն։ Ով այս երկու խօսքերի հետ միաժամանակ չի յիշի հոգեկան այն մեծ արժէքները, որոնց հետ անմիջապէս նրանք կապուած են։ Այդ ժամանակ երևում են սիրոյ ծառայութիւնը և ծիաւորների զուարթ արկածները։ Այդ ժամանակ հնչում են Վալտեր-ֆոն-դեռ-ֆոգելվայդէի գերմանական եղանակով երգերը և կարիքի աշխարհի երգերը. լուում են Վոլֆրամ-ֆոն-էշենբախի լուրջ տողերը. Հարտման ֆոն—Աուէն պատմում է հանդարտ հոսանքով, զարմանալի թեթևութեամբ կազմուած յանգերով։ Այն ձևերը, որոնց մասին յիշում են քնարերգութիւնը և դիւցազներգութիւնը և որոնց մէջ կան հարուստ կրթական խրատներ, ձևակերպող արուեստները կեանքի են կանչում։ Այստեղ երևում են ասպետը և կինը մանրանկարի ձևով, սովորական կեցուածքով։ Գեղեցիկ ընկած ղգեստի նուրբ գծերի մէջ դումար շրջապատում են մարմինը, որը չնայելով իւր ոյժին, այնուամենայնիւ երևում է, որ ծնուած է հկուն լինելու համար։

Բարձր դարակներից ցած են նայում կոշտ կեանքի պատկեր արծանները, ինչպէս օրինակ Նաումբուրգեան մայր եկեղեցու արևմտեան խորանի ապաշխարողները, որ սիրոյ ժամանակի վերջին տարիների գործ է, որոնք ոչ թէ միայն սովորական ձևով ծիծաղկոտ են արտայայտուած, այլ իրենց վրայ ունին փորձուած պատկերի հեսքեր և հակումն կայ իրական արտայայտութիւն տալու նրան։ Այս ժամանակը մի շրջան է՝ սկզբում երկչոտ, յետագայում ամրակուռ վստահ միացած դրաւչութիւններին, երբ շինութիւնների արուեստի մէջ ծաղկում է ռոմանական անցողական շրջանը իւր հաղարաւոր զարդերի ձևերով և նրա հետ միասին մի զարդանկարչութիւն, որը իբրև այդպիսին արդէն նկատուում է, սա զինանշանների՝ առիւծի և ծաղկեթաղի զինանշաններն են։ Սրանից յետոյ սկսուում է երրորդը՝ գոթական ոճը, քնքոյշ յաւելումներով, զուտ բնական զարդանկարի փոքրիկ բուսական ձևերով զարդարուած։

Այս շրջանին հետևում է մի ուրիշը, ոչ պակաս մեծը՝ սկզբնական քաղաքացիականը։ Քաղաքների տոհմերը իրենց ազատում են ասպետական կուլտուրայից, որը նրանց էլ սկզբում իւր մէջ էր առել։ Այլևս մի շարազբուրգցի Գոտֆրիդ չի երգում սիրոյ դատարկ երգերի ձևով. աւելի բարձր է հնչում բարեպաշտ խորհրդաւորութեան բանաստեղծական պրոզան։ Արտաքին ճոնաւորութեան հին բարեպաշտութիւնը, 10 և 11-րդ դարերի կրօնական ժամանակի ձևերը, անյայտացել են։ Խորհրդածութեան և մարդկային ոյժերի հետ կապուած համարուող հրաշքների մէջ և 12 և 13-րդ դարերում սրան համապատասխան առաջ եկած հրաշքների հաւատի մէջ սիրոյ երգը կորել է։ Այժմ իշխում է բարձր, վերջին, ոչ ազատ ձևը։ Ինքնարտայայտութեան խելացնորման մէջ է փնտրում հոգին Աստուծոյ հետ միանալու ձևը։ Սրա հետ միասին գոյութիւն ունեն աշխարհիկ հոգսերը և յառաջադիմութիւնը։ Բանաստեղծութիւնը մօտենում է սկսնակ երգիծաբանութեան և բնութագրութեան կոպիտ ձևերի մեղմ երես ելնող ալիքներին, որքան իհարկէ ժողովրդական երգը նախաժամանակի հոգու հետ կապուած է։ Ձևակերպող արուեստը, շինութիւնների արուես-

տում նուիրուած է գոթական սկզբների արագ յառաջադիմող կազմակերպութեանը, սկսում է նաև պատկեր նկարելը և իւղաներկը երևոյթների աշխարհի մէջ լատակների արտայայտութիւնը, մինչև իսկ պարզ պատկեր էլ է նկարւում։ Ապա փորձ է անում աւելի բարձր աստիճանի անցնել, սկսում է երրորդ շրջանը. շօշափում է գծային հեռանկարը և տեղ է պատրաստում, սկսում է չընդհատուող ընդհանուր տեղական գծերը արտայայտել, գործածելով այս աւելի հանոյախօսական ձևով։

Մի նոր ժամանակ է, այո՛. հազարաւոր նշաններ ազդարարում են այս մասին։ Պարզ է. ասպետները, ինչպէս և քաղաքացիները հոգեպէս և ներքուստ ազատագրում են իրենց ճնշող ձևերից և այսպիսով ազատւում են միաժամանակ նաև հին տիպիկ ոգուց։ Բայց արդեօք աշխարհը նրանք 15 և 16-րդ դարերի վերածնութեան և վերանորոգութեան ժամանակի նման իրական և անհատական տեսակէտից են ըմբռնում. ի հարկէ ոչ. մի յառաջադէմ աշխարհ նրանց բաժանում է. ճիշտ է, մարդը այժմ այլ ևս տիպիկ չէ, բայց աւելի քիչ չափով անհատական է. դեռ սովորականի՝ միջին աստիճանի, միջև տատրաբերւում են։ Այս մասին վկայում են հասարակական-սոցիալական ձևերը։ 14 և մասամբ 15-րդ դարերի ասպետական և քաղաքացիական հասարակութիւնները ազատ չեն, այլ դեռ կէս ընկերական ձևերով են առաջ գնում, դեռ այդ ձևերը ընդհանուր տեղիներ են և այդ պատճառով, մանաւանդ ասպետական աշխարհը, դասաիարակչական արտաքին իդէալներին է յարած։ Ճիշտ է չափաւորութիւնը շեշտւում է. չափաւորութիւն համեմատութեամբ 10 և 11-րդ դարերի. սկզբնական կրքերի կոպիտ պոռթկումների, բայց այս չափաւորութիւնն էլ նախ արտաքին ձևական տեսակէտից է ըմբռնւում և քաղաքավարութեան օրէնքների շարքն է անցնում։ Այս ժամանակի քաղաքացիները աւելի ազատ են շարժւում, քան դիւղացիները, բայց նրանց փոքրիկ խմբիչքատներում ինչպէս պահելը դեռ. մի օրէնքի է ենթակայ, որի համեմատութեամբ ներկայ գերմանական ուսանողների խմելու հնաւանդ սովորութիւնները կարող են իբրև ազատ քմահաճոյքների օրինակ ծառայել։

Աւելի բնորոշ բան չկայ, քան այն, որ այժմ դեռ անհատական, կենդանի պատկեր չկայ· նոյնպէս գրական պատկերները՝ կենսագրութիւն և ինքնակենսագրութեան օրինակներ չկան։

Այս ժամանակի հոգեկան շարժումները աւելի և աւելի են առաջ մղւում դէպի աւելի մեծ ազատութիւն։ 15 րդ դարուց ուժգին հեղեղի պէս հոսում է, որը դեռ մի խորր և ընդարձակ հոսանքի հանի ջրվէժին չի հասել։ Հեղեղը անհանգիստ է, կազմւում են յորձանքներ, աւելի ու աւելի լսելի է լինում ջրվէժի շառաչիւնը, մինչև որ վերջապէս ուժգնօրէն վեր ցատկող ջրի կաթիլներից կազմուած ամպերը ջրի սարսափելի թափուելը քողարկում են և միաժամանակ յայտնում այդ մասին։

Յիրաւի 15-րդ դարու ընթացքում մօտենում ենք գերմանական ազգային զարգացման ուժեղ հարուածներից մէկին։ Սկսուած անհատականութեան ժամանակը, որ լրիւ իննը սեր.ունդ, մինչև 18 րդ դարու կէսը իշխէ· սրա հետ սկսում է նաև այն, ինչ որ սովորաբար այժմ նոր ժամանակ են ասում։

Այս ժամանակը կարելի է աւելի համառօտ նկարագրել, որովհետև սա ծանօթէ շատերին։ Առաջին շրջանում իսկական կեդրոնն է միջնադարեան եկեղեցական, առաքինութեան և նոյն իսկ հաւատոյ ձևերից ազատուելու դէպքը, իսկ երկրորդ շրջանում իշխողն է lumen naturale ի (բնական մարդու), բանականութեան յաղթանակը և բնազիտութեան առաջին մեծ յառաջադիմութիւնը։

Ո՞րն է այն բոպէն, որ զարգացման այս երկու շրջաններին իրար հետ ներքուստ կապում է։ Կարելի՞ է ասել, որ բանականութիւնը կատարելապէս ազատուել է և հասել իւր այժմեան ոյժի բարձրութեանը։ Արդեօք հին հաւատի ձևերից կատարեալ հրաժարման խնդի՞ր է այս։ Աշխարհը արդեօք առանց այլևայլութեան բանականութեա՞նն է ենթարկւում։

Ակներև է, որ այժմ մտածողութեան զարգացման մի նոր աստիճանի են հասնում· նմանութիւնից, երկու իրերի համեմատութիւնից ստացած եզրակացութիւնը, դեռ նոյնիսկ միջնադարի վերջում գործածուող դիտական մտածողութիւնից ստացած եզրակացութիւնը այլևս անբաւարար են նկատւում։

Անող փորձառութիւնը պահանջում է այնպիսի համեմատութիւն, որը իրերի մեծ գումար ունի իւր առաջ, նմանութիւնից ծագում է ներաժական եզրակացութեան եղանակը, պատճառականութիւնը վանում է հրաշքին։ Այս յեղաշրջումը ամբողջ ժամանակաշրջանում չի աւարտւում։ Այս դարերը, իբր անցողական երևոյթ դէպի մի աւելի բարձր, պատճառական մտածողութեան ձև, ունենում են քստմնելի, յետադարձ շարժման՝ կախարդներին հալածելու երևոյթը ևս։ Նոր սկսուող մեքենայական բնագիտութիւնը կրկին ու կրկին ստիպուած է հրաշքի գաղափարի դէմ պայքարել, դեռ 18-րդ դարում լուսաւորեալ մարդիկ հաւատում էին ուրուականների սարսափելի ոյժին։ Ուրեմն տեղի ունեցաւ միայն մի յառաջադիմութիւն դէպի բարձր պատճառական դիտակցութիւնը, բայց ոչ ազատութիւն։ Այդ պատճառով նոր եկեղեցիներից և դաւանանքներից ամենից յետադէմը՝ լիւտերական եկեղեցին, կարող էր հաղորդութեան գաղափարը, իբրև քրիստոնէի ազատութեան համար անհրաժեշտ գաղափար պահել։ Այս պատճառով բարեփոխուած եկեղեցու յառաջադէմ զարգացումը այս գաղափարը, իբրև սկզբունքային խնդիր երկու եկեղեցիների կատարեալ բաժանման համար, չնկատեց։ Նոյնիսկ բնագիտութիւնը դործ էր դնում քրիստոնէական յայտնութեան բարձր գաղափարները, մանաւանդ Աստուծոյ գաղափարը, իբրև մտածողութեան սահման, թէև այս սահմանը ամենավերջինն էր։

Մի կողմից երևում է, որ այս ժամանակը իւր բոլոր նորութիւններով խիստ զանազանւում է 1750 թ.-ից յետոյ եկող ժամանակից։ Միւս կողմից պարզ է, թէ այդ ժամանակի նորութիւնները ինչ նշանակութիւն ունեն նախկին դրութիւնների համեմատութեամբ։ Նախ՝ անհատը, քրիստոնէական Աստուծոյ որդին, ազատ շրջում է, ամենաշատը նա Քրիստոսի, իւր երկնային Հօր հետ ունեցած միջնորդութեամբ է սահմանափակուած. այլ ևս չկայ կղերի միջնորդութեամբ փրկութիւն և ոչ էլ միջնադարեան սրբերի, խոստովանողների և ապաշխարողների խումբը։ Անհատը ինքն իւր կամքին թողած առաջին անդամ ազատ աչքով նայեց հարուստ ու մեծ աշխարհին. իւր

բանականութեան բնական յոյսով աշխատեց այդ աշխարհը լուսաւորել, առաջ եկան՝ բնական օրէնքը, բնական կրօնը և բնական կրթութեան ուսմունքը։ Պարզ է որ միաժամանակ արագ յառաջադիմող բանականութեան գործօնների միակողմանի զարգացման դէպքում հոգու զգացմունքի և երևակայութեան ստեղծագործող գործունէութիւնը անուշադրութեան մատնուեց. նոյնիսկ կամքի զարգացումը յետ մնաց. անհատը երևում է իւր համար միայն, անջատուած է իրրև մէկը միւս մէկրօկսմօանէրից։ Մի՞թէ արդիւնքները նոյնչափ ուժեղ չէին։ Չի կարելի ժխտել, որ 18-րդ դարու լուսաւորութիւնը մի ուժեղ հաւասարացում, մի բնորոշ առանձնայատկութիւն տուեց, որը այս դար-աշրջանի իսկական եզրակացութեան արդիւնք է, և դեռ այսօր էլ մեր հոգում շատ աւելի, քան շատերը ենթադրում են, լի անընդհատ ոյժով, իրրև նոյնածին ոյժեր, ներգործում են։

Առնուազն սկզբում այս նոր, յետագայում զուտ բանական հոգեկան կեանքը նաև այլ ուղղութիւններով ուժեղ յառաջադիմութիւն է ունենում։ 16-րդ դարու քաղաքական կեանքը ցոյց է տալի կրօնական պատճառներից առաջ գալու ուրոյնութեամբ հանդերձ կամքի ազատութեան պարզութիւն, որ հետզհետէ փոխարինւում է աւելի ու աւելի բանական դիւանագիտութեամբ խճողուած խորամանկութիւններով։ Բանաստեղծութեան մէջ վերարտադրւում հոգեկան կեանքը. հասարակական հոգեկան կեանքը արտայայտւում է իրական երգիծաբանութեամբ. անհատականը սկզբներում հոգեկան դրամայով է բացատրւում։ Զևակերպող արուեստի մէջ, յատկապէս նկարչական դիտողութեան մէջ աչքի է ընկնում յառաջադիմութիւն. գրծային հեռանկարը հասնում է ամեն տեսակ կրճատման կատարեալ յաղթանակին։ Լոյսը, որ սկզբում միայն ամբողջութեամբ էր նկատւում, Նիդերլանդական դպրոցը 17 րդ դարում առնուազն պարզ երևոյթներում արուեստօրէն գործադրում է և գոյների աշխարհը սրան համեմատ հանդէս է բերում առաջնեռում անծանօթ գեղատախտակների (Palette) հարստութիւն։

Եթէ հարցնելու լինենք այս երևոյթների ամենամերձաւոր մեծ պատճառների համախմբման մասին, որոնց մենք անհատա-

կան հոգեկան կեանք անուան տակ միաւորեցինք, կտեսնենք, որ պատասխանը հէնց իրենից է բղխում։ Նիւթական և սոցիալական կուլտուրայի ի՞նչպիսի, համարեա անհաւատալի, յեղաշրջումներ, բարոյական ու հոգեկան հորիզոնների ի՞նչպիսի ընդլայնումներ ասես, որ 15 և 16 դդ դարերը տեսած չլինեն։ 14-դդ դարուց սրդէն սկսած քաղաքներում ազգային աշխարհի մէջ վանառականական ուղիների հետ յարաբերութիւն սկսելը, ազդում է տնտեսական յառաջադիմութեանը, որը համեմատաբար 19 դդ դարից յետ չէ մնում, աւելի շատ այս տեսակէտով գերազանցում է։ Սրան համապատասխան առաջ են գալի հոգաբաւոր նոր, սոցիալական երևոյթներ. կազմակերպւում է վաղաժամ ձեռնարկողների մի դաս. համքարութիւնների սոցիալական բնոյթը կազմալուծւում է. հին պատրիկութիւնը և համքարութիւնը յետ է մղւում, աւելի իջնում է. զարգանում է ծառայական աշխատանքը. տնային բանուորի օրինակով, այլ և աշակերտի աշխատանքը կազմւում է պրոլէտարիատը. տեղի են ունենում կազմակերպչական փոփոխութիւններ. ծգտում են դասակարդերի հաւասարութիւն առաջ բերող բնաւորութիւն ունեցող նոր քաղաքագիտութիւն և կոպիտ կոմմունիզմ։ Դաշտավայրերում տերրիտորիալ պետութիւնները զարգանում են ու դառնում նախ նահապետական, ապա բնական բացարձակ պետութիւններ. ստորին դասակարդերում սկսւում է մի շարժում. սոցիալական յեղափոխութիւն է լինում առանց հեաևանքի. յետադարձ շարժումն դէպի համքարութիւնը որի տևականութիւնը երաշխաւորուած է բոպէական թուլութեամբ. սրանցից աւելի բարձր է աղնուականութիւնը, որը օտար հասարակական իդէալով homme du monde (աշխարհիկ մարդ) բռնուած լինելով իւր ողորմած իշխանի արքունիքն էր յաճախում, ժամանակաւորապէս հաւասար, առանց իւր կրծքում դասակարդային գիտակցութիւն ունենալու։ Բացի այս բոլորը ՞րպիսի տիեզերական դէպքեր. տեղեկութիւններ բերելու ճանապարհորդութիւններ դէպի Հնդկական ծովը, Ամերիկայի դեռը, Պերուի և Մեքսիկայի միջնադարեան տարօրինակ կուլտուրաների հետ ծանօթանալը, կոպերնիկեան տիեզերական համակարդութեան կաղ-

մակերպութիւնը, Գալիլէյի գիւտերը, Հէյդէնի հեռադիտութիւնները, Նիւտոնի բացատրութիւնը երկրագնդի շրջանի և վերջապէս որոշ մասով յիրաւի աւելի առաջ տանող Լայբնիցի սիեղերական գիտողութիւնը բնութեան և պետութեան վերաբերեալ։

Ցիրաւի սրանք մանաւանդ նոր ժամանակի սկզբնական տարիներում շարժումներ էին, որոնք ընդհանուր հոգեկան կեանքին նոր դրդիռների, հնարաւորութիւնների, կամքի ու զգացմունքի աշխարհների նոր գործադրութեան ու ելևակայութեան գործունէութեան անհատնելի մի դուռ բերին։ Հասկանալի է, թէ սրանք սկզբում ի նչպէս խառնիճաղանճ ևն ազդել։ Ոչ թէ մի նոր բացատրութիւն, այլ հոգեկան կեանքի կազմալուծումն է առաջին հետևանքը։ Հնի և նորի պայքարի քաոսում բանականութիւնները տարբերում էին, կրքերը տաքանում, խղճերը խանդարում, շատ ընդհարումներ առաջ եկան եղած և լինելիք իրաւունքի մէջ։ Այս բոլորի մէջ հին կուլտուրայի, որը ճեղքուել էր, ճեղքուածներից ու պատռուածքներից ներս մտաւ, սկզբում ծաղրի ու կատակի արժանացած, վշտացած ու սխալ հասկացուած, բայց վերջը յաղթական նորը, ծևակերպող ու արտայտող գեղարուեստների մէջ մի նոր բնականութիւն lumen naturale-ի նոր գիտութիւն Աստուծոյ որդի լինելու հաւատը որը վստահութեամբ դերզգայականին էր մօտեցնում։ Երբ այս նոր երևոյթները զարգացման դարձան ինարկէ հոգեկան նոր արժէքներ։ Ո՞վ չէր ուզում Աստուծոյ խօսքը Լիւտերի մտքով ու վարդապետութեամբ հասկանալ, ո՞վ չէր ուզում պետութեան ու բնութեան, մարդու և աշխարհի մասին նոր ծանօթութիւններ ունենալ։ Երբ նոր արժէքը գիտակցեցին, սկսեցին ներգաշնակ կուլտուրական կեանքի համար գործադրել, որը համեմատած նախկիններին հետ, աւելի բարձր էր երևում։ Մի նոր հոգեկան ներգաշնակութիւն յաղթականօրէն դերիշխող դարձաւ նախկին ժամանակի խառնիճաղանճ հոգեկան դէպքերի վերաբերմամբ. մի նոր գեղարուեստական իդէալիզմ բնական նուանումները սկսեց իւր մտքով գործադրել. նոր աշխարհայեցողութիւնը առաջ էր մղում գիտութեան ու գիւտերի միջոցով այս աշխարհի երևոյթների վերակազմուած ամ-

բողջութիւնը վարպետորէն շինելու համար. հին, այլ և նոր եկեղեցիներում նոր առաքինութեան ձևեր դուրս եկան։ Սա նախ հոգեկան յեղափոխութեան մի պատկեր է, որը մեր առաջ բարձրանում է, որը նոր նիւթական և սոցիալական կուլտուրայի և հոգեկան հորիզոնի խիստ ընդարձակման շնորհիւ հանդէս է գալիս. այլ ևս սա մի պատկեր է դրան հետևող, յատկապէս ամեն ինչ վարպետորէն շինող բանականութեան շնորհիւ առաջ եկած դոհ վիճակի։

Առաջին հայեացքից բոլորովին ուրիշ կերպ են երևում 18-րդ դարու կիսում անհատականութեան ժամանակից առաջ եկած դէպքերը, որոնք մի նոր ու աւելի ընդարձակ սոցիալ-հոգեկան շրջան առաջ բերին, որին կարող ենք անձնականութեան շրջան ասել։ Այս այն ժամանակն է, որի մէջ դեռ գործում ենք, որովհետև Հերդերի ու Գեոթէի, Շիլլերի ու Կանտի անձնաւորութիւնները ապրում են մեզ հետ և մեր մէջ։ Այս ժամանակի առաջին շրջանը այսպէս ասած զգայնութիւնն է. ապա յոյզերի ու տենչերի ժամանակի շնորհիւ, դասականութիւնը և ռոմանտիզմը, ռէալիզմը և իրենց նախորդների մաքերն ու զգայարանները քարոզողները մնացին մինչև 19 դդ դարու 70-ական թուականները. անձնականութեան երկրորդ շրջանից մեր անմիջական ներկայի հոգեկան երևոյթները առաջ եկան։

Այս նոր ժամանակին զուգընթաց չի եղել ոչ մի արտաքին յեղափոխութիւն։ Ամենաուշը 16 դդ դարու կիսից աշխարհի առևտրական մեծ ճանապարհները հեռանում են Գերմանիայից, միջին Եւրոպան տնտեսական տեսակէտից լեթարգիայի մէջ ընկաւ, մինչդեռ Եւրոպական ծովափնեայ պետութիւններն ու երկրները, դրանց մէջ գերմանական երկրից մինչև Նիդերլանդիան և անկասկած Համբուրգը, դառնալով դէպի մեծ ծովերը տրնտեսապէս սկսեցին բարձրանալ։ Գերմանական էութեան անհատականացումն է այս, յատկապէս գերմանական քաղաքակրթութեան, որը 30-ամեայ պատերազմների սարսափելի կորուստների շնորհիւ աւելի բարձրացաւ և որոշ մտքով սահմանափակուեց։ Ազգերի մեծ յոյզերի և տիեզերապետական գործերի ժամանակը անցել էր. ապրում էին իրենք իրենց մէջ սմփո-

փուած. սեփական կուլտուրայի աստիճանը ընկնում է շնորհիւ սերունդներ շարունակ օտար կուլտուրայի քայքայող տարրերի մուտքին։

Սակայն այս բոլոր հիմք կազմող երևոյթների մէջ կազմուեց շուրջ 1650-թ-ի մի նոր կուլտուրա և մի ապագայ, բարձր հոգեկան գոյութիւն կրող շերտ։ Քաղաքացիութիւնը իւր տնտեսական կողմով դեռ չբաժանուած գործունէութիւնից հեռու էր. բայց դեռ չէր սնանկացել. մասամբ նախկին, 30 ամեայ պատերազմների շնորհիւ դեռ բոլորովին չքայքայուած դրամագլուխը վայելելով էր ապրում և բաւական ազատ ժամեր ունէր. որոնցից և օգտուում էր, ներքուստ, հոգեպէս բարձրանալու համար։ Այսպիսով առաջ եկաւ, այսպէս ասած, կրթուած հասարակութեան մեծ մասը, որը շուրջ 1700-ի գերմանական երկրում բաւական տարածուած էր, մանաւանդ որ բացի զուտ քաղաքացիական կոչումունեցողներից, պաշտօնով ու գիտութեան մէջ մասաւոր աշխատաւորների մեծ մասը և աղնուականութեան խոշոր բաժինը այս բանը առաջ գալուն նպաստում էին։ Այս ոչ զուտ սոցիալական, այլ աւելի շուտ բոլորովին ժամանակի հոգուն համապատասխան, շատ կողմերով աւելի շուտ բնական մի նոր հոգեկան կեանք ծնող միջավայր էր. որի վրայ աւելանում էին օրէ ցօր նոր գրգիռների մեծ զումարներ, յատկապէս ընթերցանութեան շնորհիւ։ Այսպէս էր նախ 1700 ից սկսած. 18 րդ դարու առաջին կիսում գերմանական երկրում դարուկէս կրթուած հասարակութեան համար լրագիրներ են առաջ գալիս։ Եւ ինչ ասես, որ այս լրագիրներում չէր շօշափուում. լուսաւորութեան հարցերի համար ընդարձակ տեղ, բացի այդ բանաստեղծութիւն և փիլիսոփայութիւն, մեծ մասամբ Լայբնիցի և նրա մտքերը ժողովրդականացնողների մտքով, այլ և գործնական ու քաղաքական խնդիրներ։ Միաժամանակ հաղարաւոր տեղեկութիւններ Եւրոպայի անցքերի ու դրութիւնների առաջ եղած վարագոյրը մի կողմը քաշեցին և հետզհետէ հայեացքները սովորեցին աւելի հեռուն դնալ, մինչև աշխարհիս ժողովրդների մասին տեղեկութիւնների վերջին հորիզոնը։

Այս շարժումներից հետզհետէ կազմուեց մի նոր հոգեկան

կառուցուածք, մանաւանդ որ նրանք ուժեղ յեռադիմական զգացումների հետ էին կապուած, ընդդէմ միանալ ժամանակի զուտ բանական վարդապետութեան։ Իհարկէ իւրաքանչիւր ելքին մօտեցող ժամանակ իւր կուլտուրայի նոր նուաճումները բանակով է դարձնում։ Այսպէս միջնադարի վերջում գոթական ոճը ֆլամբոյեան (հարտարապետական ոճի տեսակ) դարձաւ. երաժշտութիւնն էլ կօնտրապունկը թէմայական, սխոլաստիկան էլ չորացաւ։ Քանի որ առանձնացած անձնաւորութիւն միկրոկօզմի ժամանակը ըստ ինքեան դիտակցութեան առաջ բերած կուլտուրային էր հակուում, անհատականութեան ժամանակը ծառայում էր բանականացմանը, մանաւանդ որ հոգեկան կեանքի ամէն շրջան ներս էր խուժում։ Աւելի բնական ինչ կլինէր, բացի այն, որ շարժումը աւելի ևս սաստկանում է և ուղղակի առաջնորդում է դէպի նոր ժամանակը։ Այս կարգին պատկանող երևոյթներից մի քանիսներն են, բարեպաշտութիւնը, զգայնութիւնը, յոյզերը ու տենչերը. սոքա աղատում են հոգու կեանքի գործօն ոյժերին, որոնք կարիք էին զգում օտար հոգու մէջ արձագանգ գտնելու, աղատում են նաև զգացմունքին ու կամքին երկար սարկութիւնից. սրանք ոգևորուած առաջ եկան և շարունակեցին մինչև նոր ժամանակի անձնականութիւնը։ Հէնց այս հոգեկան գործօն ոյժերն են, որոնք այս ժամանակի անձնաւորութեանը բնութագրում են իբրև անհատ. սրա զգացմունքը գործում է սկսած նախկին ժամանակի ընկերութեան պաշտամունքից մինչև 19-րդ դարու ընդարձակ ազգային ոգևորութիւնը. կամքի պաշտամունքից առաջ է գալի սկզբում հանճարեղի իդէան, իսկ յետոյ Բիսմարկի ոյժի քաղաքականութիւնը։

Այս դէպքում յատկապէս տեսնում ենք մի ժամանակաշրջանից միւսին անցնելու գործողութիւնը, որովհետև անցեալից հարուստ աղբիւրներ կան. ծանօթանում ենք հոգեկան բաժան-բաժան դրութեան հետ, որոնցից միայն նոր ժամանակը ստանում է իւր լրիւ և բնորոշ իշխող ձայնը։ Կարող ենք տեսնել, ինչպէս եղակի անձնաւորութիւնները շարժման բուն հոսանքի մէջ կանգնած անթիւ նոր գրգիռներ ունենալով և սրանց համար

առանձնապէս օժտուած լինելով, այս աւելի քան ուժեղ հոսանքին չեն կարողանում տէր դառնալ։ Մենք այժմ տպրում ենք այն, թէ ինչպէս նրանք հոգեպէս փոխւում էին։ Այլևս իրենք իրենց չկարողանալով իշխել շատ շուտ տպաւորութիւնների ենթարկուեցին. լինի այս այն դէպքում, երբ շատ գգայնկոտ ստեղծագործող բնաւորութիւնը ինքնաներշնչման է ենթարկւում, ուստի և չափազանցացրած, մեծութեան հասցրած սեպհական կարողութիւններին, և ռոմանտիկ հեգնանքին, համաշխարհային թախծին և յոռետեսական հակումներին մօտ են զգում իրենց, կամ այն դէպքում, երբ ընդհանուրի զգայմունքին հակուելով, հոգեկան կեանքի նոր երևոյթների շնորհիւ այն աստիճան ներշնչւում են որ նրանց գաղտոզութիւնը հանճարի կուլտում այլասերւում է, նրանց կամքը դառնում է ինքնաշարժ ի վնաս անձնական, կամայական պատկերացումների, խակ որոշումներ են տալի այն բարոյական պարտականութիւններին, որոնք իւրաքանչիւր հոգեկան նոր կեանք հանդէս գալու դէպքում առանց բացառութեան մեծ քանակութեամբ երևում են։ Բայց ուր որ էլ նորի այս ուժեղ ու հիւանդագին ազդեցութիւնները երևում են, տեսնում ենք, որ անձնաւորութիւնները զգալիօրէն քնքշացել են, նորը հետազոտողի զոհաբերութեան հասած համարձակութեամբ նոր գրգիռներին անձնատուր են լինում, հասկանալու համար նրանց ի՞նչ լինելը։

Այս գրութիւնները յատկապէս ընութագրում են 1750—1780 թուականները և կրկին 1800—1810-ը և աւելի. այստեղ շնորհիւ այս անձնատուր լինելուն ու ներշնչմանը, բնութեան ու հոգու աշխարհներում աւելի նոր, խորը հայեացքներ են ծեռք բերում, քան առաջներում։ Նկարչութեան մէջ երևում են առաջին անգամները դէպի լոյսի իրական գործադրութիւնը· բանաստեղծութեան մէջ ալտրուիստական, խիստ զգայմունքի ու կամքի գործօնները մասերի են բաժանւում, ուստի իբրև նոր երևում է մեծ մասամբ հոգեբանական դրաման. հոգեկան գիտութիւններում երևան է բերում ժողովրդի հոգին, որ նշանակում է սոցիալ-հոգեբանութեան հետազօտութեան

շրջանում առաջին փորձն անել։ Այս գիտի հետ զուգընթաց գնում է մի ծգտումն՝ հոգեբանութիւնը իբրև մաքուր գիտութիւն բնազանցութեան ազդեցութեան սահմանից դուրս հանել։ Միաժամանակ իրական կեանքում ու քաղաքագիտութեան մէջ երևում են ուժեղ նորութիւնների սկզբնաւորութիւնները. անձնաւորութեան իբրև սոցիալ հոգեբանութեան զոյութեան մի մասնիկի հասկացողութիւնը առաջնորդում է դէպի հասարակական կեանքի նոր ըմբռնումը, որը միջին աստիճանը կազմող ինքնավարութեան վրայ կառուցանելու է բոլորի օժանդակութեամբ առաջ բերուած պետական կազմի ձևերը. իրական կեանքը չի երևում այլ ևս իբրև վերից եկած օրէնսդրութեան արդիւնք, այլ իբրև ժողովրդի հոգու կարգը որոշող ազդեցութիւնների հետևանք։

Հազարաւոր նոր կազմութիւններով արթնանում է նոր կեանքը. չի լինում ազգային զարգացման և ոչ մի կողմ, սկսած ամենահասարակից մինչև պատկառելին, որին պտղաւէտ կդարձներ նա։

Մօտենում են այն տարիները, երբ խառնիխուռն հասունացած սերմերից խուրծեր են կապում ազգային տիրապետութեան ամբարներում տեղաւորելու։ Տենչերի ու յոյզերի ժամանակին հետևում է Գէօթէի և Շիլլերի դասականութիւնը, Կանտի փիլիսոփայութիւնը և Պրուսիայի պետական կազմը 1806-թ-ի անկումից յետոյ նաև ռօմանտիզմը, որը յոյզերի ու տենչերի շարունակ հեղեղումներից ստիպուած, իբրև հակահեղեղ առաջ եկան 30-ական թուականների ռէալիզմը և ազգի քաղաքական միութիւնը 1848, 1866 և 1870 թուերին։ Մարդիկ իրենք իրենց գտան այս նոր ուժգին իրականութեան մէջ, երևացող անձնականութեան կեանքը սկսեց առաջ գնալ պատկառուած հոգեկան դրութիւններից դէպի ի մի ամփոփելու, դատելու ու եզրակացութիւն հանելու ժամանակը։ Սրա հետ միասին սկսւում են իդէալիստական շրջանի մեծ երևոյթները. Գէօթէի և Շիլլերի անմահ ստեղծագործութիւնները, իդէալիստական փիլիսոփայութիւնը, իրական բնագիտութիւնը, ազգի տնտեսա-

կան կեանքի չլսուած միութիւնը, պետութեան քաղաքական և պետական կազմի ստեղծումը։

Այսօրուայ համար մենք մեր նպատակին հասել ենք։ Իհարկէ անձնականութեան այս նոր նկարագրած առաջին շրջանին, սկսած 75 թուերից հետևում է մի նոր շրջան. այս մասին դեռ մանրամասն խօսք չի եղել։ Այս դասախօսութեան բովանդակութիւնը ոչ միայն բաւական է գերմանացիների, իբրև մի ազգի, ներքին զարգացման մասին մի հայեացք ունենալու համար, այլ և սրանով շօշափուել է մի հարց և այնքան աւելի ուժեղ է այդ հարցը, որքան նոր ժամանակին ենք մօտենում, որը հարուստ է ստացուածք՝ երով, որը մեր առաջիկայ դասախօսութեան զբաղման նիւթն է լինելու։ Երևում է, որ այս ամենը, ոչ միայն գերմանական պատմութեան սահմաններում ամենակարևոր հարցն է, թէ ինչպիսի հոգեկան ընթացքներով է կազմուում կուլտուրական ժամանակը, ինչպէս ցոյց տուինք՝ այլաբանական, տիպիկի, անհատականի և անձնականի՝ մերձակայ սոցիալ հոգեբանական ժամանակում տարրալուծում են, այլ և որ այստեղ շօշափուում է կուլտուրական ժամանակի հոգեկան մեխանիկայի հարցը։ Որ այդպիսի հարց կարելի է առաջարկել, անկասկած է, եթէ ի նկատի ունենանք մեր ձեռքի տակ եղած նիւթը։ Թէ ի՞նչպէս պէտք է առանձին առանձին պատասխանել և լուծել, պէտք է շնորհիւ մինչև այժմ յիշուած նիւթի և միաժամանակ նորագոյն սոցիալ հոգեբանական փոփոխութեան, որը յատկապէս քաջ ծանօթ է և մեզ համար հեշտ հասկանալի օրինակ, միւս դասախօսութեան մէջ պարզել։

Pessimist

(Կը շարունակուի)

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԿԻՐԱԿՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳԱՆՁԱԿԵՑՒՈՑ. ԹԻՖԼԻՍ 1909 Գ. 30 Կ.

Լոյս տեսաւ Կիրակոս Գանձակեցու պատմութիւնը հանգուցեալ Ա. Ղուկասեանի կտակած գումարի շնորհիւ։

Բայց ում համար։

Երեսուն տարուց աւելի հրատարակուող «Մշակ» թերթը և մեծ զոհողութիւններ ստացած «Հորիզոնը», որի նախորդները մեծ ջանքով հազիւ էին տարածւում, բաւական մեծ պարտք ունին։ Կարդացող չկայ։ Հայ ինտէլիգենցիան մայրենի լեզուով չի կարդում։ Կովկասում կայ առնուազն 3 – 5 հազար ինժեներ, բժիշկ, իրաւաբան, բանկիր և այլ բարձրագոյն կրթութիւն ստացած հայեր, որոնցից հինգ հարիւրը միայն հայերէն կարդալ և հասկանալ գիտեն։ Կարդալ և հասկանալու համար աշխատանք և գաղափարի սէր է հարկաւոր, իսկ հայ ժողովրդի ղեկավարները միշտ այս յատկութիւններից զուրկ են եկել։ Հայ մարդը երբոր մի փոքր ոյժ է սկսում զգալ՝ նա ամեն բան մոռանում է։ Այսպէս են եղել ոչ թէ վատ տարրերը, այլ և գաղափարական գործիչները, ոչ միայն երեկուայ չքաւոր միլիոնատէրերը, որոնք ամօթ են համարում իրենց որդիներին հայերէն սորվեցնելու, այլ և գաղափարի և իրր ազգասիրութեան համար գործողները։

Երբոր հայը ուժեղանում է, նա իրրև դարևոր ստրկութեան ընտելացած մարդ, ձգտում է ստրկացնել։ Այս պատճառով գաղափարի համար և ժողովրդի օգնութեամբ ստեղծուած կուսակցութիւնները շատ շուտ մոռացան իրենց գոյութեան պատճառը և նպատակը, երբոր ոյժ ստացան՝ նրանց մարդիկ սկսեցին աւելի վատթար բռնութիւններ կատարել, քան թէ այն բռնակալները, որոց դէմ նրանք կռուում էին։ Աւազակութիւն, անմեղ մարդիկների սպանութիւն. առևանգում և հազար տեսակ անիրաւութիւններ կատարուեցին։ Նոր կարդացինք «Մշակ»-ում Թաւրիզից մի հայ կնոջ սպանութեան մասին, որ կատարուել է կուսակցական տականքների ձեռքով կողոպուտի համար։ Բռնութիւնը

բնականաբար ստեղծում է վրիժառութեան ձգտում և այս պատճառով հայի անզուսպ եսամոլութիւնը միշտ ստեղծել է դաւաճանութիւն։ Այս երկու յատկութիւնները, ոյժ ունեցած ժամանակ անզուսպ և յանդուգն և վրէժխնդիր լինելու անյագ ծարաւ, վաղուց վկայում են բոլոր հայ պատմագիրները։ Կիրակոս Գանձակեցին Անի քաղաքի մի աւերումի մասին, որ կատարուեց թաթարների ձեռքով, գրում է, որ քաղաքը շատ հարստացել է և յանդգնացել, իսկ յանդգնութիւնը և ամբարտաւանութիւնը, ասում է հեղինակը, միշտ տանում է դէպի կորուստ «և յոյժ փարթամ էր քաղաքն ամենայն իրօք։ Վասն որոյ յաղթութիւն՝ յամբարտաւանութիւնած զնոսա, և յամբարտաւանութիւնն ի կորուստ, որպէս սովոր է առնել յիսկզբանց և այսր»։ Յ տոյ պատմագիրը պատմում է, որ Զարմաղանն, որ պաշարել էր քաղաքը դեսպան ուղարկեց և պահանջեց անձնատուր լինելու, իսկ ամբոխը սպանեցին դեսպաններին։ Այս պատճառով քաղաքը և պաշարուեց և սկսուեց մատնութիւնները (այժմս էլ երբ բանտարկութիւնները սկսուեց՝ մատնիչների թիւը անհամար է)։

«Այլ և ոմանք յիշխանաց քաղաքին ձեռնատու եղեն առ թշնամիսն, զապրուստ անձանց շահելով (այժմ էլ ռոճիկներ են ստանում, և նոցա կոչեալ արտաքս 'ի քաղաքէն բազմութիւն, խոստացան ոչինչ առնել նոցա չար. և նոցա կոչեալ արտաքս 'ի քաղաքէն բազմութիւն, բաժանեցին զնոսա յինքեան, և սուր իվերայ եդեալ կոտորեցին անհասարակ անողորմաբար, սակաւ կանայս և մանկունս թողեալ, և արս արուեստաւորս, զոր վարեցին 'ի գերութիւն. և ապա մտեալ 'ի քաղաքն, առին զինչն և զստացուածս նոցա, և կողոպտեցին զամենայն եկեղեցիս, և աւերեալ քանդեցին զամենայն քաղաքն, եղծին և ապականեցին զփառս վայելչութեան նորա (երես 245)։

Այսօր էլ մեզ հետ նոյնպէս են վարուում մեր պատմական յատկութիւնների պատճառով։ Թուրքիայի կոտորածները տեղի ունեցան 1895 թուին այն ժամանակուայ զեկավարների և գործիչների անմտութեան շնորհիւ, իսկ երբոր Օրմանեան սրբազանի պատրիարքութեան ժամանակ կոտորած չեղաւ՝ հայերը նրան տապալեցին։ Մամուլը արձանագրել է արդէն որ Ադանայի կոտորածների մէջ Մուշեղ եպիսկոպոսը ազգասիրաբար մեծապէս նըպաստել է այդ արհաւիրքի ծագման։

Հանդ. Գէորգ Կաթուղիկոսի ժամանակ Ս. Էջմիածինը սկսեց հրատարակել Էջմիածնի գրադարանում եղած հայ պատմագիրների երկերը, բայց ահագին քանակութեամբ այդ գրքերը կարծեմ մինչև այսօր էլ թափուած են այնտեղ, որովհետև կարդացող չ'կայ,

փող տուող չկայ գրքի և գրի համար, իսկ եթէ հայ հարուստի գլխին տուող լինի՝ նա տասը միլիոն կ'տայ ժողովուրդը կոտորել տալու համար և մարդիկ կ'գտնուին, որ այդ նպատակով փող կ'ժողովեն, իսկ գրքի, գրականութեան և հային յատուկ և նրա իսկական արժանիքը կազմող կուլտուրական գործերի համար շատ դժուարութեամբ կարելի է միջոցներ գտնել։

Մի յիսուն տարի Կովկասում հայը իրեն յատուկ խաղաղ կուլտուրական գործերով էր ապրում և նա փարթամացաւ, հայ ժողովուրդը բազմացաւ, ուստի և իբրև անհեռատես ժողովուրդ կամեցաւ Բերլինի 61 յօդուած ունենալ, որ այսօր չկայ և որի պատճառով կէս միլիոն ժողովուրդ կոտորուեց ու տարագրուեց, երկիրը դատարկուեց, հայթուրքական կոտորածներ առաջ եկաւ Կովկասում, Նախջևանի, Բաքուի, Գանձակի, Շուշուայ, Ղուբայի, Եւլախի և այլ տեղերի հայութիւնը տկարացաւ, առևտուրը և հողերը անցան ուրիշների ձեռք, ահագին բազմութիւն գաղթեց Կովկասից արտասահման և Ռուսաստան, ուր իհարկէ պիտի անհետանայ և կորչի, որպէս Լեհաստանի, Մոլդավիայի, Հնդկաստանի և այլ տեղերի գաղթականները կորան։

Եթէ մեր պատմագիրները կարդան հայ ժողովրդի անկոչ ղեկավարները՝ շատ բան կսովորեն անցեալից։

Գ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆ

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Գ. Կոստանեանց. Հառիճայի վանական ընկերութեան յիշատակարանն ու հաշիւը, պաշտօնական գրութիւններով և պատկերներով. Ալէքսանդրապոլ 1910.

Բենիկ սարդապետ. Երուանդ վարդ. տ. Մինասեան և Հայոց եկեղեցու վիրանորոգութեան խնդիրը Տիֆլիզ 1910.

Թատրոն և երաժշտութիւն Ա. Մայիլեանի. յաւելուած—դրամատիքական պօէզիա Վ. Տ.—Աբ.։ Բագու 1910։

ԱՄՍՈՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԽՈՇՈՐ ԹԻՒՐԻՄԱՑՈՒԹԻՒՆ

Ապշելով կարդացինք «Մշակ»-ի շաբաթ օրուայ համարում հետեւեալ լուրը, որ անշուշտ քաղուած է Կ. Պոլսի լրագիրներից.—

«Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին կից գործող խառն ժողովը փետրվ. 17-ի իր նիստում, ի միջի այլոց, նկատողութեան է առել Վեհ. Հայրապետի ուղարկած այն երկու կոնդակները, որոնցով յայտնվում է, թէ «Հովիւ» շաբաթաթերթը և «Լումայ» ամսագիրը մի շարք տեղեկութիւններ են հրատարակել, թէ իբր Վեհ. Հայրապետը և Կ. Պոլսի պատրիարք Դուրեան արքեպ. արգելք են եղել Օրմանեան սրբազանին քարոզչութեան պաշտօն տրվելուն։ Կոնդակների հետ միասին ուղարկված էին և յիշեալ թերթերից մէկ-մէկ օրինակ, ուր լոյս էր տեսել այդ լուրը։ Խառն ժողովը, քննելով այդ խնդիրը, ցաւ է յայտնել այդ տեսակ սխալ ու միտումաւոր հրատարակութեան համար և որոշել է հայրապետական կոնդակները հրատարակել տալ»։

Այս լուրից պէտք է եզրակացնել, որ 1. «Հովիւ» շաբաթաթերթի մէջ տպուած են եղել մի շարք տեղեկութիւններ, թէ իբր Վեհ. Հայրապետը և պատրիարք Դուրեանը արգելք են եղել Օրմանեան սրբազանին քարոզչութեան պաշտօն տրուելուն. 2. որ «Լումայ» ամսագրում տպուած են եղել մի շարք տեղեկութիւնները, թէ իբր Վեհ. Հայրապետը եւ պատրիարք Դուրեանը արգելք են եղել Օրմանեան սրբազանին քարոզչութեան պաշտօն տրուելուն, 3. որ Վեհ. Հայրապետը երկու կոնդակներով ուղարկել է Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին «Հովիւ»-ի և «Լումայ»-ի այդպիսի լուրեր պարունակող համարները՝ ի տնօրէնութիւն, 4. որ Պոլսի պատրիարքարանը այդ կոնդակներն ու թերթերի համարները յանձնել է պատրիարքարանին կից գործող խառն ժողովին՝ ի քննութիւն, 5. որ խառն ժողովը իւր փետրուարի 17-ի նիստում նկատողութեան առնելով յիշեալ կոնդակներն ու լրագիրների թուերը և քննելով այդ խնդիրը՝ գտել է որ այդ տպուած լուրերը «սխալ» ու «միտումաւոր» հրատարակութիւններ են եղել և վերջապէս իբրև այս ամենի հետեւանք՝ խառն ժողովը որոշել է հրատարակել տալ հայրապետական կոնդակները։

Ուրեմն Կ. Պոլսի արէօպագի խառն ժողովը միջնադարեան իսկվիզիցիայի է ենթարկել մեր թերթը. չգիտենք միայն շրջաբերական հանե՞լ է թէ ոչ, որ այսուհետև ոչ մի թերթ չյանդգնի իրանց դէմ բան գրել։

Մենք կխօսենք միայն մեր թերթի մասին, թողնելով «Հովին» իւր բաժին պատասխանը ինքը տալ։

Այս տեսակ մի պաշտօնական դատապարտութիւն տալու համար՝ մի ամսագիր անշուշտ աչքի ընկնող և խոշոր էլ յանցանք պիտի լինի գործած. Հայրապետ, Պատրիարքարան, ազգային ժողովի խառն ժողով—այս բոլորը՝ հայոց ազգի ամբողջ բարձրագոյն Ատեանը կոնդակներով, ժողովների որոշումներով և մամուլի միջոցով դատապարտում է «Լումայ» թերթը։

Բայց ինչի՞ համար է այս ամենը։

Եւ որովհետև մեզ համար էլ խիստ տարօրինակ էր այդ ամենը, ուստի և նախ և առաջ խմբագրութիւնս իւր բոլոր կազմով անմիջապէս մանրակրկիտ քննութեան ենթարկեց «Լումայ»-ի 1908 և 1909 թուերի բոլոր համարները, տեսնելու թէ արդեօք ինչ ենք տպել մենք այդ խնդրի մասին. քննութիւնը ցոյց տուեց, որ այդ ամբողջ ժամանակի ընթացքում խմբագրութիւնս բացարձակապէս ոչ մի լուր չի տպագրել Վեհի և Օրմանեան սրբազանի յարաբերութեանց մասին, բացի վեհափառի ճանապարհորդութեան նկարագրութեան մէջ երկու խօսքից, թէ ինչպէս նորահաստատ կաթողիկոսը հրաւիրում է իւր մօտ Օրմանեանին և սիրալիր ընդունելութիւն է ցոյց տալիս։ Մի անգամ միայն, այն է 1909 թուի նոյեմբեր ամսի հարցում տպել է Կ. Պոլսից խմբագրութեանս ստացած թղթակցութիւնից մի քաղուածք, ուր ասուած է.

Եր. 63. «Կ. Պոլսից մեզ գրում են. «Հոգեւոր իշխանութիւնս դեռ կշանայ ա՛ն. Օրմանեանը ակնկալիներէն հեռու պահել, որով Ն. սրբազնութիւնն էլ չկրցաւ նոյն իսկ Մկրտեանի յուղարկաւորութեան մասնակցիլ և դամբանականով մը՛ի վեր հանել Մկրտեանի բուն հոգին. ան»։

Այս է բոլորը, ինչ որ «Լուման» ասել է և այն լոկ միայն իր թղթակցի, որ, ՝ի դէպ ասենք, խիստ արժանահաւատ անձն է, բերանով։

Այդ լուրն էլ, սակայն, երբէք չէ վերաբերում Վեհ. Հայրապետին։ Անկասկած ամենքի համար պարզ է, որ այստեղ հոգեւոր իշխանութիւն ասելով՝ թղթակիցն աչքի

առաջ ունի ոչ երբէք Վեհ. Հայրապետին, այլ Կ. Պոլսի պատրիարքարանը։

Գուցէ շատերը մեզ նոյն իսկ դատապարտեն, բայց պէտք է խոստովանենք, որ մենք մեր թերթի մէջ խիստ մեծ վերապահութեամբ և վերապատուութեամբ ենք վերաբերուել առհասարակ դէպի Վեհ. Հայրապետը, գլխաւորապէս նրա համար, որովհետև նա Լուսաւորչի՝ Ազգից ընտրուած գահակալն է։ Այս մեր սկզբունքն է եղած։ Եւ առհասարակ Օրմանեան սրբազանի պաթուղիկոս չընտրուելուց յետոյ մենք խիստ մեծ զգուշութեամբ ենք տեղ տուել Վեհ. Հայրապետի, ս. Դուրեանի և ս. Օրմանեանի մասին խմբագրութեանս Կ. Պոլսից ստացուող լուրերին. եթէ այդպէս չլինէր, մենք իւր ժամանակին տպած կլինէինք Կ. Պոլսից մեր ստացած թղթակցութիւնները, ուր մանրամասն նկարագրուած էին, թէ ինչպէս Այա Ստեփանոյի հայ ժողովուրդը խնդրեց Կ. Պոլսի պատրիարքարանից. որ Օրմանեան սրբազանին նշանակէ իրա՛ց համար քարոզիչ, բայց պատրիարքարանը պատասխանել է նրանց, թէ Օրմանեանը կարող է եկեղեցի գնալ, բայց քարոզ չխօսել, Օրմանեանը լսելով այս՝ հրաժարուել է նոյն իսկ եկեղեցի գնալ, պատասխանելով թէ՝ եկեղեցի գնալ և քարոզ չխօսել չեմ կարող, փայտի պէս կանգնելու իրաւունք չունիմ. եթէ խօսել թոյլ չէ տրուում ինձ՝ ապա աւելորդ է նոյն իսկ եկեղեցի գնալս։

Այս և նման շատ բաներ գրել են մեզ, բայց չենք տպել. չենք տպել, որպէսզի ամենն բամբասանքից ազատ լինենք։

Բայց դարձեալ ազատ չմնացինք։

Արդ՝ քանի որ ճշմարտութիւն է, որ «Լուման» Վեհի կողմից Օրմանեանին արգելք դնելու մասին ոչինչ չէ ասել, ինչն է ուրեմն ստիպել Վեհ. Հայրապետի կոնդակը կսզմոդներին «Լուսայ»-ի անունը մտցնել տալ կոնդակների մէջ և «Լուման» դատապարտել տալ իբրև «սուտ» և «միտումաւոր» լուրեր հրատարակող. մինչդեռ կրկնում ենք, որ մենք այնպիսի ոչինչ չենք տպել մանաւանդ Վեհ. Հայրապետի վերաբերեալ, որ դատապարտելի լինէր խմբագրութեան համար. մի անմեղ լուր, որ բառասի ստացել ենք Պոլսից։

Այս ինչ պրովոկացիա է, որ նիւթուում է էջմիածնում մեր խմբագրութեան շուրջ։

Խմբագրութիւնս բողոքում է Կ. Պոլսի «Խառն ժո-

ղով» կոչուած մարմնի ապօրինի վարմունքի դէմ և գրանում է, որ խառն ժողովի՝ խմբագրութեան հասցէին «սուտ» և «միտումաւոր» խօսքերը նախապաշարուած հոգիների երկանց արգասիք են, որպիսիներ, գիտենք, բազմած են այդ խառն ժողովում։

Բողոքելով խառը ժողովի «միտումաւոր» վարմունքի դէմ՝ այժմ արդէն մենք ենք հրապարակաւ հարցնում նրանց. հապա ինչ է պատճառը, որ Օրմանեան սրբազանը, Կ. Պոլսի այդ անգիւտ քարոզիչը, մինչև այսօր դատապարտուած է տանը նստելու. խառը ժողովի պատասխանից յետոյ մենք այնուհետև կասենք մեր ասելիքը։

«ԼՈՒՄԱՅ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԼՈՒՐԵՐ

—Լրագիրները հաղորդում են, որ Կ. Պոլսի ազգային ժողովը յետ է հրաւիրել հրաժարուած պատրիարք Ս. Եղիշէ եպիս. Դուեանին և Ն. ս. վերատին մտել է իւր պաշտօնի մէջ։ Վեհ. Հայրապետը շնորհել է ս. պատրիարքին ա. քեպիսկոպոսութեան տիտղոս։

—Միջնորդութիւն է յարուցուած Շամախի քաղաքում թոյլատրել բանալ հայոց վիճակային սեմինարիա, այս պատճառով, «Բագու» լրագրի ասելով, Շամախու քաղաքային վարչութեան լիազօրները որոշել են այդ դպրանոցի շինութեան համար յատկացնել քաղաքային գետիններից 1 դեսեատին, 1,100 քառ. սաժէն տարածութեամբ ձրիաբար, այն պայմանով. որ եթէ չբացուի սեմինարիայի բացումը, գետինը յետ դարձնուի քաղաքին։

—Յայտնի բարեգործ հանգ. Ա. Ս. Անանեանի որդիք Մինրան և Արզար Անանեանները յայտնել են Զգրաշէնի ծխական Դպրոցի Հոգաբարձութեան, որ այս տարուանից իւրաքանչիւր տարի երեք հարիւր ռուբլի են նուիրում լիշեալ Դպրոցին։

—Այս օրերս ժողով է կայացել «Ազբիւր»-ի խմբագրատանը մեր վիպագիր պ. Շիրվանզադէի յօբելեանը տօնելու համար. բայց առայժմ առանց որևէ հետևանքի։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Մոսկուա. Մ. Շ.—սիրով կկատարենք Ձեր ցանկութիւնը։

Վաղարշապատ. Յ. Պ.—ստացանք և կտպենք հետևեալ համարում։

Բագու Արմ. Յակոբեան.—մինչև այժմ չստացանք Ձեզանից ցուցակը։

Մոսկուա Ա. Ս. Ձեր նամակը ստացանք, երբ յօդուածը տրպուած էր և շարուածքը ցրուած, ուստի և ներկայումս անհնար է արտատպել, մնում է մի ուրիշ յարմար առիթով նորից շարել և տպել։

Խմբագիր Հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ

Շարունակւում է 1910 թ. բաժանորդագրութիւն

ԳՐԱԿԱՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ „ԼՈՅՍ“ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

«ԼՈՅՍԻ» ՆՊԱՏԱԿՆ է՝ կապ հաստատել Նոր-Նախիջևանի, Հիւսիսային Կովկասի, Խրիմի և ընդհանրապէս Ռուսաստանում ցրուած հայ գաղութների միջև, մասնակից անելով նրանց ընդհանուր հայկական կեանքին։

«ԼՈՅՍԻ» ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ.—Ն. Նախիջևանի, Ռոստովի ու շրջակայ հայ գիւղերի համար տարեկան՝ 3 ր., կէս տարին՝ 2 ր., 3 ամիսը՝ 1 ր.։ Ռուսաստանի այլ տեղերի—տարեկան 4 ր., կէս տարին՝ 2 50 կ. և ամիսը 1 ր. 50 կոպ.։ Արտասահմանի համար—տարեկան՝ 6 ր. կէս տարին՝ 3 ր.։ Համարն ամեն տեղ արժէ 10 կոպ.։

Ընդունում են յայտարարութիւններ ձեռնտու պայմաններով բոլոր լեզուներով.—տողատեղին I երեսում՝ 20 կ., վերջին երեսներում՝ 10 կոպ.։

Հասցէն Нахичеванъ на Дону, редакція армянскаго журнала „ЛУЙСЪ“ Խմբագիր-հրատարակիչ՝ Բժ. ԳԷՈՐԳ ՌԷԻԶԵԱՆ.

Открыта подписка на 1910 годъ

на большую ежедневную, литературную, политическую и общ. газету

IX годъ изданія **БАКУ** IX годъ изданія

Газета выходитъ въ объемѣ и по программѣ большихъ столичныхъ газетъ, подъ общею редакціей **Х. А. Вермишева**, при ближайшемъ участіи **Минаса Берберьяна, Г. Е. Старцева, [Ант.] С. Айвазова, Б. Г. Перлина** и др. постоянныхъ сотрудниковъ редакціи.

Кромѣ того газетѣ «Баку» обѣщали свое сотрудничество: **Ю. А. Веселовскій, Дагестани, Магистрантъ, Я. А. Манандянъ, кн. Г. М. Тумановъ, В. Ѳ. Тотомянцъ и др.**

Подписная цѣна съ доставкой и пересылкой

	ГОДЪ	6 МѢС.	1 МѢС.
Для иногородн.	8 р. 50 к:	6 руб.	1 р. 50 к.
Для городскихъ	7—	4—	1—

Заграницу 15 руб. на годъ и 8 р. на полъ года.

Адресъ Баку, редакція газета «Баку»

15-Դ ՏԱՐԻ

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1910 ԹՈՒԻ

ԼՈՒՄԱՅ

ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ

1910 թուին Լուման լոյս կը տեսնի իւր այժմեան դիրքով, բաղկացած 64—80 երեսներից, մեր մշտական աշխատակիցների գործակցութեամբ։ Ինչպէս միշտ, հարկաւոր դէպքերում, կտրուեն պատկերներ հասարակական երևոյթների առթիւ։

1910 թուի «ԼՈՒՄԱՅ»ի ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՈՂ բաժանորդները կստանան իբրև ՊՐԷՄԻԱ

ԵՂԻՇԷԻ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

աշխարհաբար նոր թարգմանութիւնը։

ԲԱԺՆԷԳԻՆՆ Է տարեկան 6 ռ., կէս տ. 4ռ.
Արտասահման „ 8 „ „ 5„

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ, ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ, ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԵՒ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԼՈՒՄԱՅ»-Ի ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԷԳԻՆՆ Է 4 ՌՈՒԲԼԻ

ԱՊԱՌԻԿ ՈՉ ՈՔԻ ՉԻ ՈՒՂԱՐԿՈՒԻ

Հասցէն Թիֆլիս Պոլիցէյսկայա 7. Tiflis Polizeiskaja, 7.

ՏՊԻՈՒՄ Է

ԴԻՒԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԳԻՐՔ Թ.

Յովսէփ Արղուբեան